


1859

9(2)  
8-35







Printed in Turkey

ՎԵՐՉՈՒԹԻՒՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅ

9(2)  
S-35

Handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is faint and difficult to decipher, but appears to be organized into lines. There are several small purple ink marks scattered across the page, including a small mark in the lower-left quadrant and a cluster of marks near the center-right.

Printed in Turkey

20

9(2)

S-35

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Hy

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑ

134



Յ. Ս. ՏԻՎԻԹԱՆԸՆ



ՏԳԵԱԼ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՅԷՄԻՐԼԷՐ ԽԱՆՆ

— 1854 —

~~23152~~

944-222

35-222 1-23-222

~~7-222~~

222-222 222 222



978  
39

9

UK

2001



**Թ** Ե որ պատմութիւնը՝ մեզի  
 մինակ եղած դացած բաները սորվեցը-  
 ներ, և պատմած ժամանակի տերու-  
 թեան մեծութիւնը, կամ երևելի մար-  
 դոց վիճակը հասկըցընէր, ու ան մար-  
 դոց առաքինութեանը վրայ բան չխօ-  
 սեր նէ, պատմութիւն կարդալը անօ-  
 գուտ՝ և սիրտ նեղացընող բան մը  
 կ'ըլլար: Մեզի ինչ պէտք էր որ ազգ  
 մը ազգի մը վրայ յաղթութիւններ ը-  
 րեր է՝ չէ ըրեր գիտնանք. և շատ մը  
 անհաստատ մանր մունր բաներ միտ-  
 քերնիս պահենք, ու Փիւնիկեցիները  
 Եգիպտացիներէ յարգութիւն առեր  
 են չեն առեր հասկընանք. ասոնց ամե-  
 նը խորհրդածութիւն ընող և մտմը-  
 տացող մարդու մը անօգուտ բաներ  
 են: Խեղացի մարդ մը պատերազմներ,

յանցանքներ ու մեծ մեծ առաքինու-  
 թիւններ տեսնելու և անոնցմէ լուսա-  
 ւորութիւն առնելու ու անցած ժա-  
 մանակի խրատներէն ներկայ ժամա-  
 նակին գործածելու բաներ գտնալու  
 համար պատմութիւն կը կարգայ :  
 Պատմութեան նպատակը մարդու  
 խրատ տալ է : Բայց աս խրատները  
 յատուկ յատուկ գրուած չեն՝ հին  
 ժամանակի գնացքէն, և պէս պէս ազ-  
 դերու օրէնքներէն կ'ելլեն : Աս զուր-  
 ցածներէս կրնաք հասկընալ որ քիչ  
 պատմաբան կայ որ աս անունիս ար-  
 ժանի է, որովհետեւ շատըղած գացա-  
 ծը պատմեր անցեր են :

Պատմութիւն կարդալու ճանրան,  
 խելացի մարդոց բռնած ճանրան է : Խե-  
 լացի մարդիկ, կարդացած ատեննին  
 տէրութեանց մեծնալուն ու պղտիկնա-  
 լուն պատճառը կը փնտրեն . կը տես-  
 նեն որ, ամեն ատեն և ամեն ժամա-  
 նակ, և տմեն տեղ, մէկ պատճառ մը՝  
 աղէկ կամ գէշ ինչ բան առաջ բե-  
 րաւ նէ միշտ ան պատճառը այն բանը  
 առաջ կը բերէ . ազատութիւնն ու  
 բարբը տէրութեան աւժ կուտան, ծա-

ապուծիւնն ու անհոգութիւնը կը տկարացնեն: Պատմութեան ճանրան ասոր կը զուրցենք, և աս ճանրան խելքի լուսաւորութիւնով կը բռնըվի:

Երբոր պատմութիւնը այսպէս կարդացվի նէ մարդուս սրտին մէջ բարոյականն ու առաքինութիւնը կը տպաւորէ: Մարդոց բռնած ճանրան, միշտ մեր դատման արդարութեանը տակը ձգենք նէ՝ աղէկը գէշը կրնանք ճանչնալ: Մեր մասնաւոր օգուտին չը դպչելուն համար աղէկ կը դատենք, աղուօք բաները մեզի շատ կը դպչին, և կ'սկըսինք մենք մեզ դատել: Եւ անկէց ետև ինտո՞ր կրնանք համարձակիլ գործելու ան բաները որ մենք պատմութեան մէջ տեսնելով չը հաւնեցանք և նեղացանք: Ինչպէ՞ս չենք սուղեր ըլլալ անմարդոց պէս որ պատմութեան մէջ գործքերնին տեսնելով ըզմայլեցանք:

Պատմութիւն կարդալէն յառաջ պէտք է քիչ մը աշխարհագրութիւն գիտնալ: Որովհետև ծուռ տեղեկութիւն կ'ունենաս կարդացած ազդիդ վարուցը ու բարուցը վրայ. երբ որ

բնական տեղերնին ինչպէս ըլլալը չը գիտնաս, և չը հասկընաս: Ալիման ազգեցուծիւն ունի իր բնակիչներուն վերայ՝ օրէնսդիրը պարտաւորեցաւ դրած օրէնքը կլիմային յարմարել. բայց օրէնքները չը փոխեց, մինակ ձեւը դարձուց: Բարոյականը մէկ է՝ բայց մարդիկ կլիմայի ազգեցուծեան տակ ըլլալովնին, արեւելեան մարդոց բարքը ու գնացքը արեւմտեան մարդոց բարքին ու գնացքին չը նմանիր: Աշխարհագրութիւնը ասոնց վրայ շատ չը խօսիր. բայց պէտք եղածին չափ կը հասկըցվի:

Աերը ըսինք թէ մեր աչքին առջին եղած գացած բաները բան մը ըսել չեն, թէ որ անոնցմէ բարոյական չը հանենք նէ: Աստիճանաբարութիւնը, ժամանակագրութիւնը ու պատմութիւնը ճանբով սորվելէն մեզ չազատեր: Եղած գացած բաները ժամանակովը ու տեղն ՚ի տեղին դիտնալ պէտք է: Մարդուս խելքը չը կրնար բոլոր ժամանակի բաները մէկէն պարունակել, այնչափ տարածութիւն չունի: Մեր տկարութիւնը օգնութեան կարօտ է. և սս բանիս համար մինակ սճն ու

կարդը կրնայ օգնել: Ոճով և մեղո-  
 տոտով, մարդուս խելքին յառա-  
 ջադիմութիւնը կրնանք դիտնալ, ազ-  
 գի մը ինչպէս ըլլալը ինչ ճանբով սոր-  
 վինք նէ՝ ուրիշ ազգաց ինչպէս ըլլալը  
 այն ճանբով կը սորվինք. կը տեսնանք  
 որ ազգ մը իր օրէնքը հին ազգէ մը ա-  
 ռեր է, ան օրէնքէն ինչ բաներ առա-  
 ծը ու իրեն ինչ բան պէտք եղածը և  
 ինչ ձև տըվածը հասկընալ՝ մեզի ա-  
 խորժելի կուգայ: Ժամանակագրու-  
 թիւնը այս բաներուս համար շատ  
 պէտք է, և երբեմն մասնաւոր բանե-  
 րու համար կը դործածվի: Ժամանա-  
 կագրութիւնը ժամանակները ու դա-  
 րերը կը սահմանէ և պատմութեան  
 լոյս կուտայ: Շատ ազգեր երկրիս վը-  
 րայ ետեէ ետե եկեր դացեր են: Ամե-  
 նուն ալ բարբը, և օրէնքը, և կրօնքը  
 մէկզմէկէ տարբեր են: Ասոնք շատ ու-  
 րիչ ատէն կենալէն ետքը, իրենց՝ մե-  
 ծութենէն մէյմէկ պզտիկ նշան ձգեր  
 ու անյայտ եղեր են: Հիմակվան Յու-  
 նաստանը, հին Յունաստանի փառքը  
 չունի: Անուն մը ու մէկ քանի աւան-  
 դութիւն մը մնալով ան յառջի ազգը

չը կրնար ըլլալ : Որովհետեւ ոչ ան ժա-  
մանակի օրէնքը, ոչ կրօնքը, և ոչ ան  
մարդոց արիւնը մնացած է :

Աս մեկգմէկէ ետեւ եկող ազգերուն  
մէջէն մէկ քանին, իրենց ուժովը, ու  
մեծութիւնովը, ուրիշ ազգերուն վը-  
րայ իշխեր են, որ ասոնք պատմու-  
թեան շատ ուժ կուտան, և փիլիսո-  
փաները անոնց ըրածը զննելու կը պար-  
տաւորեն : Պատմութեան մէջ առաջ  
կը տեսնենք Տիւրացիք, Եգիպտացիք,  
և Ասորիք : Տիւրացիները վաճառական  
ըլլալով, հին ասունի մէջ ամեն ազգէն  
եվել ուրիշ ազգերու հետ տեսութիւն  
կ'ընէին, ասոնք վաճառականութեան  
հետ արհեստավորութիւն ունէին, ա-  
սոնց մեծ փառքը կարբեղոնացոց տէ-  
րութիւնը անոնցմէ յառաջ դալն էր,  
որ Հռոմայեցոց հետ շատ պատերազմ  
ըրին, և իրենց կարողութիւնը անոնց  
կարողութեանը հետ չափեցին :

Եգիպտացիք խելացի, և աղուօր  
օրէնքի ու արուեստի տէր ըլլալովնին  
շատ համբաւ ունեցան : Ասոնց խելա-  
ցութիւնը ուժ ու կարողութիւն, և  
երջանկութիւն տըվաւ իրենց, բայց

Սէսոստրի ժամանակը ըսկըսեցին յաղ-  
թութեան եռանդով բորբոքիլ . որ այն  
եռանդը վերջը իրենց տունը աւրեց :

Ասորիք Աղէքսանդրէ առաջ կայ-  
սերու-թիւն մը հաստատեցին : Ասոնց  
փառասիրու-թիւնը ու հարստու-թիւ-  
նը , իրենց կործանմանը պատճառ ե-  
ղաւ : Ետքը ասոնց կայսերու-թիւնը  
Մարաց և Պարսից տակ ինկաւ . բայց  
ասոնք ալ անոնց պէս փառասիրու-  
թեան իշնալով տակն ու վրայ եկան :  
Ասոնց ամենուն կործանման պատճառը  
մէկ էր :

Յոյնք մինչև այս ատենը բիչ  
ճանչցըվեր էին . Աիւրոսի երկրորդ յա-  
ջորդի ժամանակը Սէսոստրի եղբայրը  
Դիոնիսոսը ասոնց Եգիպտացոց օրէնք-  
ները բերելով մեծցուց . Յունաստանի  
բանաստեղծները ու խելացիները Ե-  
գիպտոս կ'երթային Եգիպտացոց օ-  
րէնքը ու գիտու-թիւնները կը սորվէին  
և իրենց հայրենիքը կը բերէին : Երբե-  
մըն անոնց չաստուածներէն կ'առնէին :  
Յունաստան ետքը Աղէքսանդրի ձեռք  
անցաւ . այս շատ զօրք չուներ , բայց ու-  
նեցածը պատերազմի դիմացող զօրք էր .

մինչև Ասիա՝ ու Հնդկաստան դնաց  
յաղթեց, և մեռնելէն ետքը տիրած  
տեղերը իր զօրապետներուն մէջը բաժ-  
նըվեցաւ. և շատ չանցաւ Հռոմմայե-  
ցոց տէրութեան դաւառ. եղաւ:

Ասկէց ետքի եղած աշխարհիս  
պատմութիւնը Հռոմմայեցոց պատմու-  
թիւնն ըսել է: Հռոմ՝ ուժով ազնուա-  
կանութենէ. և կարող հասարակու-  
թենէ՝ շատ հաստատութիւն դտեր  
էր. Հռոմմայեցիք, այն ատենները աշ-  
խարհիս ուր տեղվանքը կը ճանչնա-  
յին նէ. այն տեղվանքը յաղթութիւն-  
ներ ըրին: Մինակ Գերմանիացիները ի-  
րենց անտառին կրցան տէր կենալ, և  
Պոնդոմները որչափ դէմ կեցան նէ՝  
չը կրցին ծառայութենէ ազատիլ, մէկ  
քանի լեռանցի մը միայն իրենց ազա-  
տութիւնը պահեցին: Միհրդատի պէս  
մեծ մարդոց, ասոնց հետ պատերազ-  
միլը, ու արեւելքէն դէպ'ի արևմուտք  
դիմադրելը, և յաղթութեան փառքը  
ստանալու կերպը՝ ինքըզինքը շտկելով  
վաստըկիլը, ըրած յաղթութիւննե-  
րէն՝ օգուտ մը չը շահող Անիպաղի  
պէս մեծ անուն ստանալը. հետաքրք-



քիբ մարդուն աղուոր տեսարան մըն է :  
 Շատ շանցաւ հասարակապետութիւնը  
 արքայի մը հնազանդեցաւ : Բռնաւորները  
 յաջորդեցին : Ետքը քրիստոնէութիւնը  
 պատճառ ըլլալով, կոստանդիանոս տէրութիւնը բաժանեց,  
 ու նոր Մայրաքաղաք մը շինեց : Այս  
 ահագին Հռոմը ձախորդութենէ ձախորդութիւն  
 իյնալով, կործանեցաւ, և հիմա կաորվանքը  
 նոր տէրութիւններ եղան : Պատմութեան բովանդակութիւնը  
 այս է, մանրամասին չը սկըսած,  
 այս մեծ կարգը աղէկ դիտնալով  
 պատմութեան ձեւառած կ'ըլլանք :  
 Մնացորդը ներկի պէս բան մըն է՝ որ  
 շինած բանիդ վայելչութիւն կուտայ :

Շատ մը ազգ կան որ իրենց մասնաւոր  
 վիճակը զատ կարգի մը դրեր են : Ինչպէս  
 Հրէսքը, և Չինացիք որ Եգիպտացիներուն  
 հետ շատ նմանութիւն ունին, և մահմետականները  
 որ ասոնց տէրութիւնը Յունաց կործանումէն  
 ետքը ուժաւորելովը, Հռոմայեցոց  
 մնացորդը կրճանք սեպել : Շատ  
 մեծ բան մը շինել չուզելով, բռնած  
 ձանրանիս մեզ ըստիպեց որ վերջորդը-

եալ ազգաց մէջէն պատմութեան մեծ  
կարգը դրուածներուն ընդհանուր  
պատմութիւնը գրենք: Հիմակվան հըր-  
եաները անդին ասդին ցիր ու ցան ըլ-  
լալով ուր են նէ այն երկրին օրէնքին ու  
գնացքին կը յարմարին: Բայց հին  
ժամանակի Հրեաները առաջ ազնուա-  
պետութիւն մը ու ետքը միապետու-  
թիւն մը ունէին որ մեր պատմական  
խրատներուն տարածութիւնը քիչ ըլ-  
լալով, և այս կըսորըս ամենէն եվել  
հաւատոյ մասին վերաբերեալ բան մը  
սեպելով Սրբազան պատմութեան ճը-  
գեցինք: Չինացոց մենէ զատուած ու  
հեռու ըլլալովնին անոնց պատմութիւ-  
նը մեր հետաքրքրութիւնը շատ չի  
շարժեր. 'բայց Հռոմայեցոց տէրու-  
թեան կործանումը մահամետականնե-  
րուն պատմութեանը հետ կապուած  
ըլլալով, տեղին անոնց վրայ քիչ մը  
բան կը խօսինք:



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Փիւնիկեցիք , Ափիպոսացիք ,  
Ըսորիք և Պարսիկք :

Փիւնիկեցիները ամենէն զատ ըլ-  
լալովին , ու անոնցմէ քիչ տեղեկու-  
թիւն ունենալնուս համար , առաջ  
ասոնցմէ ըսկըտենք : Բայց ունեցած  
քիչ տեղեկութիւննիս անոնց նաւափա-  
րութենէն ու արուեստաւորութենէն  
մեզի մեծ գաղափար մը կրնայ տալ :

Վաճառականութիւննին այն ժա-  
մանակի ծանօթ երկրին վրայ կը աա-  
րածուէր : Չարմանալին սա է՝ որ  
փուսուլա չունենալով երկար ճանա-  
պարհորդութիւններ կ'ընէին որ հիմա  
փուսուլան նաւափարութեան առջին  
բացաւ , և վախը վերցուց : Ասիայի և  
Եւրոպայի ու մինչև Եւրոպայի Ով-  
կիանոսի մօտ եղած կողմերը , Փիւնի-

978  
39



կեցոց նաւաւարուծիւնը տարածելուն նշանները գտնելը են . մէկ քանի դէտուէն կ'ըսեն թէ այս ազգին լեզուն ու ուրիշ նշանները մինչև անգամ նոր գտնելած Մէքսիկ ու Փէրուվիէն ըսված տեղիւնքը կը տեսնուին : Բայց ինձ ներքէր նէ՝ Փիւնիկեցիներուն այսչափ վաճառականութեան ետեւէ իյնալը , միշտ խաղաղութեան մէջ ապրելէն առաջ եկած է կ'ըսեմ : Միայն իրենց արհեստին ետեւէն իյնալով կը կատարելագործէին ու ուրիշ երկիրներ աղուոր բաներ կը տանէին , և մէկ կողմէն խաղաղութիւնը կարողութիւնն ու ժողովուրդն են վեցընէլէն եւ չէր կենար : Շատ մը մարդիկ Սեսոսարի ու Ալուրոսի վախէն ասոնց երկիրը կը վախչէին : Այսպէս քիչուոր ազգ մը ամեն կողմ իր ազգէն մարդ խրկելը ու ամեն տեղ ժողովուրդ ունենալը շատ զարմանալի բան է :

Ասոնց յաղթութիւնները , յաղթեալները չէր վախցուներ , որովհետեւ իրենց արհեստը անոնց կը սորվեցընէին և պէտք եղածը մտածելով ան երկիրը կը հարստացընէին ու ապրե-

լու միջոցը կը դիւրացընէին : Փիւնիկեցիներուն վարքը Վաճառականութեան հետեւիլը կը պարտաւորէր , տեղերնին անպաղարէր ըլլալով՝ արհեստի հետեւիլ ու վաճառականութիւն ընելը սովորութիւն եղաւ :

Փիւնիկեցիներուն օրէնքներէն շատ բան չը դիտենք , բայց այսպէս վաճառականութեան իյնող ազգ մը ՚ի հարկ է շատ օրէնք հաստատած պիտի ըլլայ : Որովհետեւ խոհեմ կը կարծըվէին , ամեն կողմէն հանդարտ ապրելու համար ասոնց իշխանութեանը տակ ապրելու կուգային : Ասոնց կառավարութիւնը միապետութիւն էր , բայց՝ իրենց դրացիներուն պէս բռնաւոր չէր , որովհետեւ բռնաւոր իշխանութեան տակ վաճառական ազգ մը չապրիր : Պատերազմող ազգերուն վերայ բռնաւորութիւնը որչափ իշխեանէ՝ վաճառականներուն այնչափ չը կըրնար իշխել :

Եգիպտացոց պատմութեանը մէջ դատած խրատնիս ուրիշ ազգաց պատմութեանը մէջ չենք կրնար գտնալ : Եգիպտոս հռչակաւոր եղած ժամա-

նակը , ուրիշ ազգաց պէս , պատահմունքներ ու փորձութիւններ չը ցուցուներ : Օրէնսդիրը մինակ հաստատութիւնը թագաւորելու համար աշխատեր է : Այս օրվան օրս կը դարմանանք ինչպէս միապետութիւնը ու մոգերը մէկզմէկու հետ վարվեր են՝ որովհետև մոգերն ալ կառավարութեան կը խառնըվէին , և ասոնց երկուքն ալ ընկերութիւնը կարգադրելու կ'աշխատէին : Ի հարկ է այսպէս կառավարութիւն մը առաջ բերել շատ զարմանալի բան է : Ամեն մարդուն ինտոր ապրիլը , առաջվընէ կարգաւորեալ էր . օրէնքը մէկը ծնածին պէս ինչ սորվելիք ունէր նէ կը կարգադրէր՝ և եղած կառավարութեան յարգը կը ճանչցունէր :

Արօնքի առաջին պատուիրանքը ասոնք են : Աստուած պաշտել , ծընողքը պատուել , չըսպաննել , չը դողնալ , հաւատարիմ և ոխջախոհ ըլլալ , խարդախութիւն չընել :

Շատ զարմանալի է որ ազգ մը մինակ բնութեան լուսով լուսաւորեալ , գերբնական զօրութիւն մը չու-

նենալով այսպէս պատուերներ ունե-  
 նայ, որ քրիստոսնեական հաւատոյ հի-  
 մըն ալ ասոնք են : Մեռնելէն ետքը  
 դատաստան կայ ըսելնին և արքայու-  
 թիւն ու դժոխք ըլլալու՝ հաւատալ-  
 նին՝ վարբերնին կը վկայէ . որովհետև  
 Նդիպտացի ըլլողը՝ մինչև՝ անգամ թա-  
 դաւորները, մեռնելէն ետքը չը թաղած  
 կը դատելին . և այս դատաստանիս  
 մէջ թագաւորը ու պարզ ժողովուր-  
 դը տարբերութիւն չունեն . այսպէս  
 հաւատով ազգի մէջ ասանկ դատաս-  
 տան մը, հանդերձեալ աշխարհը ըլլա-  
 լուն ապացոյց էր և առարխնութեան  
 ուժ կուտար : Այս դատաստանը որ-  
 չափ որ կեանքերնուն մէջ գեշութեան  
 առաջը չը կրնայ առնել, ապադային  
 գրաւ մը եղած ըլլալով մեռնողին ըն-  
 տանիքը յանցանքը վրանին առած կը  
 սեպվելին, և հօրը գեշ ընթացքը զա-  
 կին աղէկութեանը գրգիռ մը կ'ըլլար .  
 այս օրէնքը բնական ըզգացումի վրայ  
 հիմնեալ ըլլալով ազգաց գերագոյն  
 խրատ մըն է, որովհետև յանցան-  
 քը պատժելու տեղ առաջը կ'առնէ  
 և առարխնութիւնը կը քաջալերէ : Ա-

ղէկ օրէնքի յասկուծիւնը պէտք է  
այսպէս ըլլայ : Աղէկ օրինակ մը ամեն  
տեղ մէկ կերպ ազդեցութիւն կ'ունե-  
նայ, որովհետեւ հասարակութենէ բա-  
րոյականութենէ և բնական ըզգացու-  
մէ կը ծագի :

Հիմա քաղաքացիի մը վրայ քաղա-  
քական և կրօնական օրէնքը թէ՛ աշ-  
խատութեան թէ՛ ըզբօսանքի մէջ վրա-  
կեցութիւն ընելը աղէկ բան է թէ  
դէշ՝ իրաւ քաղաք մը կարգադրեալ և  
հանդարտ կ'ըլլայ, բայց մարդ անանկ  
կարողութիւնով կը ծընի որ այն ըն-  
դարձակել և աճեցնելը իր պարտքն է :  
Եգիպտացի ըլլողը հօրը արհեստը դոր-  
ծելու պարտականութիւն ունենալով,  
թէ հայրենիքը և թէ ինք՝ չէր կրնար  
բնութեան տրված շնորհը վայելել, որ  
զայն բարձր աստիճանի կը դռչէր :  
Այս սովորութիւնը Եգիպտոս շատ  
մեծ մարդոցմէ զրկեց : Աղէկ բա՞ն էր  
մի : Եգիպտոսի օրինակը կը ցուցու-  
նէ : Գէ՞շ բան է արդեօք : Շատերը  
այսպէս կը մտածեն : Ամեն մէկը ու-  
նեցած կարողութեանը նախանձաւոր  
է, և իր փառքին արդելքը գողու-



Թիւն կը սեպէ : Յունաստան ազատ  
 ըլլալով արհեստից կատարելութիւնը  
 շատ առաջ գնաց . և շէնքերը որչափ  
 որ ըսքանչելի չէ այնչափ մաքուր է Ե-  
 գիպտոսի շէնքերէն : Այս խորհրդա-  
 ծութեան և հանճարի ազատութեան  
 պատուին է : Եգիպտոսի մէջ արհես-  
 տից յառաջագիմութեան նուազու-  
 Թիւնը պատճառ եղած արգելքներն  
 են : Քանառտեղծութիւնը և երաժշ-  
 տութիւնը ուրիշ տեղիւնք այնչափ  
 յարգ ունէին ըսոյց Եգիպտոսի մէջ կողմ-  
 նակից չը գտաւ : Հետաքրքրութիւնը  
 քաղաքական պայմանագրութիւն և  
 ծառի ու քարի վրայ գրուած գիրերէն  
 ուրիշ բան չը գտնէր : Հօրը արհեստը  
 սորվելու հարկադրեալ , և ազատու-  
 Թիւն չունեցող ազգի մէջէն ո՞վ բա-  
 նականութեան զարգացմանը համար  
 կեանքը կը զոհէ , որ երևակայութեա-  
 նը ընդարձակութիւն արվողը մինակ ա-  
 զատութիւնը կրնայ ըլլալ : Մարդոց  
 ամենահարկաւոր ըլլող արհեստները  
 շատ առաջ գացին , և որչափ որ շէն-  
 քերը աղուոր շէին այնչափ ըսքանչելի  
 էին , և ինչ միջոցով այնպիսի մեծամեծ

բաներ շինելնին մարդ կը զարմացընէ որ գարերը անգամ չեն կրցած աւրել : Աս կրնանք ըսել թէ Եզրիպտոս երեւելի մարդոցմէ զրկըվելով քաղաքական հանդարտութիւն ու փառք ըստացած է . և հանճարը խափանելով խռովայց կ'մարդիկ չէ ունեցած : Քայց Կաղանի ձայն մը ամեն մարդոց կը զըրուցէ թէ այն խաղաղութիւն չէ՝ դանդաղութիւն է : Եզրիպտոսի կառավարութեան համար հին երեւելի հեղինակի խօսքը ըսելու է ( խաղաղութիւն հաստատելը անապատ ընելով կ'ըլայ կը կարծէին ) :

Եզրիպտոսի օրէնքներուն շատերը քուրմերը շինած են : Ամեն տեղ զերազանց էին և օրինաց ու դիւանի աւանդապահը ասոնք էին : Քարքը՝ վարքը՝ սովորութիւնը ասոնց ձեռքովը կը կարգադրըվէր , և ննջեցեալի վրայ եղած դատաստանի մէջ վճիռ տալը իրենց իշխանութեանը կատարելութիւնն էր : Քուրմութեան իշխանութիւնը զաւկէ զաւակ կը յաջորդէր : Կառավարութեան օրտին համար շատ ժամանակ իրենց իշխանութիւնը բա-

նեցուցին . բայց երբոր ժամանակ անց-  
 նելով բարբը զեղծովել սկըսեց , և ի-  
 րենց զգուշութիւնը անօգուտ եղաւ , և  
 իրենց սընտիառութիւնը իշխել ուզեց  
 քան թէ կառավարել , երկար ատեն  
 տեւող սետութեան մը կործանման  
 պատճառը իրենք եղան :

Չանձրանալով իրենց պարզ ու  
 խիստ կեանքէն , կամ տեսնելով կրօն-  
 քի կապին թուինալը , ժողովրդին դիւ-  
 րահաւանութիւնը ստանալու համար  
 նախապաշարմունքը կը բազմապատկե-  
 ին և իր կերքերուն մօտ կողմերէն սանձ  
 անցընել կ'ուզէին : Քիչ ժամանակէն  
 քնութեան պարզ օրէնքը չը մնաց :  
 Իրենք այնչափ հռչակաւոր ընող խե-  
 լացութեան տեղը ազահութիւնը սը-  
 նտիառութիւնը բռնեց . և անանկ  
 հաստատ սահմանադրութեան փոխա-  
 րէն այլանդակ կռապաշտութիւնը տի-  
 րեց : Ժողովուրդը իրեն պէտք եղած  
 անասունները պահել սորված ըլլալով ,  
 կամաց կամաց պաշտել ըսկըսեց : Կամ  
 զեղծումը որ ժամանակը հետը քըշե-  
 լով հասարակութեան բարբը աւրեց :  
 Կամ աւելի լուսաւորութիւնը քիշե-

բուն մէջը մնալով և ժողովուրդը բռնորոյին զրկելէլով կռապաշտութիւնը ոտք երկնցուց, և իրենց օգտին նսյող մարդոց անտարբերութեամբը որ պարտական էին առաջքը առնել, հաստատվեցաւ :

Մինակ քահանաները չէին որ զաւկէ զաւակ յաջորդութեամբ կ'երթային, քաղաքական և զօրական կարգըն ալ ասանկ էր : Թագաւորութիւնըն ալ մէկ տան մը տրուած էր . կառավարութեան պահապանը զօրքն էր, բայց բոլոր իշխանութիւնը և ամեն կարգի կառավարութիւնը քուրմերուն ձեռքն էր : Չօրքը իր իշխանութեամբը կը պաշտպանէր և քուրմերը մէկ կողմէն իրենց արգելցութեամբը . մէկ կառավարութիւն մը որ երկու հաստատուն հիմի վրայ կանգնած որ է ուժ և կրօնք, պէտք էր երկար ժամանակ տեւել : Բայց կարելի է որ Եգիպտոս իր կործանմանը պատճառ իր երեւելի թագաւորներէն մէկը բռնած ըլլայ : Ազգի մը պատմութեան մէջ ամենէն երեւելի բան պատճառներուն մէկըմէկու հետ կապակցութեամբ նպաստելն է . առջի

բերանը աղէկ կ'երևայ, ետքը այս պատ-  
ճառները կործանման սերմը հետերնին  
կը քշեն կը բերեն : Սերմը կ'աճի կը  
մեծնայ, և գէշ հետեւութիւնները այն  
ժամանակը կը հասկըցվի որ ալ ճարը  
գտնելու ատենը անցած կ'ըլլայ : Ա-  
սոնք ներկային համար անօգուտ խը-  
րատ մըն է, մինակ ապագան կրնայ  
շահվիլ :

Առաջին պատճառ Սեսոստրիսի տե-  
ղակալութիւնն է . առած կրթութիւ-  
նը Եգիպտոսի սովորութեան արդէն  
զեղծումն էր . տեղակալ ըլլալու հա-  
մար կրթութեամբ հօրը ուզածէն շատ  
անդին անցաւ . ինը տարուան մէջ  
Հինա ու Ասիան իր իշխանութեան  
տակը մտաւ . բայց խռովութիւնը  
ներսէն տիրեց և եղբայրը ամոռը  
յափշտակեց, յաղթող ու տեղակալ  
արքան իշխանութիւնը նորէն ձեռք ձը-  
գելու համար իր հպատակներուն հետ  
կռուիլ ըսկրսեց : Եղբայրը արտօրելով  
Յունաստան քաշվեցաւ . և Յունաց  
պատմութեան մէջ, Դիոնիսոս անուն  
կրողը այս է : Տեղակալութեան փառ-  
քը, Եգիպտացոց բարբը փոխեց,

սահմանադրութիւնը քրչիք քրչիք սար-  
 սեցաւ, և շէնքը բոլորովին կործանե-  
 ցաւ : Բաժանեալ ինքնակալութիւնը  
 քիչ մը ատեն միացաւ, և ետքը Աիւ-  
 բոսի տղան Աամբիւսի ձեռքովը Պար-  
 սից տէրութեան տակը ինկաւ : Հին  
 սահմանադրական ուժը անանկ էր որ  
 կայսերութեան կործանումէն ետքն ալ  
 բարքը եղածին պէս մնաց, և երբոր  
 Յունաստանի հետ հաղորդակցութիւ-  
 նը հաստատուեցաւ, ան ատենը յայտ-  
 նապէս աւերվել ըսկըսեց :

Ասորոց և Մարաց վրայ չէինք  
 խօսեր թէ որ ասոնց կայսերութիւնը  
 ինչպէս Պարսից տէրութեան հետ  
 խառնըվելը ցուցունել չուզէինք : Ա-  
 սոնց պատմութիւնը աղէկ գիտցրված  
 չէ և հակասութեամբ լեցուն, և գիտ-  
 ցածնիս թագաւորներուն զեղխու-  
 թիւնը և անմտութիւնն է : Ասորոց  
 կայսերութեան կործանման մնացոր-  
 դէն, Բաբելոնի և Մարաց տէրու-  
 թիւնները կազմըվեցաւ : Բաբելոն հըռ-  
 շակաւոր եղաւ մինակ Հրէից գերու-  
 թիւնովը, և Մարաց պատմութիւնը  
 հետաքրքրութեան արժանի շատ բան

մը չունի : Ախրոս Մարաց և Ասորոց  
երկիրը իր կայսերութեանը տակ ա-  
ռաւ : Ասորոց բարբը և վարքը Պար-  
սից պատմութեան մէջ Ախրոսէն ետ-  
քը եղած բաները աղէկ աչքէ անցը-  
նելով կը հասկըցվի :

Մարդ Պարսից կայսերութեան  
անունը արքայից արքայ ըլլալը լսածին  
պէս՝ երեւակայութիւնը ըսկայածե կա-  
րողութեան մը կը բարձրանայ : Ախր-  
ոսէն առաջ Պարսկաստան խեղճ էր ,  
և բնակիչները , Ասիացոց զեղխու-  
թիւնը չը մտած , քաջ ու պատերազ-  
մասեր էին : Աս ինքնակալութիւնը  
մինչև Աղէքսանդրի տեղակալութեան  
ժամանակը տևեց :

Պարսից միապետութիւնը Եգիպ-  
տացոց պէս սրբազան կը սեպվէր , կամ  
Եգիպտացոցմէ օրինակ առնելով , և  
կամ միապետութիւնը միշտ տան կա-  
ռավարութենէ առնըված է հին ժա-  
մանակի նահապետական վարքին նմա-  
նել ուղեով այս օրէնքը մէջերնին  
հաստատուած էր : Տէրութեան յա-  
ջորդը աղէկ և լուսաւորեալ ըլլալու  
համար ինչ պէտք է , անոնց , ամենը

չորս կողմը առած էին : Չորս խելացի  
և բազմահմուտ մարդիկ թագաւորին  
տղին կրթութիւնը և սիրաւ ու խել-  
քը մշակելով բարոյական սերմը ցա-  
նելու յանձն առեր էին :

Արքայական խորհուրդը եօթը  
մարդոցմէ բաղկացեալ էր . և այս եօ-  
թը հոգին քովէն չէին զատվեր . դա-  
տաստանը անաչառ էր , և դատաւորը  
օրինազանցութիւն բներ նէ շատ գէշ  
կը պատժելէր : Ասանկ ընդարձակ  
տէրութիւն մը խիստ կառավարու-  
րութեան մը կարօտ էր : Օրինաց և  
թագաւորին խնամքովը ապահով ը-  
լող ժողովուրդ մը 'ի հարկ է տէրու-  
թեան հետ կապուած կ'ըլլայ : Ուր որ  
բարբի ու լեզուի տարբերութիւնը հայ-  
բենասիրութիւն չը կրնար բերել , այս  
ապացոյցը միշտ ընդարձակ տէրու-  
թեանց դէմը կրնանք դնել , որ իր  
ժողովուրդին շատութիւնը անգամ իր  
տկարութեան պատճառն է : Գուրսի  
իշխաններուն անօրէնութեանը առաջ-  
քը առնելու համար կամ թագաւորը  
այցելութիւն կ'ընէր ժողովուրդին , և  
կամ հաւատարիմ մարդիկ կը խրկէր :



Բայց այս միջոցը գեշութեան արաջ-  
քը չէր կրնար առնել, որովհետեւ ան-  
մատչելի թագաւոր մը որ պալատա-  
կանները չորս գին առած էր՝ դիւրին  
էր զանի աւրել և խարել և ճշմարտու-  
թիւնները քողարկել : Պարսից տէ-  
րութեան ընդարձակութիւնը իր կոր-  
ծանմանը պատճառ եղաւ . ինչ որ Ե-  
գիպտոսի պատմութեան մէջ տեսանք ,  
այս պատմութեան մէջ ալ նոյնը կը  
գտնենք : Բարքը ասոնց ուժ ու կարո-  
ղութիւն տրվաւ և մեծցուց մեծու-  
թիւնն ալ ուժաթափ ըրաւ . և ասոնց  
պտուղը իրենց կործանումը եղաւ :  
Տեղակալութիւնը աշխարհակալը կը  
պատժէ , թէ որ հռչակաւոր ըլլալու  
չափ իր հպատակներուն երջանկու-  
թեանը նախանձաւոր չըլլայ :

Այսչափ զեղխութեան լյնող մէկ  
ազգի մը մէջ երկրագործութիւնը  
յարգելի էր ինտոր որ պէտք է նէ ,  
բայց պատմաբանները միշտ երեւելի  
մարդիկը յառաջ կը բերեն որ մեծա-  
մեծներու շնորհովը հարստութեան  
մէջ կը գտնուվին . զօրքը ասանկ մեծ  
ազգի մը ծառայելէն հպարտացեալ ,

շատ մեծ շուքով ու ծախքով կը պահ-  
 վէր : Աղէկ ու վատ բաներուն մէկը-  
 մէկու հետ խառն ըլլալը , յայտնի  
 մէկ գէշուծիւն մը չէին բերեր , թէ  
 որ թշնամին դուրսէն ներս չը մաներ :  
 Աղէքսանդրը երբ իր քաղաքացիներ-  
 ուն երկաթներովը ոսկի բեռցող զօր-  
 քի մը գէմ ելաւ , դիմակալուծիւնը  
 ան աստիճան հասաւ որ ղիջանիլ հարկ  
 եղաւ , և Ադեսիղայոս նա փորձով  
 ցուցուց :

Կառավարուծիւնը շատ առաջ  
 դացեր էր Պարսկաստան , և ասոր թէ  
 սրբազան և թէ արտաքին պատմու-  
 թիւնը հաւանուծիւն կուտայ :

Երթուկուծիւնը դիւրին , և  
 թըղթակցուծիւնը ճանրովը ըլլալը  
 յառաջագէմ կրթուծեան ապացոյց  
 մըն է : Տուրքը կէսվակէս արծաթ և  
 բերք առնելը անուշ կառավարուծեան  
 բանն է , և աս միջոցը երկրագործը ա-  
 ւելի իր գործին հետ կը կապէ : Աը-  
 րօնքը իր ազդեցուծիւնը արքայական  
 կարողուծեան հետ միացնելով խե-  
 լացի կառավարուծիւն մը եղած էր :  
 Թէ որ Արարչի մը պարզ գաղափար

ունենալ պէտք ըլլայ անոնց , որոնք  
 յայտնութեան լուսովը լուսաւորեալ  
 չեն , գերադոյն էակին պարսից չափ  
 կը հասնելին , որովհետեւ միութիւնը  
 և բարութիւնը արեգակին ու կրակին  
 յատկութիւնն էր , որ ասոնք իրենց  
 շաստուածներն էին : Ջրադեշտ իրենց  
 օրէնսդիրը ըլլալով , արարողութեան  
 պաշտօնները կատարելու համար քա-  
 հանայութեան կարգ մը հաստատեց :  
 Աս կրօնքը Պարսկաստանի շատ կող-  
 մերը մինչև հիմա կայ , և այս կրօնքի  
 տէր ըլլողները շատ քաղցր և բարի  
 մարդիկ են : Ասանկ քաղցր կրօնք մը  
 որ անասունի արիւն թափելէն անգամ ,  
 կը վախնար որ մէկ կողմէն թուլու-  
 թիւն կը բերէր և միւս կողմէն հայրե-  
 նասիրութիւն չէր քարոզեր , զեղխու-  
 թեան չափ կործանման պատճառ մըն  
 ալ այս եղաւ : Ուժաւոր սովորու-  
 թիւնները մեծ ուժեղ կայսերութիւն-  
 ներ առաջ կը բերեն : Կամբիւս Ե-  
 գիպոսս յաղթելէն ետև Պարսից  
 Յունաց հետ եղած հաղորդակցու-  
 թիւնը շատցաւ և պատմութիւննին  
 մէկզմէկու խառնըվեցաւ :

## ԳԼՈՒԽ Բ .

### Յո՛ւնաստան :

Յո՛ւնաստանի առջի ժամանակի  
առասպելները խորհրդածութեան և  
պատմութեան կրթութեան համար  
պիտանի բաներ չեն : Մինակ բանաս-  
տեղծներու պէտք է, որ շատ գեղեցիկ  
բանաստեղծութիւններ գրվեցաւ ան-  
երկիրը աս նիւթերու վրայ : Մեր բը-  
նութեանը արժանի ըլլող բաները այս  
երկիրը վարող օրէնքները, և կարգադ-  
րութիւնները, և դուրսէն եղած պա-  
տերազմներուն ազդեցութիւնը որ իր  
մէջը բաժին բաժին եղած մէկ ազգը կը  
մէկտեղընէր, և Ամբիկտիոնք ըսված  
խորհուրդին ատեն մը հասարակապե-  
տութեան հնազանդութիւնը որ աս  
ընդհանուրին օգտին վրայ հիմնեալ  
ըլլալով մէջերնին գեղեցիկ միարանու-  
թիւն մը կը տիրէր, երկպառակութիւ-  
նը որ ետքէն հասաւ, և իշխանութիւ-

նը Մակեդոնացոց թագաւորներուն  
 ձեռքը անցաւ, և վերջապէս Աբա-  
 յեցոց Յունաստանի ազատութեան  
 համար պատրաստըվիլը, ու գէշ վի-  
 ճակի մէջ իյնալնին: Բոլոր Յունաս-  
 տանի հասարակապետութիւնները հա-  
 ւասարութիւն կը պահանջէին: Բայց  
 Աթէնայի վիճակը որ ծովէն ու ցամա-  
 քէն հաղորդակցութիւն ունէր, և  
 Սպարթա որ օրէնսդրութեան կողմէն  
 ուժով էր, այս երկու հասարակապե-  
 տութիւնները ուրիշներէն շատ գերա-  
 զանց էին:

Ռամկապետութիւնը որչափ դե-  
 շութիւններ առաջ կը բերէ. և անով  
 ինչ առաքինութիւններ կրնայ ծագել  
 ասոնց ամենը Աթէն իր մէջը ունե-  
 ցաւ. ժողովուրդը չորս աստիճան էր,  
 որ յետին աստիճանի մարդիկը աշխա-  
 տելով կրնային ապրել, և ասոնց մէ-  
 ջէն որչափ որ դատաւորութեան հա-  
 մար մարդ չէին ընտրեր նէ, ընտրու-  
 թեան գալուն պէս ամենն ալ կը խառ-  
 նըվէին: Մէկ քաղաքի մը մէջ դաշ-  
 նադրութիւնը խաղաղութիւնը և պա-  
 տերազմը, ընդհանուրին ժողովին վըճ-

առավել քլալը , հասարակութիւնը ի՞նչ  
կարողութեան տէր է եղեր կը հաս-  
կըցընէ : Բայց աս ճանքան մէկ հակա-  
կշռութիւն մ'ալ ունէր : Աթէնացի օ-  
րէնագիրը Սօղոն , նոր օրէնք հաստա-  
տելու զողոներուն չորս կողմը դժուա-  
րութիւններով առած էր , օրէնք առա-  
ջարկողը պէտք էր երկար ժամանակ մը  
այն օրէնքը հրատարակել , թէ որ առ-  
ջի բերանը ժողովքին ներկայացընէր նէ  
չէր ընդունուեր . ամեն քաղաքացի պէտք  
էր արհեստով մը իր ապրուստ ճարե-  
լը կառավարութեան հասկըցընել , աս  
օրէնքը երկու աղէկութիւն ունէր ,  
կառավարութեանը միանգամայն հա-  
րատութիւն և կարողութիւն կուտար :

Աս կարգադրութիւնը Աթէն իր  
հանդարտութեանը մէջ ապահով չը-  
րաւ , բայց ամեն կերպ խառնակու-  
թեամբ , և միշտ բռնաւորներու ձեռք  
խնալով , իր մեծամեծ մարդոցմէ զըր-  
կրվելով ալ , հարուստ և մեծ ու հըռ-  
չակաւոր եղաւ : Կործանման պատ-  
ճառներուն հետ ուժ մը և կարողու-  
թիւն մը կար որ միշտ կը պատերազ-  
մէր , այն ուժը հայրենասիրութիւն

ներ, և աս ալ օրինաց պտուղն էր :  
 Ո՞ր քաղաքացի ասանկ կարգի մը չը  
 կապվի որ ինք ան իշխանութեան մա-  
 սը սեպվելով, ընդհանուրին օգուտը  
 պաշտպանելը իր մասնաւոր օգուտը  
 պաշտպանել է : Աս անընդհատ զար-  
 նրվելը կիրքերը կ'արթընցընէր, և բը-  
 նաւորութեան գորութիւն կուտար,  
 անոր համար Աթէն միշտ զինքը փըր-  
 կողը իր մէջէն գտաւ, ամեն ցընցումը  
 մէյմէկ երեւելի մարդ բերաւ, որ բա-  
 ներուն ու գործերուն վախճանները  
 ուղղեցին : Ազատութիւնը՝ թիչ մը  
 թիչ ըլլացնէ այնչափ անիրաւութիւն-  
 ներ չը կրնար ըլլալ կը կարծըվի :  
 Բայց ասօրվան օրս տեսած ազգերնիս  
 ան ազգէն գաղափար մը չը կրնար  
 տալ : Ան մարդիկը սորվեր էին իրենց  
 իրաւունքը բանեցընել, և օրէնքներ  
 վճռել, որոնց աղէկն ու գէշը իրենց  
 ատենաբանները կը քննէին : Թատրո-  
 նական խաղերէ լուսաւորեալ ազգ  
 մըն էր որ բոլորը Թատրոյ կրնային  
 տեսնալ, և գատաքննութեան մէջ  
 միշտ իր վճիռը 'ի գործ կը դրվէր :  
 Անիսդիտէս, Միլտիատէս և Գէմիս-

դոկդէս , ապերախտութիւննին կը վը-  
կայեն , բայց իրենց տաճարները ար-  
հեստները և կարողութիւնը կը ցու-  
ցունէ 'որ ամեն 'բանի մէջ ապերախտ  
չէին . մինակ քաղաքական իրաւանց  
մէջ կասկածոտ էին : Որչափ որ ապե-  
րախտ էր նէ , իրենց հայրենիքը աս  
մեծամեծ անձինքը հայրենասէր էին :  
Ուժով բան մը կար որ պսչափ իրենք ,  
ղիրենք հայրենիքին կը կապէր : Աթէ-  
նայի ռամկապետութիւնը քաղաքական  
բաներու մէջ միշտ ախտաւոր չէր .  
բայց բարոյականութեան կողմէն՝ որ  
բարոյականը քաղաքականէն զատվելու  
չէ՛ պնդէս չէր . ապերախտութիւնը ,  
նախանձը , ռխակալութիւնը աս ազգը  
կ'աւրէր , և իր թեթեամտութիւնովը  
իր պակասութիւնները ան ստենը կը  
տեսներ որ ալ ճարը չը կրնայ գտնը-  
վիլ : Հասարակութեան աս ախտերն  
էր որ Բէրիկդէս ըստիպեց Պեղոսո-  
նեցոց հետ ծեծկըվիլ , ու հայրենիքը  
ծառայութեան մէջ ձգեց :

Պերճախօսութիւնը Աթենացոց  
փառք տըվաւ , և թշուառութեան  
պատճառն ալ այս եղաւ , ամեն ատե-



նաբան հաւատարիմ քաղաքացի չէր ,  
 և խարդախ խօսողները ազգը գէշ  
 ճանրու մէջ կը ձգէին : Աթենացոց  
 պատմութեանը անպատմութիւն բե-  
 րող գործքերուն պատճառ աս կերպ  
 մարդիկներ էին :

Արթուրեան կարողութիւնը հաս-  
 կըցընելու օրինակ մը պէտք ըլլայ նէ ,  
 Սպարթայի կառավարութիւնը կրնայ  
 ըլլալ : Հոն ընութեան սիրտ յօժա-  
 րութիւնը անգամ խափանեալ էր ,  
 ընտանեկան կապ չը կար , կարգը վիլը և  
 հայրական խնամքը քաղաքական միա-  
 բանութեամբ կ'ըլլար , հարազատ հայ-  
 րը հայրենիքն էր : Հողը հաւասար  
 բաժնը ված և կերակուրը ամենը մէկ  
 տեղ կ'ուտէին , թագաւորները ան-  
 դամ աս օրէնքին հնազանդ էին : Ան-  
 կարգութիւնը ու ընկերութեան ախ-  
 տերը աս ճանրով կը վերցըլին : Նա-  
 խանձութիւնը ու ցանկութիւնը ոչ  
 տեղ ունէր և ոչ միջոց : Թէպէտ ա-  
 սոնց նշոյլը կար , օտարներու վրայ կը  
 գործածէին և հայրենիքին օգտին հա-  
 մար կ'ըլլար : Ազատութիւնը հաստա-  
 տելու նպատակով Աիկուրգոս օրէնք

շինեց , և բարբի վրայ հիմնեց , այ-  
 լանդակ բան մը ըրաւ որ ամօթխա-  
 ծուծիւնը լուծանելով բարոյականին  
 ուժ տալ կ'ուզէր . նորահաս աղջիկ-  
 ները երիտասարդներու աչքի առջեւ  
 մերկ պատերազմելով երեւակայու-  
 թեան խթանը կը վերնար և կիրքերու  
 բռնութենէ ազատ կ'ըլլային , կարգը-  
 վէլը մինակ հայրենիքին պաշտպանող  
 տալու նպատակով էր . Սպարթայի  
 հասարակապետութիւնը , վանականաց  
 կարգին շատ կը նմանէր : Ամեն մարդ  
 ամենուն համար էր , մէկը իրեն հա-  
 մար չէր , ահա կառավարութեան  
 դադանիքը այս էր : Յառաջագիմու-  
 թիւնը օրէնսդիրին իր ազգը և իր շը-  
 նած օրէնքները ազէկ կըռելը կը ցու-  
 ցունէ , որ այս օրէնքները ինքըզինքը  
 մոռնալ , և իր անձը հայրենիքին  
 նուիրել սորվեցուցին , և սյսքան երե-  
 ւելի գործքերու , ու վսեմ զրուցվածք-  
 ներու մայր եղան : Աս կառավարու-  
 թեան մէջը ամեն բան մէկզմէկու կապ-  
 ված էր , իր ապահովութեան պայ-  
 մանը անշարժութիւնն էր , որովհե-  
 տև մէկ փոփոխութիւն մը միւս փո-

փոխութեան մ'ալ պատճառ ըլլալուն համար չէր, այլ անմիջապէս բոլոր կառավարութիւնը կը կործանէր. ասոր համար էր որ նախատես օրէնսդիրը իր քաղաքացիներուն բան մը չը փոխելու երդում տալ տրվաւ, և մէյմ'ալ ետ չը դառնալու ուխտով հայրենիքէն մեկնեցաւ: Արթուրութիւնը Սպարթացիները պատերազմասէր, և անվախ ըրաւ. Յունաստանէն բոլորովին զատուած էին, մէյմը որ իրենց սովորութիւնը ուրիշներուն նման չէր, մէյմ'ալ ուրիշ ազգերուն ախար չառնելու համար, որ իրենց մէջ անանկ բաներ գտնուած չէր:

Ետքը գէշութիւնները շատցաւ, և հաւասարութիւնը աւրեցաւ: Սովորութիւնները չաւրըվելէն շատ առաջ բարբը իշխանութիւնը կորմնցուց, և Սպարթացիները որչափ քաջ էին այնչափ գազանաբանոյ եղան: Խարդախութիւննին բոլոր Յունաստան հասկըցվեցաւ: Լակտերի ու Մատինէի պատերազմները ուժերնին ու կարողութիւններնին աակն ու վրայ չըներնէ, ասոնց յափշտակութեան առաջ-

քը չէր կրնար առնել : Յունաստանի ուրիշ կառավարութիւնները ընդհանուր գործքերու մէջ քիչ ազդեցութիւն ունէին , Մինակ թէփէ քաղաքը ատեն մը առաջին կարգը անցաւ Եպամոնոնտասի քաջութեամբ , և աս երևելի մարդուն մահը դարձեալ իր առջի խաւարումին մէջը ձգեց :

Յունաստանի պատերազմական փառքը , Պարսից թագաւորին զօրացը դէմ անյաղթելի կերպով մը դիմանալն էր : Արգադրութիւնը , քաջասրտութիւնը և ամենէն աւելի ազատականութեան սէրը ու հայրենասիրութիւնը , ինչ քաջութիւն կրնայ բերել հոս կը տեսնուի : Ան ատենը Սպարթա Ղիկուրգոսի սահմանադրութիւնովը կը վարուէր մինակ ինքըզինքը պաշտպանելու կրթութիւն էր :

Յունաստանի բարուց ապականութեան ատեն գիտես թէ բոլոր աշխարհ հնութեան և զեղծման ծանրութեան տակ կ'ընկճէր : Ամեն տեղ կառավարութեան տկարութիւն կը տեսնուի : Պարսկաստան Աիւրոսի իշխանութեան տակը ինչպէս էր նե՛

անանկ չը մնաց : Հռոմի իր յաղթու-  
թիւնները դրացիներէն անդին անցու-  
ցած չէր : Հասարակապետութեանց  
երկպառակութենէ նպաստ դռներով ,  
Փիլիպպոսի վարպետութեամբ բանե-  
ցուցած իշխանութեանը տակ , մինակ  
Մակեդոնիան Յունաստանի վրայ մեծ  
ազդեցութիւն մը ունեցաւ : Մէյմ'ալ  
եկաւ Աղէքսանդր , հօրը դիտաւորու-  
թիւններէն շահվեցաւ , աշխարհիս նոր  
դէմք մը տրվաւ :

Յունաց բաժանումը Փիլիպպոսին  
բանին աղէկ եկաւ , և անոնց ամենը  
իր իշխանութեան տակը առաւ : Պար-  
սից թագաւորէն ռխերնին առնելու  
համար պատրաստ ըլլող զօրքին իշխե-  
լու արժանաւորութիւնը միջոցով մը  
ձեռք ձգեց . բայց մահը չը թողուց  
որ իր կամքը 'ի գործ դնէ : Աղէք-  
սանդր աս միջոցներուն ամենն ալ գոր-  
ծածեց , և իր հանձարովը ևս առաւել  
բազմապատկեց , ու սքանչելի օրինակ  
մը եղաւ : Աս աշխարհակալին զնաւո-  
րութիւնն էր որ ան զարմանալի յե-  
ղափոխութիւնը ըրաւ որ Տիւրոսի ա-  
թուը կործանեց : Ճանապ կ'ելէ ա-

մեն ունեցածը զօրապետաց կը բաժնէ :  
 Իրեն համար մինակ յոյս մը կը պահէ :  
 Գլխաւորներուն հնազանդութենէ ան  
 ատենը ապահով կ'ըլլայ : Զօրքին  
 փորձառութեանը կ'ապաւինի իր քա-  
 ջաւերութիւնը անոնց կը հաղորդէ , և  
 իր օրինակովը ու առատաձեռնու-  
 թեամբը կրակ ու բոց կ'ընէ զանոնք :  
 Թէ որ մինակ աշխարհակալ ըլլար նէ՛  
 յաղթութիւնները կ'ազդեցընէին ու  
 զարմանք կուտային : Բայց Աղէք-  
 սանդրիան շնող մը , Տիւրոսի վեհան-  
 ձրն հիւր մը , Արիստոտէլի աշակերտ  
 մը , Հոմերոսի բանաստեղծութեան  
 փափաքով զարմացող մը , ասոնց ա-  
 մենը բաղդին տըվածէն աւելի բաներ են ,  
 և որչափ որ իր բաղդը զարմանալի էր ,  
 այնչափ ալ արժանիք ունէր : Աս քա-  
 ջը՝ որ բան մը ոչ երբէք դիմակալեց , ին-  
 քըզինքը չը կրցաւ յաղթել : Այնչափ  
 յաղթութիւններովը մարդկային բը-  
 նութենէ գերադոյն էակ մը կարծեց  
 զինքը , և Աստուծոյ տղան եմ ըսելու  
 սնափառութիւնը ունեցաւ : Յաղ-  
 թեալներուն ախտերը ասի աւրեցին ,  
 անհամար թշնամիները որ սոյս մարդի

չը կրցին կործանել , զեղխութեան  
չափազանցութիւնը եռեսուն երեք տա-  
րեկանը մէջ մեռցուց :

Աղէքսանդրի փառքին քիչ ցան-  
կացող կը դտնըվէր , թէ 'որ դժբաղ-  
դութիւնը անոր մեծութեանը՝ վրայ  
մատ երկնցընէր . բայց բաղդը ձանձ-  
րացընելու ժամանակ չունեցաւ ասոր  
թագաւորութիւնը կործանեցաւ : Իր  
մահէն ետեւ չէր կրնար մնալ . ժամա-  
նակ չունեցաւ ըրածները հաստատե-  
լու : Աղէքսանդրի յաջորդներուն ը-  
րած երկար պատերազմները , պատ-  
մութեան շատ արժանի չեն , յանցա-  
նաց ու ընտիր առաքինութեանց կա-  
պակցութենէ ուրիշ բան չենք տես-  
նալ , մինչև Հռովմայեցոց մեծնալու  
ժամանակը ուշադրութեան արժանի  
բան չը կայ : Մինակ Ադայեցոց միա-  
բանութիւնը կայ , որ առաջ Յունաս-  
տանի ազատութիւնը պաշտպանեց և  
ետըը Հռովմայեցոց հետ մէկ եղաւ որ  
բոլորովին հայրենիքը կործանէ :

Ադայէ աղքատ դաւառ մը , որ  
առաջները իր բարքին պարգութիւնո-  
վը ճանչըրված էր : Լոկարիայի պա-

տերազմէն ետև Ագայեցոց համբաւը  
 Լակոնացոց ու Գեպացոց միջնորդ ը-  
 րաւ զիրենք . ասկէց ըսկըսեց Ագայէ  
 բանի խառնըվիլ : Յունաստան կ'իմա-  
 նար որ մինակ միութեամբ կրնայ իր  
 ուժը ստանալ . շատ քաղաքներ միա-  
 բանութեան մէջ մտնալ չէին ուզեր .  
 գէնքով ըստիպելու կարօտ եղան :  
 Միաբանութիւնը տկար ըլլալով Լա-  
 կոնացոց թագաւորները օգնութեան  
 կանչեց , ուրիշ իշխանութիւն մը կը-  
 ախիւին մէջը մտաւ որ անկէց հեռու  
 փախչելու էր : Ետքը երկու հոգի Ա-  
 բատոս և Փիլոպէմէն աս միաբանու-  
 թիւնը վարելու փառքը ըստացան , և  
 առաջ տանելու խօսք տրվին . բայց  
 նոր դէպք մը պատրաստըվեցաւ որ չը  
 կրցին իրենք զիրենք պաշտպանել : Հը-  
 ոովմ Մակեդոնիա դարնել ուզեց . Ագա-  
 յեցոց միաբանութիւնը , Մակեդոնա-  
 ցոց երկպառակութեան հետ մէկ ըլլա-  
 լու՝ տեղը մէջ ինկաւ որ յայտնի թշնա-  
 մի մը երևիլը պէտք է անանկ բաները  
 խափանէ . և Հռովմայեցոց հետ մէկ-  
 տեղեցաւ :

Ան ատենէն պատահեցաւ ան



բանը որ առաջվընէ գուշակելը դժար  
չէր : Հռովմայեցիք Ագայեցոց ան ա-  
պերախտութիւնը ցուցուցին որ ա-  
սոնք Մակեդոնացոց ըրին . և Աո-  
րէնդի առնըվելը , իր շահը չը գիտցող  
միաբանութիւնը վերջացուց :

Ժառանակին կարգը նայելով Հը-  
ռովմայեցոց պատմութեանը զբաղելու  
ենք , բայց անոնց պատմութիւնը չը  
կտրելու համար առաջ կարգեդոնա-  
ցիք քննելու էինք որ ասոնց հռչակա-  
ւորութիւնը անոնց հետ կապուած է :  
Աս պատճառաւն էր որ Փիւնիկեցոց  
պատմութեանը մէջ կարգեդոնացոց  
համար բան չը խօսեցանք որ ասոնք ,  
անոնց գաղթական էին :

Մեր հայոց պատմութիւնը մէյմը  
աչքէ անցունելու համար , հիմա կար-  
գեդոնացիք և Հռովմայեցիք ետ ձգե-  
ցինք :

Հայոց ազգը հին է , նոր ազգաց  
հետ յարաբերութիւն չունի . բայց  
Հռովմայեցոց պատմութեան վերջը  
նոր ազգաց պատմութեանը կը հասնի ,  
անոր համար մեր ազգին պատմութիւնը  
հոս դնելու պարտաւորեցանք :

## ԳԼՈՒԽ Գ .

### Հայաստան :

Հին պատմաբանները սուտ ու փուճ առասպելներով պատմութիւնն ինն կը զարդարէին , որ ժողովրդեան հաճոյ ըլլայ , ուստի մէկ հին պատմութեան մէջ զարդարանք չը գտնուիր՝ յայտնի նշան է որ առասպել խառնուված չէ . միայն հարկաւոր բաները և եղած գացածը գրվեր է : Ինչպէս հայոց ազգին պատմութեան կերպը , և ինտոր շինուելը , ուրիշ ազգաց պատմութեանը պէս սուտով ու առասպելով լեցունք չըլլալը կը ցուցունէ : Աղարշակ թագաւորը ուղեց իմանալ թէ ինչ ազգ է հայոց ազգը . Մարիւաս անունով Ասորի մը խրկեց , որ երթայ Նինուէի մեծ գրքատան մէջ հայոց ազգի պատմութիւն փնտրուէ . գնաց գտաւ գիրք մը որուն մէջ մեծն Աղէբսանդր ամեն ազգաց պատմութիւնն ու

յիշատակարանը ժողովելու գրել արվե-  
 րէ : Ոչ Աղէքսանդրի հոգն էր որ հայե-  
 րը գովէ կամ վար զարնէ և ոչ Մա-  
 րիբաս պատճառ մը ունէր սուտ խառ-  
 նելու կամ գովելու, որովհետև Ասորի  
 էր : Թէ որ Վաղարշակ հայ ըլլար  
 կրնայինք ըսել թէ Վաղարշակին հա-  
 ճոյ երևելու համար պատմութեան մէջ  
 սուտ բաներ խառնէր է : Մանաւանդ  
 վախ ալ ունէր որ չըլլայ թէ սխալ բան  
 գրէ և գրածին սուտ ըլլալը ազգին մէջ  
 գանձված պատմութիւններէն հաս-  
 կըցիլ :

Մեր ազգին առջի նահապետին  
 անունը Հայկ էր անոր համար մեզի  
 Հայ ըսին : Ուրիշ ազգաց մեզի Էրմէնի  
 կամ Առմէնի ըսելնին մեր Արամ նահա-  
 պետին անունէն առած են, որ իր քաջու-  
 թիւններովը երևելի եղաւ ուրիշ ազ-  
 գաց մէջ : Անոր համար մեր երկիրը  
 որ մենք Հայաստան կ'ըսենք, ուրիշ  
 ազգաց մէջ Էրմէնիստան կամ Առմէնի  
 անուն ունի : Հայոց ազգը Ջրհեղեղը  
 դադրելէն ետև Նոյ նահապետէն ըս-  
 կըսեց, Հայաստանը Նոյ նահապետ  
 ծաղկեցուց : Բայց երբ Հայաստանի

միջ մարդիկ շատցան ու դէպ 'ի Բարե-  
 լոնի կողմը ըսկըսան ցրվել, Հայաս-  
 տանի բնակիչները իրենց երկիրը ծաղ-  
 կեցընելու ետեւէ ինկան: Հայ անունը  
 Հայկին Բարելոնէն դառնալ ու Հա-  
 յաստան իր ազգականներուն քովը դա-  
 լէն, ու հայոց վրայ իշխելէն ու անոնց  
 հոգ տանելէն, և երկիրը պաշտպանե-  
 լէն մնաց: Եւ հայերը Յարէթ ի որդւոց  
 մէկ մասը ըլլալով Յարէթեան ալ  
 կ'ըսվին:

Ասիայի հին ազգերուն նոր ըսկը-  
 սած դարը Հայկին տիրապետելու ժա-  
 մանակն է: Ուրիշ ազգերը իրենց ըս-  
 կիզքը հինցընելու համար առասպել-  
 ներու ժամանակ կը տանին մենք առանց  
 առասպել մը խառնելու՝ յայտնի կը  
 ցուցունենք մեր ազգը Նոյ նահապե-  
 տէն ըսկըսած, և ուրիշներուն ըսկըսե-  
 լու ատենը՝ մերը Հայկայ ձեռքովը նո-  
 րոգուած: Ասանկ ալ բարեկարգու-  
 թեան կողմանէ Ջրհեղեղէն ետեւ էն  
 առջինը կրնանք ըսել, ուրիշ ազգերը  
 դեռ ասդին անդին ցրված բնակելու  
 տեղ կը փնտրուէին, Հայաստանի բը-  
 նակիչները հանդիսա նստած իրենց

աշխարհն զարդարելու հետ էին :

Հայկէն մինչև Արայ և Կարդոս  
 ազգը անձնիշխան եղած ատենը աղէկ  
 ծաղկեալ էր . և Նահապետաց շատը ,  
 Հայաստան երևելի շինութիւններ ը-  
 րին : Արամ կրթութիւնը ինչով ըլ-  
 լալը հասկըցած էր . և Կեսարիոյ կող-  
 մէն Պայապիս Քաղեայ անուն բռնա-  
 ւորին հետ պատերազմելով , յաղթեց  
 և փախցուց իրեն մարդոցմէ Մշակ ա-  
 նուն մէկը հոն կուսակալ դրաւ , և  
 հրաման ըրաւ որ ան տեղի մարդիկը  
 հայերէն լեզուով խօսիլ սորվին . և  
 կրթութեան տակ խօթելը անկէց  
 յայտնի է որ՝ այն կողմէն ըսկըսելով  
 մէկդիէն Սերաստիոյ , և մէկդիէն Մա-  
 լաթիայի մինչև Իրզրում և Տիարպէ-  
 քիր և Աննայ կողմերը բնակիչներով  
 լեցուց . որ այն տեղերը ըսվեցան ա-  
 ռաջին Հայք , Կեսարիայու կողմերը երկ-  
 րորդ Հայք , Սիվազու կողմերը երրորդ  
 հայք Մալաթիայի Տիարպէքիրու արև-  
 մըտեան կողմը մինչև Եփրատ գետը  
 չորրորդ Հայք : Կարդոսէն ետքը մին-  
 չև Սկայորդի որ հառց առաջին թա-  
 դաւոր Պարոյրին հայրն է հազար տա-

րիի մօտ ժամանակ կ'անցնի, որամե-  
 լա արժանաւոր բան չը կայ: Ժամա-  
 նակի հեղինակներէն Հայ հեղինակ մը  
 առ խորհրդածութիւնը կ'ընէ. այսբան  
 ատենի մէջ եռեսուն երեք Նահապետ  
 նստած են յորդոց յորդի և իշխանա-  
 կան ցեղը փոխված ալ է նէ, խռովու-  
 թիւն մը ելած չէ. իրաւունք ունինք  
 ըսելու կ'ըսէ հեղինակը, որ իշխաննե-  
 րը ժառանգ չունենալովը, մօտ ցեղի  
 մը անցած է. և իրարու վրայ հաշ-  
 ուելով իշխանութիւննին եռեսունական  
 տարիէն եվել է, մինակ Ասորեստա-  
 նեայց թագաւորներունը ասոր կը մօ-  
 տենայ, ուրիշ տէրութեանց թագա-  
 ւորներուն իշխանութեան ժամանակ-  
 ները շատ քիչ է: Թագաւորաց երկար  
 ատեն իշխելը շատ անգամ խաղաղու-  
 թեան նշան է, և կրթութեանց օգ-  
 նութիւն ունի: Պարոյրէն ետքը մինչև  
 Ահէ թագաւորը՝ որ անխոհեմօւ-  
 թեամբ Աղէքսանդրի հետ պատերազ-  
 մելով յաղթըվեցաւ, և թագաւորու-  
 թիւնն ու կեանքը մէկէն կորսնցուց.  
 Հայաստան կրթեալ և լուսաւորեալ  
 էր:

Երևելի է Տիգրան Երուանդեան  
 Թագաւորին օրովը Հայոց մէջ եղած  
 կրթութիւնը, Արշակունի Թագաւո-  
 րաց առաջինը Վաղարշակ՝ Թագաւո-  
 րութեան բաները շատ գեղեցիկ կար-  
 դի դրաւ : Յաջորդը Արշակին Համար  
 « Բազում կարգս ուղղութեանց գործ-  
 եաց » կ'ըսէ Խորենացին : Անոր յա-  
 ջորդը Արտաշէս սե ծովէն մինչև ձեր-  
 մակ ծով տիրելէն ետքը Հռովմայեցոց  
 տէրութեան վրայ ալ աչք տընկելով,  
 ձերմակ ծովը պատերազմական նաւե-  
 րով լեցուց . ըսել է որ ասոր օրը նա-  
 ւարկութեան արուեստն ալ մտած էր  
 մեր մէջը . հիմա անանկ վերցըված է  
 որ առաջուց գանը վելուն զօրաւօր վկայ  
 չունենային նէ՛ չէինք հաւատալ : Աս  
 Թագաւորաց կարգովը իջեր մինչև Ար-  
 շակունեաց վերնալը , և ետքը ինչ եզաւ-  
 երանելի Խորենացիին հարցուր կ'ըսէ  
 հեղինակը « վրդովեցաւ խաղաղութիւն .  
 արմատացաւ անկարգութիւն » : Հայ-  
 կէն մինչև Խոսրովի ատեն մեր Ազգա-  
 յին պատմութեան մէջ Նախարարաց  
 անմիաբանութիւն չը կայ . և աս է մեր  
 կառավարութեան և ազգին ուրիշնե-

րէն աղէկ ըլլալուն ապացոյցը . քանզի  
 հին ժամանակի մէջ յաճախ ապստամ-  
 բութիւն և բաժանուամեր չեղած թա-  
 գաւորութիւն չը կայ . Հռովմ՝ քաղքին  
 հիմնադիրը Հռոմուլոս՝ իր եղբայրը  
 Հռոմոս ձեռօքը կը մեռցընէ , պետու-  
 թեան նախարարներն ալ զինքը կը  
 մեռցընեն : Յունաց պատմութեանը  
 ըսկիզբէն մինչև վերջը քաղաքական  
 անմիաբանութեանց պատմութիւն ըլ-  
 լալը տեսար : Ասորեստանեայց թա-  
 գաւորութեան մէջ ալ կինը իր այրը  
 կը մեռցընէ և զաւակը իր ծնողին հետ  
 կը պատերազմի , զօրքը իր թագաւո-  
 րէն կ'ապստամբփի , զօրապետին թա-  
 գաւոր կ'ընեն և թագաւորնին իր պա-  
 լատին մէջ բանտը դրածի պէս կը ձը-  
 գեն . ան ալ յուսահատելով ինքզին-  
 քը կ'այրէ . հին ատենները ասոնց մէկն  
 ալ չենք տեսներ մեր ազգին պատմու-  
 թեանը մէջ : Արտաշէս թագաւորի  
 ժամանակ եղաւ պատմութեանց մէջ  
 առաջին քաղաքական խռովութիւնը .  
 « Ոչ դիտեմ ասել յորպիսի ազգմա-  
 նէ , ահագին իմն աղմուկ լեալ շրջո-  
 թից , բազմութեան 'զօրացն զմիմեանս



կոտորեալ • իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի , որպէս ասեն , յիւրոց զօրաց » • կ'ըսէ խորենացին և որի ձեռօք և ինչ բանի համար ըլլալը չը գիտէ : Բայց անկէ ետև քանի տէրութիւնը տկարացաւ , անկրթութիւնն ու անմիաբանութիւնը եվելլցաւ • անանկ որ՝ ազգին բնական չեղած և ետքէն մտած անմիաբանութիւնը և սիրոյ պակասութիւնը բնականի պէս եղաւ • Թէ որ աս մոլութիւնը մեր ազգին բնական ըլլար նէ՝ հին սլամմութեանց մէջ յիշատակը կը գտնելինք :

Հայոց ազգին սլամմութիւնը ոչ առջի և ոչ վերջի սլամմըլածներուն կը նմանի , անոր համար այս գործիս միջին տեղը դրինք • որ աղէկ հասկըցվի թէ այս ազգը իր տիրապետութեան ժամանակը ինչ տարբեր կառավարութիւն ունի , և որչափ ազատասէր : Որ մարդ ազատ է՝ մարդուս գերութիւն չը վայլելուն առջի օրինակը նա ցուցուց աշխարհի : Հայկ Ներբովթի հետ կը պատերազմի , կը յաղթէ ու կը մեռցընէ , ուրիշի արիւն՝ չը թափեր , և անոր զօրքէն գերի չառներ ,

ձեռքը եղած տեղին ալ աչք շունի :  
 Եւ կը գառնայ մինչև մահ իր հայրե-  
 նիքը խաղաղութեամբ կառավարելու  
 կը նայի : Որդիքն ալ իրենց հայրենա-  
 կան ժառանգութիւնը միշտ խաղաղ  
 ու հանդարտ կերպով կառավարեցին :  
 Աս արգիւն տիրապետութեան կերպը  
 ուրիշներուն պէս յարձակողական չէր ,  
 պաշտպանողական էր : Եւ այնչափ ա-  
 զատասէր և չափաւոր , որ մէկը ազա-  
 տութեան դէմ բռնութիւն ընել ու-  
 զէր ինչպէս Ներրովթ , անիկայ աշ-  
 խարհէն կը վերցընէին . բայց անոր  
 հնազանդողներուն բռնի և ակամայ ծա-  
 ռայելնին գիտնալով չէին մնասեր :

Հայոց թագաւորութիւնը չորս  
 գլխաւոր ցեղի կը բաժնուի : Հայկէն  
 մինչև Վահէ հայկապեան իշխանու-  
 թիւն կ'ըսվի : Վահէ մեռնելէն ետեւ  
 ատեն մը անիշխան մնացին . Աղեր-  
 սանդրի յաջորդ կուսակալներուն հը-  
 նազանդեցան : Երկրորդ իշխանութիւ-  
 նը Վաղարշակէն մինչև Արտաշիր տե-  
 ւեց Արշակունեաց անունով , որ Ար-  
 տաշիրի արսորէն ետքը Պարսից մագ-  
 պաններու ձեռքով կառավարվեցան

շատ մը տարի և յետոյ Արաբացոց  
 ոստիկաններու ձեռք ինկան : Երրորդ  
 իշխանութիւնը Բագրատունեաց ա-  
 նունով, մեծն Աշոտէ ըսկըսեց մին-  
 չև Գագիկ : որուն մեռնեէն ետքը  
 քիչ մը տարի առանց Թագաւորի մնա-  
 ցին : Չորրորդ իշխանութիւնը ըսկըսեց  
 Ռուբէնէն, և ըսվեցաւ Ռուբինեանց  
 որ մինչև վերջին Լեւոնի բռնըվիլը կը  
 հասնի և անկեց մինչ հիմա անիշխանէ :

---

## Գ Լ Ո Ւ Խ Դ .

### Վարդէ գոնացի :

Վարդէ գոն վաճառականութեամբ  
 յառաջ գնաց, նաւաւարութիւնը հի-  
 մակուան աստիճանը հասած չըլլալով՝  
 այնչափ ընդարձակ յարաբերութիւն  
 ունենալը զարմանալի է : Վաճառակա-  
 նութիւնը ծաղկեցընելու համար, Սար-  
 տէնեա, Սիսիլեա, Սպանիա, և Ափ-  
 րիկէ յաղթեց : Ասորվան օրս ինչպէս

Անգղիա՝ անանկ ալ Կարգեդոն միշտ  
 իր շահը փնտրուելը յաղթութեան  
 շարժառիթ եղած էր : Կարգեդոնա-  
 ցոց ու Հռովմայեցոց տարբերութիւ-  
 նը սա էր որ Հռովմայեցիք յաղթե-  
 լէն ուրիշ բան չէին փնտրուեր : Բայց  
 Կարգեդոնացիք անանկ չէին : Կառա-  
 վարութեան տարբեր ըլլալուն պատ-  
 ճառն ալ այս էր : Աս երկու հասա-  
 րակապետութիւնը երկու մեծ ունէին  
 որ ամեն տարի կը փոխվէին : Բայց  
 Հռովմայեցոց հիւպատոսները քաղա-  
 քական ու զինուորական իշխանու-  
 թիւնը մէկտեղ ունէին : Կարգեդոնա-  
 ցոց ատենակալները մինակ քաղաքա-  
 կան բաներու կը խառնըվէին : Երբ  
 ակեղ մը զօրք հանել պէտք ըլլար զօ-  
 րապետի մը կը յանձնըվէր , Օրէնսդը-  
 րական իշխանութիւնը ատենակալնե-  
 րուն : Ծերակոյտին ու ժողովուրդին  
 մէջը կը բաժնըվէր , ատենակալներուն  
 ու Ծերակոյտին մէջ անմիաբանութիւն  
 եղած ժամանակը՝ մինակ ժողովուրդը  
 բանի կը խառնըվէր , Ծերակոյտին ու ատ-  
 ենակալներուն վարպետութիւնը ձեռ-  
 վընուն հկածին չափ ժողովուրդը հե-

և ացընել էր : Այս վարպետութիւնը  
 հոս շատ օգուտ ըրաւ . որովհետեւ ժողովուրդը  
 ընդարձակ յարաբերութեան  
 միջոցը և այն ինչպէս պահելու կերպը  
 աղէկ չէր գիտեր , քաղաքական բաները  
 լաւ կը դատէր , վաճառականութեան  
 շահը չէր ճանչեր : Բայց այս վարպե-  
 տութեան և այս դրութեան մէջ խար-  
 դախութիւն մտաւ , դրութիւնը տկա-  
 րացաւ , Արարգեդոնացիք գէշ ճանրու  
 մէջ ինկան և իշխանութիւննին կոր-  
 ծանեցին : Խաղաղութիւնը Արարգե-  
 դոն մեծցուց , և քանի որ կ'առաջա-  
 նար վաճառականութեանը նախանձա-  
 ւոր ազգերուն վրայ կը յարձակէր :  
 Ժողովուրդը իր փափաքը լեցուց , իր  
 հարստութիւնը տէրութեան մեծնա-  
 լուն համար կը զոհէր , և ինք այն-  
 չափ երևելի ընող օրէնքները կը կոր-  
 ծանէր : Հասարակութիւնը ինքքզինքը  
 անիրաւ ոխի մը տալով Անիրաղի  
 թշնամիները պաշտպանեց , և հասա-  
 րակապետութիւնը ձեռքէն հանեց :  
 Հարստութեան այն աղէտալի ազգե-  
 ցութիւնը հոս ալ կը տեսնենք որ բո-  
 լոր իշխանութիւնները աւրեց ու կոր-

ծանեց , անցեալին փորձը տպագային  
խրատ մը շեղաւ :

Աարդեդոն հարստութիւն ստա-  
նալու ջանք շատ կար : Տէրութեան  
գործքի խառնըվելու համար եկամուտի  
մը տէր ըլլալ պէտք էր , և այս բանը  
ամեն հին հասարակապետութեանց  
մէջ քիչ և շատ կը գտնուէր : Ասոր  
համար Հռովմ սաստիկ խռովութիւն-  
ներ եղաւ , հողերը բաժանելու օրէնք  
մը շինեցին , ժողովուրդին վնասելով  
ազնուականաց ձեռքը անցուցին : Աար-  
դեդոն անգութ կրօնք մը կար , Առո-  
նոսի սեղանին վրայ մարդիկ կը զոհե-  
ին : Բնութեան փափուկ ըզգացումը  
յարթել սորվելով ժողովուրդ մը հայ-  
րեն'քին ի՞նչ անձնանուիրական բաներ  
չը ցուցունէր : Բայց վայ անոնց որ աս  
միջոցին կարօտ են : Մարդիկ ընկերա-  
կան վիճակի մէջ մէկզմէկ պաշտպանե-  
լով և մէկզմէկու շահը հողալով կըր-  
նան ապրիլ : Ընկերութիւնը պաշտ-  
պանելու համար բնութեան իրաւուն-  
քին դպչիլը բնութեան նպատակին  
դէմ գալ և մարդկային ազգին անէծ-  
քը իր վրայ հրաւիրել է : Մարդ զոհ

ընելը աններելի է : Որչափ որ սյսպէս  
տեսարանները քաջութեան յուժ տա-  
լուն և մահէ չը վախնալու օգուտ ու-  
նենալուն վրայօք կը պնդեն , Հռովմա-  
յեցոց սուսերամարտիկն ալ ներելի բան  
չէ :



### ԳԼՈՒԽ Ե .

Հասարակաց արտաբերութիւնն Հռովմայեցոց :

Հռովմայեցոց պատմութիւնը  
մարդոց մտածութեան դէմը ընդար-  
ձակ պատկեր մը ըլլալուն , խօսք չը  
կայ : Սկզբնաւորութիւնը , կերպ կերպ  
չըջանները և վերջը , խրատի անսպառ-  
աղբիւրներ են : Հռովմ երեւելի ազգաց  
հետ բաղդատէ որոնց հետ պատերազ-  
մեցաւ , աշխարհիս անոր տըված ախ-  
տերուն ու երկպառակութիւններուն  
պատճառը փնտրուել կը սորվեցընէ :  
Իր իշխանութեանը ամենաբարձր աս-  
տիճանին մէջ ինքը իրեն հետ կրնաս

բաղդատել • իրեն զանազան դարերուն մէջ մեծնալուն անկմանը և կործանման պատճառը կ'ըսկըսիս տեսնալ :

Աշխարհ յափշտակող Հռովմին ըսկիցքը մէկ քանի հովիւ, և տեղ ու հայրենիք շունեցող մարդոցմէ էր • որոնք յանդուզն առաջնորդ մը ունեցան : Սարէններուն ու Հռովմայեցոց միաբանելէն ժողովուրդը շատցաւ : Հռովմայեցիք Սարէններուն աղէկ սովորութիւնները առին : Իրենց հպատակ եղող ժողովուրդներուն աղէկ սովորութիւնները առնելը, իրենց յաղթութեանը քիչ պատճառ չեղաւ :

Նիւմայի իշխանութիւնը պատերազմելէն ուրիշ բան չը գիտցող ազգքը ուժով օրէնքներու տակ ձգեց և շէնքին հաստատութիւն տրվաւ : Աս թագաւորէն ետքը պատերազմը յաջողակութեամբ նորէն ըսկըսեց : Հռովմ իր թագաւորներուն իշխանութեանը ներքեւ՝ շատ մեծցաւ • բայց միշտ իր մէջը յեղափոխութեան բոց մը կար ծածկեալ, որ փայլելու համար կայծի մը կը նայէր : Լուկրէտիայի մահը Տարկուինոսի բացարձակ իշխանութեանը



ասկ գէշութեան վախ մը ըլլալը հասարակութեան իմացուց : Աս մահը եղած կրակը բռնկեցնելու ջահ մը եղաւ : Թագաւորները Ծերակոյտը ազգայնացնելու համար, հասարակութեան ուժ կուտային . Ծերակոյտն ալ վարպետութեամբ հասարակութեան ուժը թագաւորներու գէմ գործածեց : Տարկուինոսը իշխանութենէ զրկել առկող յեղափոխութիւնը, Ծերակոյտին գործն էր՝ քան թէ հասարակութեան : Տարվէ տարի փոխփող հիւպատոսութիւնը Հռովմի յառաջադիմութեան պատճառ եղաւ : Ամեն տարի նոր օրէնսդիրներ կուգային և իրենց ժամանակը հռչակաւորել կ'ուզէին : Քաղաքական և պատերազմական իշխանութիւնը ասոնց վրայ ըլլալով, բնականաբար իր վիճակը պատերազմի հրաւիրող մէկ ազգը՝ պատերազմի կը բռնէին : Ծերակոյտը ուրախութեամբ հաճութիւն կուտար, որովհետեւ իր կարողութիւնը մեծնալուն միջոց մըն էր :

Մինակ պատերազմը հասարակապետութիւնը կրնար բռնել և հա-

րուսացըննել : Հռովմ՝ առանց արհեստի  
 և առանց վաճառականութեան ,  
 յափշտակութենէ ուրիշ բան չուներ :  
 Տերութեան գանձին օգտաւոր ընելու  
 համար յափշտակութիւնը կարգադրել  
 պէտք եղաւ : Նիւմայի օրէնքները՝ որ  
 Հռովմայեցիք բարեպաշտ ըրաւ , Օւե-  
 րակոյտին նպատակին շատ օգնեց :  
 Աողոսպուտը հասարակաց էր , և ա-  
 մեն զինուոր բան չը պահելու երդում  
 ըրած էր , և աս երդումը բնաւ չաւրե-  
 ցաւ : Առնելով տեղիանքէն , մէկ մա-  
 սը գանձին շահին համար կը ծախ-  
 ւէր՝ և մնացորդը հասարակաստու-  
 թեան եկամուտ մը տալու պայմանաւ  
 աղքատաց կը բաժնւնայ : Աս ճանքով  
 բոլոր ազգը պատերազմել կ'ուզէին :  
 Մինակ յաղթութիւնը կրնար պատե-  
 րազմը դադրեցըննել : Անոնց համար  
 մէկ ազգի հետ մինչև վերջը պատերազ-  
 մելը շատ աղէկ էր , քան թէ մէկուն  
 հետ հաշտըվիլ ու միւսին հետ նորէն  
 ըսկըսիլ : Աս ճանքան ազգը ինքըզին-  
 քը անյաղթելի կարծելու , և թշնամի  
 ազգերը վախցըննելու համար պէտք էր :  
 Հասարակաստութիւնը վրէժէ կը

վախմար, առ վախը Հռոմէացեցոց քա-  
 ջութեանը և բանի մը վրայ պնդեալ  
 կենայնուն պատճառ եղաւ, և մասնա-  
 ւոր առաքինութիւնները առոր տեւե-  
 լուն երաշխաւորն էին, անանկ կա-  
 ռավարութիւններ որուն մէջ մարդ  
 քաղաքացիութենէ շէր կրնար զատ-  
 վիլ. ինքնիրեն ոչինչ էր քաղաքացի  
 ըլլալով բան մը կը սեպուէր :

Յաղթութիւնը ժամանակ մը յարդ  
 չուներ. զինուորներուն հարկ կ'ըլլար  
 որ ետ դառնան ու իրենց արտը մշա-  
 կեն, ամսական կամ տարեկան ստակ  
 մը շէին առնել, և պատերազմի գոր-  
 ծիքի պակսութիւնը երկար ժամանակ  
 տեղ մը պաշարելու արգելք կ'ըլլար.  
 անոր համար գիւղերը կողոպտելով կը  
 բռնականային ու տեղերնին կը քաշ-  
 վէին : Աս անընդհատ զարնել ու զար-  
 նելիլը Հռոմէացիները չը հարուստ-  
 ցնելով քաջարտութեան կը վար-  
 ժէր, և բարուց հաստատութեան մի-  
 շոց կուտար : Առջի յաղթութիւննին  
 Լասինացոց քաղաքներուն դաշնա-  
 դրութեան հնազանդելնին, և Հռոմ-  
 մայեցոց հետ մէկ ըլլալով պատերազմ

ընելու միաբանելնին եղաւ : Ալ էիսի պա-  
շարումը պատերազմական արհեստին  
կերպը բոլորովին փոխեց . դանձը զին-  
ուորաց թոշակ շնորհեց , և զանոնք  
զինեալ պահելով յաղթութեան ըն-  
դարձակ , ասպարէզ մը բացաւ :

Հռովմայեցոց զինուորները սաստիկ  
վարժութեան տակ էին : Աւանելքնին  
և զէնքերնին կռնակնին առած ճանրայ  
կ'ելէին , որ ասով մարմիննին ուժա-  
ւորվեցաւ , և թեթեւութիւննին դան-  
դաղութեան չը փոխվեցաւ : Այստե-  
րազմէն դադրած ատեննին ճանրաներ  
շինել կուտային , և այսպիսի աշխա-  
տութեամբ ուժեղ ու քաջ կ'ըլլային :  
Հռովմի սահմանադրութեան կերպը  
պատերազմի ժամանակ շատ մը զօրք  
դանելու միջոց մըն էր . առած տեղերնին  
մէջերնին բաժին ընելը քաղաքացին  
յարձակման և պաշտպանութեան հո-  
գալ կուտար : Բոլորը զինուոր էին ,  
պղտիկ կոշում մը ըլլալուն պէս ամենը  
քաղաքէն դուրս կը թափէին : Հասա-  
րակապետութեան առջի ժամանակնե-  
րը երկրի բաժանումը քաջութեան  
պատճառ էր ան ազգերուն դէմ կենտ-

լը ու ասոնց Տեճկըվիլը և աղքատու-  
թիւննին իրենց մեծամեծ առաքինու-  
թիւններնուն , և հայրենասիրութեան  
հիմը եղաւ որ անյաղթելի ըրաւ  
զանոնք :

Այս հանգամանքներն էր որ Հռով-  
մայեցիները Գաղղիացիներուն յար-  
ձակմանը դիմացուց . ասոնց քաջասըր-  
տութիւնը միայն Հռովմայեցիք կարող  
էին խոնարհել : Բազում յաղթու-  
թեամբ Հռովմառին , բայց Հռովմայե-  
ցոց վարժութիւնն ու կրթութիւնը և  
ձեռքերնին ունեցած զէնքերնուն դե-  
րագանցութիւնը , հասարակապետու-  
թեան յաղթութիւնը կը հաստա-  
տէին : Հռովմայեցիք միշտ իրենց եր-  
կիւղէն անգամ օգուտ մը քաղէին  
կը ցուցընէին . անոնց ձախորդութիւ-  
նը յաղթութեան նշան մըն էր , որ ի-  
րենք յաղթութեան ետեւէն ինտուր կը  
սպասորաստէր : Պուռոսի պատերազմը  
այս բանիս ապացոյց մըն է : Թշնամիին  
բանակը կարգ մը փիղ տեսնալը նոր  
տեսարան մը ըլլալով Հռովմայեցիք  
վախցուց . Փափրիկիոս աս բանակը փե-  
ղերը վախցընելով աւրեց և զօրաց սիրտ

արվաւ : Թշնամիին բռնած միջոցէն միշտ  
 օգուտ մը քաղելու ուշադրութիւնը ,  
 հաստատուն պատճառ մը ունէր : Աստ-  
 դամը Հռովմայեցոց խօսք էր արվեր որ  
 աշխարհ պիտի տիրեն : Նախապաշար-  
 մունքը թող շէր իտար որ այս խոստու-  
 մէն ճշմարտութեան վրայ երկրային , ա-  
 մեն բռնած ճանրանին միշտ պատգամի  
 ճշմարտութիւնը հաստատելու կը նայէր ,  
 որ սա նպատակը աշվընէն առջևէն չը  
 հեռանայ : Աստերագմը միշտ ուրիշ պա-  
 տերազմ մըն ալ առաջ կը բերէր . և յաղ-  
 թեպներուն սովորութիւններէն իրենց  
 օգտաւ որ եղած բաները կ'առնէին : Ա-  
 նանկ որ Հռովմ աշխարհ իրեն ծառայել  
 ապու պէտք եղած միջոցները ժողվե-  
 ր , և ամեն մէկ յաղթութիւնը այննը-  
 պատակէն մէյմ կ'քայնէր : Արդեղոնա-  
 ցոց , և Հռովմայեցոց մեկզմէկու զար-  
 նրվիլը այս երկու ազգաց բարքը ցու-  
 ցուց , և վերջերնին ինչպէ՛ս ըլլայը ան-  
 կէց կը գուշակվէր : Արդեղոն անաս-  
 տիճան հարստութեան հասաւ որ ան-  
 կէց բարքի եղծում կը ծնանէր : Հռովմ  
 ընդհակառակն իր բարձր աստիճան ա-  
 ռդութեան մէջն էր : Հոն կատարեալ

միտքանուծիւն կար երբ Անիբաշ երեւ-  
 ւեցաւ բոլոր անմիտքանուծեան սերմը  
 կորսըվեցաւ, բայց երբ Սկիպիոնն Կար-  
 գեղոնի դէմ ելաւ, անմիտքանուծիւնը  
 և կողմնակցուծեան խստուծիւնը շատ-  
 ցաւ և զօրապետները, կասկածելի ե-  
 ղան ժողովուրդին: Հրամայել ու հը-  
 նադանդիլը զատ զատ գաղափար չունե-  
 րանց քովը, պատերազմը յաղթու-  
 ծիւնը կը դադրեցընէր: Կարգեղոն հա-  
 բուստ քաղաքացիները իրենց հարստու-  
 ծիւնը չը կորսնցընէյու համար խաղա-  
 դուծիւն կ'ուղէին: Մէկ կողմը անյաղ-  
 ծելի պնդուծիւն, միւս կողմը տարա-  
 կոյս և տկարուծիւն կար: Ուրիշ պատ-  
 ճառ մըն ալ Կարգեղոնի նուազուծիւն  
 կը բերէր, Աղէքսանդրիայի հիմնադ-  
 րուծիւնը իր վաճառականուծեանը  
 մահարեք հարուած մը եղաւ. Նգիպ-  
 ատս Յունաց թագաւորներու իշխա-  
 նուծեանը տակ, կը փախաքէր որ իր  
 վաճառականուծիւնը խափանող նա-  
 խանձաւորը ոչընչացընէ:

Հասվմայեցիները Կարգեղոնացոց  
 զօրաց ուժը և կարողուծիւնը ուստի  
 գալը կը քննէին. ձիաւոր զօրքը Անի-

բաղի յաղթութեանը պատճառ եղաւ :  
Սկիպիոնին փոյթը Մասինիսսային հետ  
դաշնադրութիւն ընել էր : Եւ աս դաշ-  
նադրութիւնը Ղամայի յաղթութիւնը  
վաստըկցուց :

Վարդեգոնի իջանելէն ետև Հռոմ  
իր կարողութեան բարձր աստիճանն էր ,  
ամենուն ահեղ երևցեր էր . և այնչափ  
ընդարձակ չէր որ զօրապետներուն վը-  
րայ ունեցած իշխանութիւնը կորսնցը-  
նէ : Քայց հեռու տեղեր պատերազմ ը-  
նելը , բարբը թուլցուց , դուրսէն երե-  
ւոյթ մը եղած մեծութիւնը աւելցը-  
նելով իր բուն ուժը խախտեցաւ , բա-  
րուց կատարելութիւնը նուազեցաւ ,  
և վերջապէս հասարակապետութեան  
հետ կորնչեցաւ :

Վարդեգոն յաղթըվեցաւ և այս-  
չափ ուժն ու կարողութիւնը տակն ու  
վրայ եղաւ , Հռոմ աշխարհ աչքը ա-  
ռաւ . զօրքը ամեն տեղ յափշտակու-  
թեան ելաւ . ամենէն աւելի պատե-  
րազմական ազգ Մակեդոնացիք և  
Յոյնք մնացին յաղթելու . ինչպէս վե-  
րը ըսինք՝ թէ որ Յոյնք միաբանութեան  
ողին ունենային և մեկզմեկ օգնէին Հը-



առվմայեցիներուն անյաղթելի կ'ըլա-  
 յին : Բայց Յունաց քաղաքներուն մէկ-  
 զմէկու ունեցած ոխերնին, Հռովմա-  
 յեցոց վարպետութեանը նպաստեց :  
 Մակեդոնիայի յաղթը վիլը բոլոր Յու-  
 նաստանի ծառայութեան նշան եղաւ :  
 Չարմանալի է թէ որչափ յաղթու-  
 թեան դրութիւնը շափուած ու կշտը-  
 ված էր Հռովմ . յաղթելը բան մը ը-  
 սել չէր՝ թէ որ յաղթութիւն մը ու-  
 բիշ յաղթութեան ճանքայ շըլայ :  
 Մակեդոնիայի յաղթութենէ ետե Հը-  
 առվմայեցիք յայտնեցին թէ Մակեդո-  
 նիայի քաղաքները, և մասնաւոր իշխա-  
 նութիւնները Հռովմայեցոց օրէնքնե-  
 րովը պէտք է կառավարեն : Այս ուրիշ  
 բան չէր՝ Յունաստանի բոլոր սւժը կոր-  
 սընցընել, և Հռովմայեցոց դաւառ ը-  
 նել էր :

Յունաց ծառայութենէ ետե Ա-  
 սորեստանի վրայ պատերազմ բացվե-  
 ցաւ, և Հռովմայեցոց բարուցը աւրը-  
 վելուն ըսկիզբը այս եղաւ, յաղթող-  
 ները յաղթեալներուն զեղխութիւնը ա-  
 սին, և այս զեղխութիւնը աշխարհա-  
 կալներուն լաճ պատրաստեց որ իրենց

բաղաբաղիցները անցուցին :

Հռովմայեցոց զօրքը յաջողակու-  
թեան ետևէ եղած ժամանակը Ծերա-  
կոյտը ապագայ յաղթութիւնը հաս-  
տատելու միջոց կը գտնէր : Յաղթեալ  
ազգաց ձեռքը եղած հողերուն մէկ մա-  
սը գաշնակիցներուն կուտային , թէ որ  
գաշնակիցներն ալ վախ մը ունենային ,  
աստիք ինքնիրեննին այս ճանրով կը  
տկարանային : Ծերակոյտը շատ մը  
թշնամի ունեցաւ , ամենէն տկարուն  
հետ զինադադար կ'ընէին անոնց յաշ-  
թըվիլը կ'ուշանար : Երբ պատերազմի  
միջոցները պատրաստ ըլլար , Հռովմա-  
յեցոց դեսպաններուն դռնօղութիւնը  
պատերազմ բանալու աղէկ միջոց մըն  
էր : Թագաւորներուն տանը մէջ եղած  
բաժանումը և հասարակութեան ու  
իշխանին մէկզմէկու ունեցած կասկածը ,  
Հռովմայեցոց բանեցուցած վարպետու-  
թեանը միջոց կ'ըլլային : Ազգի մը ա-  
զատութիւն կուտային և մէջէն դաշա-  
նի ապստամբներ հանելով իշխանու-  
թիւնը իրենք կ'առնէին . շատ անգամ  
յաղթեալ իշխանի մը դրացին ըլլող  
ազգի հետ հաշտութիւն կ'ընէին Հը-

ռովմայեցոց դաշնակիցներուն վրայ զօրք  
 չը հասնելու պայմանաւ, որ այս ուրիշ  
 բան չէր վնասութեան կարողութիւնը  
 ան աղբէն վերցնելով իրենց ուղածին  
 պէս ծառայել տալ էր. այս սկզբունք-  
 ները ամեն ատեն դործածելը Հռովմա-  
 յեցոց հաւատարմութեան պատիւ չէր  
 կրնար տալ, բայց ասոնց նպատակը մի-  
 նակ աշխարհակալութիւն էր, նպատ-  
 ակնուն հասնելու յարմար միջոցները  
 ասոնք ըլլալը մարդ չը կրնար ուրանալ:  
 Աշխարհի ոսկին Հռովմ կը լեցվէր.  
 և ասոր բնակիչները ամեն բան դատե-  
 լու յանդգնութիւն ունէին, և ուժը որ  
 կը կործանէ, ոսկին որ ուժը կը հաս-  
 տատէ, երկուքն ալ մէկ ձեռքով կը բռ-  
 վանդակէին, զօրք ունենալու իրաւուն-  
 քն ու միջոցը միայն իրենց պահեր  
 էին:

Միհրդատ միայն այս անյադ աշ-  
 խարհակալներուն դէմ քաջութեամբ  
 զինքը պաշտպանեց, և զանոնք վտան-  
 գի մէջ ձգեց: Հռովմայեցիք կործանե-  
 լու դադանիքը միայն ան դիտցաւ, հիւ-  
 սիսային ժողովուրդը մինչ իտալիայի  
 կեդրոնը քաշեց: Հպատակ եղող ազ-

դաց հաւատարմութիւնն ցուցուց , և  
զանոնք ազատութեան հրաւիրեց . եր-  
բեմն յաղթող երբեմն յաղթեալ իր  
հանճարովը հնարք կը գտնէր : Բայց  
վերջապէս երկար ժամանակ դիմակա-  
լութիւն ընելու միջոցներէն զրկելեցաւ  
ու ինքըզինքը մահի յսնձնեց որ Հռով-  
մայեցոց յաղթութիւնը չը տեսնէ :

Հռովմ ազէկ ճանչցած չենք ըլլար ,  
թէ որ միայն արտաքին գործոց մէջ բա-  
նեցուցած վարպետութիւններով բաւա-  
կանանանք . հասարակութեան և Երե-  
րակոյտին բաժանումը և ասոր պատ-  
ճառը քննութեան արժանի է :

Թագաւորները մերժելէն յետոյ  
կառավարութիւնը ազնուականաց ձեռ-  
քը մնաց , պատիւն ու յարգը իրենց  
ժառանգութիւնը սեպիւնցաւ . բայց այս  
ազնուականները , որ ուզած ժամանակ-  
նին հասարակութիւնը թագաւորաց  
դէմ կը դռգռէին , իրենք նպատակնուն  
անդին անցան , իշխանութեան նախանձը  
ազատութեան փափաք սրվաւ . ժողո-  
վուրդը ազատ չըլլալը իմանալով ազ-  
նուականաց ու իր մէջը օրէնսդրութեան  
բաժնըվիլը խնդրեց : Թողովուրդը

պաշտպանելու համար տրիրուհներ դը-  
նեխուն ըսկիզբը ասկէց եղաւ որ յետոյ  
այս տրիրուհները Ծերակոյտին գէմ  
հակառակեցան . որովհետեւ ժողովուր-  
դը շատուօր էր երթալ չուղէիննէ զօրք  
գանելը գժար կ'ըլլար , և իրենց հակա-  
ռակողն ալ դառաստանի կը քաշէին .

Ծերակոյտը խոհեմութենէ ուրիշ բան  
չունէր ձեռքը . կրօնքի ազդեցութիւնը  
կը բանեցընէր . որ կրօնքը պաշտպանե-  
լու յարգութիւնը միշտ իրենց տրված  
էր , և տրիրուհին մէջ բաժանում կը  
ձգէր , վերջապէս դիմակայութիւնը  
հզօր ըլլար նէ կը գիջանէր . և մէկ մա-  
սին յառաջագիմութենէ աւելի կառա-  
վարութեան անվտանգ մնալը կ'ուզէր :  
Ազնուականութեան յարդը ժամանակը  
վերցուց և ոչինչ բառ մը եղաւ , որով-  
հետեւ ամենը գրեթէ հաւասար իրա-  
ւունք ունէին . ներքին անհամաձայնու-  
թիւնը հասարակութեան և ազնուա-  
կանաց մէջ կը տիրէր : Ազնուականք  
աղէկ դիմակայութիւն կ'ընէին , որով-  
հետեւ բարքը տկարացեալ էր , և իրենց  
անբաւ հարստութիւնովը ազդեցու-  
թիւն ունէին :

Հռովմայեցոց կառավարութեան  
 հաստատութիւն արժողները քննիչներ  
 էին : Անանկ բաներ կը պատահին որ  
 եղած օրէնքները չեն բաւեր վճակու ,  
 քննիչները օրինաց պահտութիւնը կը  
 լեցրնէին և ամեն վտանգաւոր նորագու-  
 թիւնները , ընդհանուրին ու մասնաւո-  
 րին բարբին դաշտու բաները կը պատ-  
 ժէին : Երակոյտէն ուղածնին կը հա-  
 նէին , քաղաքացի մը մէկ կարգէն ուրիշ  
 կարգ կարող էին դնել , կամ քաղաքա-  
 ցիք իրաւունքէն զրկել . հարիւրեակնե-  
 րուն ու աստիճանաւորաց քուէարկու-  
 թիւնը ժողովուրդին քիչ ազդեցու-  
 թիւն ձգեց , բայց տոհմի քուէարկու-  
 թիւնը որ քիչ ժամանակէ 'ի վեր հաս-  
 տատվեցաւ՝ հասարակութեան շատ ուժ-  
 տը վաւ . քննիչները անանկ քուէարկու-  
 թիւն կ'ընէին որ մէկը ընտրութեան  
 տէր չէր կրնար ըլլալ . և հասարակու-  
 թիւնը իր շափը չէր կրնար անցունել :  
 Հռովմայեցոց կառավարութիւնը միշտ  
 իր վերբին քով իր դեղը ունէր :

Մարդկային տկարութիւնը մնա-  
 յուն բան մը չը կրնար հնարել . աս  
 ճշմարտութեանը Հռովմ ալ վկայ է-

զաւ, երբ իր յաղթութիւնները չափազանցեց, կործանումը ըսկըսեց. առաջ իր ազատութիւնը կորսընցուց, աշխարհ յաղթեց՝ իրեն ունեցած փառասէրները կշտացուց, որ իր իշխանութեամբը իրեն իշխեցին: Ուրիշ ազգերը ճառայութեան տակ էին. ետեւ ետեւ յաղթըլած և Հռովմ զիրենք այնչափ քաղաքական կապերով կապած կը տեսնէին որ իրենց ազատութեանը ցանկալու անգամ կ'երկնչէին: Սեսոստրի, Ալեքոսի, և Աղէքսանդրի յաղթութիւնները, ու Հռովմայեցոց ըրածը սա տարբերութիւնը ունի. առջինները յաղթեցին անցան, ամեն ազգ իր վարքն: ու բարբը պահեց, այն կործանիչ հեղեղը անցնելէն ետքը ինքըզինքնին գտան. ասոնք ընդհակառակը ոտն առ ոտն յաղթեցին. իրենց իշխանութեանը տակը իյնողը Հռովմայեցի ըրին և բարբերնին ու վարբերնին անոնց մէջ պաղարբերելու կը ջանային. սա խանուկ ազգերը ետքը Հռովմի կործանմանը քիչ մը քիչ պատճառ չեղան, այսչափ ազգերը Հռովմայեցի ընելով ժողովուրդին միաբանութիւնը աւրեցաւ. այն շատ

ուածները և այն պարիսպները չը մնաց ,  
 շատուածուհին Հռոմի որ պաշտելի էր  
 ամենեցուն օտարազգեաց համար հրա-  
 շալի չէր , և Հռոմի մայեցոց առջի բարե-  
 պաշտութիւնն ալ չը մնաց . օտարա-  
 կանները քաղաքական իրաւունքը վայե-  
 լելու արտօնութիւն ունենալով , Հը-  
 ռոմի վեցվեցան . սա պատճառը վարը  
 զժադրելու պատճառնու հետ միանա-  
 լով քաղաքը յանդուդն անձանց ձեռքը  
 ձգեց , որ որն որ համարձակէր ուզածին  
 պէս կը վարէր :

Երբ Հռոմի իշխանութիւնը մինչ  
 ՚ի Իտալիայ սահմանեալ ու անկէ ան-  
 դին չէր անցներ՝ բոլոր զօրքը քաղաքա-  
 ցի էր . Ծերակոյտը զօրապետներուն  
 ընթացքը մօտէն կը տեսներ և զօրա-  
 պետները զօրքը իր պարտականութենէն  
 չէին կրնար զատել . բայց երբ Ասիայ  
 յաղթելու գացին և զօրապետները տա-  
 րիներով զօրքին դուրսը կեցան , իրենց  
 մեծէն ուրիշը չը ճանչնալ սկըսեցին . ան  
 առն Հռոմի իրեն անպատամը եղող  
 զօրապետը պատժելու անկարող եղաւ :  
 Ծերակոյտին ու ժողովուրդին մէջ  
 տեղ եղած անմիաբանութիւնը զօրքէն



նազանս դասու և Շերակոյախն խոհե-  
 մութիւնը անօգուտ եղաւ : Մարիոս  
 քիչ մը առաջ ծնած ըլլար՝ խռովարար  
 անգամ չէր կրնար ըլլալ : Բայց Մա-  
 րիոս ելած ժամանակը հասարակապե-  
 տութեան տէր եղաւ : Հռովմի կործա-  
 նումը մէջի եղած անմիաբանութեանը  
 տալու չէ, հասարակապետութեան ըն-  
 դարձակութեանը որ բաժանումը քաղա-  
 քական պատերազմի դարձուց : Քաղա-  
 քացիներուն մէջ կռիւ կար, բայց այս  
 կռիւը ազատութեան պիտանի և կարո-  
 դութեան նշան մըն էր. ժողովուրդը՝  
 միանգամայն խաղաղութեան ժամանակ  
 հեզ, պատերազմի տունն ահեղ ուզելը  
 անհնարին բան խնդրել է : Միաբանու-  
 թիւն ըսածնին, կ'ըսէ Մօնթէսկիոյ .  
 քաղաքացոց միաբանութիւն չէ, մեռ-  
 եալ մարմիններուն մէկըմէկու հետ կապ-  
 վին է : Տիրապետական կառավարու-  
 թեան տակ ժողովուրդը մէկըմէկու  
 կապված է. ազատ կառավարութեան  
 մէջ յուղեալ է, և այս յուզումը քա-  
 ջութեան կը փոխվի : Հռովմ՝ ազատ ե-  
 դած ժամանակը աշխարհի ուրիշ կող-  
 մերէն աւելի մեծ օրինակներ ցուցուց :

Յունաստանի պղախի հասարակապետութիւններն ալ ետ չը մնացին :

Ամեն բան այս վիճակի մէջ էր որ Սիլլայի բունութիւնը և Պոմպէոսի ու կեսարի պատերազմները հեազհետէ պատահեցան : Կեսարի մշտնջենաւոր դիկտատորութիւնը մինակ շատ բաներու պատճառ եղան , և որչափ այն բաներէն հարկաւոր խրատներ կը քաղվի ալ նե՛ մեր գործին ուղղակի յարարութիւն չունի . հիմա մեր սահմանը կայսերութեան ըսկիզբէն մինչ 'ի արեւելեան ու արեւմտեան բաժանումը , քննելու մեզ կը հրաւիրէ :



## ԳԼՈՒԽ Զ .

Կայսերութիւնն Հռոմայեցոց :

Մէկ նոր տեսարան մը պիտի տեսնանք : Հռոմ ու Հռոմայեցի չը մընաց . ժխայն անուննին և մէկ քանի սո-

վորութիւննին ու յիշատակնին կայ որ  
 իրենց նուաստութիւնը կ'աւելցընէ :  
 Ասայրը շատ մը մարդոց յանձնըված  
 պաշտօնները իրեն սեպհականեց : Օ-  
 գոստոսէ իր յաջորդները թագաւորու-  
 թեան տիրոջսը չառած, զինուորական և  
 քաղաքական և դատաստանական իշ-  
 խանութիւնները իրենց յատկացուցին :  
 Ծերակոյտը ծառայութեան մէջ ին-  
 կաւ, օրէնսդրական իշխանութիւնը  
 կայսերական եկամուտ մը եղաւ : Տե-  
 րապետութիւնը իր կատարելութեանը  
 հասաւ, աշխարհի տիրապետել ուզող-  
 ները ժողովուրդը իրենց ծառայ ըրին .  
 և ինքըզինքնին պաշտպանելու համար  
 զօրք պահելէն ուրիշ միջոց չունեցան :  
 Հասարակութեան մէջ միարանութիւն  
 չը մնաց, զօրքը անգամ միտքան չէր,  
 թէ որ ստակով և արտօնութիւնով  
 զանոնք չը բռնէին. զօրապետները եր-  
 բեմն երբեմն իշխանութիւնը կը յա-  
 վիշտակէին և հասարակութեան սիրե-  
 լի ըլլողին կուտային :

Օգոստոսի ժամանակ հասարա-  
 կապետութեան մնացորդ կողմնակից-  
 ները հեռուէն հեռու անմիաժ կայծեր

կը ներտէին : Գուրսէն եղած թշնամի-  
ները կամ ոչինչ էին , կամ հեռու ըլ-  
լալոյնին չէր վախցըվէր , անոր համար  
առանց արդեւքի խաղաղութիւնը  
հաստատվեցաւ : Աս վիճակին մէջ  
գուրսի անհամեմատ վարքի տէր ըլլող  
գաւառներուն կարգ ու կանոն տալով  
օրէնսդիր ըլլալ պէտք էր : Հռովմ մի-  
ապետութիւն եղաւ , անոր միապետա-  
կան կառավարութեան ընթացք մը  
կ'ուզէր , որ Օգոստոս այն չըրաւ , իշ-  
խանութեան ու աղատութեան շատ  
իջառ տըվաւ : Իշխանութիւնը անհիմն  
ու անմիաբան մնաց , աղատութեան  
տըված իջասն ալ սա էր որ՝ իշխանու-  
թեան տէր ըլլողին վարքը գէշ ըլլար  
նէ աշխարհի իջասակար էր , և գրեթէ  
ամենն ալ գէշ մարդիկ էին : Յաջո-  
ղութիւնը Օգոստոս ասանկ բարձր  
ատտիճանի հասցուց , բայց աս իշխա-  
նութիւնը վարելու մարդ չէ եղեր ը-  
սելու իրաւունք ունէինք : Պարտաւոր-  
ութիւնը իրեն կանոն բռնեց , և աս պար-  
տաւորութիւնը խաղաղութեան պատ-  
ճառ եղաւ : Հառարակութիւնը իր  
Ծերակոյտը իր արիւրունները և իր

Հիւսպատոսները ունենալով [Թմբրու-  
 Թեան մէջ ինկաւ՝ զինուորական ուժը  
 կամ չը մտածեց կամ անոր գիմամար-  
 աելու կարողութիւն չուներ : Շատ  
 չանցաւ աս զինուորական ուժը օտա-  
 րականներէն բաղկացաւ : Հռովմայե-  
 ցիները՝ ալ հեռու տեղվանք երթալ չէ-  
 ին ուզեր, զինուորականութենէ զըզուե-  
 ցան, քաղաքացիներէն զինուոր չը մը-  
 նաց : Մինակ յեաին ժողովուրդը զօրք  
 կը գրէին, ասոնք ալ ստակը ով շատ  
 տար նէ՝ անոր կը ծառայէին : Ընդար-  
 ձակ կայսրութեան մը մէջ ասանկ բա-  
 ներ կ'ըլլայ, զօրքը կեդրոնէն միշտ հե-  
 ռու էր, իր զօրապետէն ուրիշը չէր  
 ճանչեր, և զօրապետն ալ իշխանու-  
 Թեան բարեկարգութիւնը աչքին առ-  
 ջև չուներ որ իրեն փառասիրութեանը  
 սանձ ըլլայ : Մինչ 'ի Աոստանդիանոս  
 եղած շատ մը գէպքերը մէկդի կը ձը-  
 գենք, որովհետև մի և նոյն օրինակներ  
 և մի և նոյն խրատներ են, բայց Աոս-  
 տանդիանոսի օրը՝ նոր կրօնք մը երեւ-  
 ցաւ և բարբի փոփոխութիւն տրվաւ,  
 կայսերութեան բաժանումէն և արեւ-  
 ւելեան ու արեւմտեան աթոռներուն

կործանումէն առաջ այս կրօնքը նայինք  
ինչ ըրաւ :

Երկու փոփոխութիւն Աստան-  
դիանոսի կայսրութիւնը հռչակաւոր  
ըրաւ : Քրիստոնէութիւն հաստատուի-  
լը , և կայսրութեան ատենին Աս-  
տանդնուպօլիս փոխադրվիլը : Ետքի  
դէպքը Հռովմայեցոց կայսրութեան  
կործանումը փութացուց : Այս նոր  
քաղաքը շատ մը բան ու գործ չունե-  
ցող օտարականներէ լեցվեցաւ . Աս-  
տանդնուպօլսոյ շնիլը իրաւ բարբա-  
րոսները դէպ 'ի Իտալիայի կողմը քը-  
շեց ' , բայց թէ որ Հռովմայեցոց իշ-  
խանութեան ատենը Հռովմ մնար ,  
այս բարբարոսները կայսրութեան ա-  
մեն կողմը կը յարձակէին : Աստանդը-  
նուպօլիս Հռովմայի կայսրութեան ամ-  
բողջութիւնը կործանեց , բայց Յու-  
նաց կայսերութիւն անունով բաժա-  
նումէն ետքը ատեն մը քշեց :

Աստանդիանոսի կայսրութեան  
պատմութիւնը եկեղեցական պատմու-  
թիւնին հետ կապված է , և հոս քը-  
րիստոնէութիւնը ինչ ազդեցութիւն  
ունեցաւ այն նայելու է . յետոյ ինչ

ճանրով քալելը կը ցուցնենք : Քը-  
րխատոնէութիւնը այն ժամանակ Հը-  
ւովմ մտաւ՝ որ Հռովմայեցոց բարբը  
գէշ աւրած էր , անոր համար կարծը-  
վածին չափ ազդեցութիւն չըրաւ . հա-  
լածման ժամանակի քրիստոնեաներուն  
մարուր բարբը չունեցան . քրիստոնէ-  
ութիւնը եղբայրութեան կոչեց ամեն  
մարդ , խաղաղութիւն ու միաբանու-  
թիւն քարոզեց : Այս վարդապետու-  
թիւնը առջիններուն բոլորէն՝ դերա-  
զանց էր : Գժբազդարար վարդապե-  
տութիւնները մարդոց կիրքը յաղթե-  
լու չէն բաւեր , շատ անգամ կիրքը ա-  
մենամարուր բարոյական վարդապե-  
տութիւնները մէկդի կը ձգէ՝ և վրայ  
կ'ելլէ :

Քրիստոնէութեան ըրած աղէկու-  
թիւնները անտարակոյս է . կռապաշ-  
տութենէ ծագած անխնայութիւնները  
ու գէշութիւնները նա վերցուց , և  
բարբը անուշցուց . բայց ի՞նչպէս եղաւ  
որ մեղեգնութիւնը այսպիսի մեծ մէկ  
բարիքը քիչցուց , քրիստոնէութիւ-  
նը տգիտութեան տիրած ժամանակը  
մարդոց անողորմութիւն ընելը Աս-

տուճոյ ծառայել է չըսաւ . լուսաւորեալ չըլլալովին քրիստոնէութիւնը լաւ չը հասկըցան . ասոր համար լուսաւորութիւնը կրօնքի հետ ընկերանալ պէտք է , առանց լուսաւորութեան անողորմութիւն կը ծագի , չէ թէ կրօնքը կը սորվեցընէ՝ այլ մարդկային կիրքը : Ամեն քրիստոնէաց աշխարհակալ իր կրօնքը հպատակներուն ընդունել տալու համար՝ քրիստոնէական հաւատոյ դէմ շատ մեծ դէշութիւններ ըրաւ , որ իր վարդապետը Յիսուս տէրն մեր այն գէշութիւնները բոլորովին աշխարհէ վերցունելու համար եկաւ : Կարոյոս Սաքսոններուն , Ըսպանեօնները Ամերիգացիներուն ինչ ընեինին՝ պատմութիւնը կը վկայէ : Յաղթեալներուն այսպիսի վընասներ չէին հասցուներ , թէ որ բրքրիստոնէական կրօնքը ինչ ըլլալը լուսաւորեալ , ըլլալով աղէկ մը հասկընային :

Քրիստոնէութիւնը քաղաքականութեան համար քիչ ազդեցութիւն չունեցաւ , թագաւորները պատժելու ու վարձատրելու ուղղակի իշխանու-



Թիւն ունենալը ցուցնելով՝ շատերը  
 արդարութեան սահմանէն չը հանեց .  
 Աստուծոյ աւջև ամենուն հաւասարու-  
 թիւնը , և տէրն ու ծառան եղբայր ըլ-  
 լալը քարոզեց , և բարեսիրութիւնը ա-  
 ուսքինութեան կարգէն հանեց պար-  
 տականութեան կարգը դրաւ : Շատ  
 ազգեր իրենց բնաւորութիւնը քրիստո-  
 նէական վարդապետութեան յարմար-  
 ցնելու տեղը՝ քրիստոնէութեան իրենց  
 բնաւորութեան կերպարանքը տալ  
 կ'ուզէին . Յոյնք տրամաբանող ըլլա-  
 լով շատ վէճեր ելան , որ այս վէճերը  
 ազգային բնաւորութիւնը տկարացուց ,  
 և բաժանումներ հանեցին : Հեթանո-  
 սաց մէջ այս վէճերը՝ որ եկեղեցւոյ  
 գիտնալու բաներն են , կայսրութեան  
 մեծ դործը եղաւ , որ հիմա կառավար-  
 րութեանց մէջ եկեղեցին անկախ իշ-  
 խանութիւն մը ունի . արեւմտեան ազ-  
 գաց մէջ՝ այս վէճերը շատ անգթու-  
 թեամբ եղաւ , ամեն մէկ ձեռի հետե-  
 ւողին ձեռքը թուր տրվաւ , և տղաակ-  
 բազմական ոգին արթնցուց :

Բոլոր միջին դարու մէջ եկեղեցին  
 կառավարութեան հետ կը պատերազ-

մէր . մինչև որ կրթութիւն սորվեցուց՝  
 որ եկեղեցին զատ է կառավարութիւ-  
 նը այլ է : Քաղաքական իրաւունքը  
 կարգաւորեալ չէր , երբ թագաւորնե-  
 րը ուժով դիմադրութիւն կ'ընէին՝ ե-  
 կեղեցին նզով կը պատրաստէր : Աս-  
 անընդհատ զարնըվելը երկու կողմն ալ  
 լուսաւորեց . թագաւորները եկեղեցա-  
 կանաց հետ միացուց , եկեղեցական ու  
 թագաւորական աթոռը մի ըրաւ , և  
 այս միջոցով թագաւորութիւնը բա-  
 րոյապէս և ֆիզիզապէս ինքըզինք  
 պաշտպանեց , անոր համար է որ յե-  
 ղափոխութեան դաղափարը ժողովուր-  
 դը պաշարելուն պէս , զորօրինակ  
 Գաղղիայի տասներութը դարը , հաւա-  
 տոյ դէմ ելաւ որ թագաւորութեան  
 մեծ ուժը զատէ :

Բայց դանք քրիստոնէութեան  
 քաղաքական ազդեցութեանը . սա բա-  
 նիս վրայ այնչափ կարծիք կայ , որ հա-  
 լատարմարար պատմելը շատ դժար է :  
 Մէկ կողմը՝ օրէնքները և մարդոց վար-  
 քըն ու բարքը քննելով , քրիստոնէու-  
 թիւնը ազդեցութիւն չունեցաւ կ'ըսէ :  
 Միւս կողմը՝ ամեն փոփոխութիւնները

քրիստոնէութեան կուտայ : Այս եր-  
 կու ներհակահան ծայրէն մէկ միջա-  
 սահմանութիւն մը հանել կարելի է :  
 Յիրաւի քրիստոնէութիւնը օրէնքները  
 չը փոխեց, որովհետեւ մինչ հիմա ա-  
 րեւմտեան ազգաց օրէնքները հեթանո-  
 սաց օրէնքներն են . քրիստոնէութիւ-  
 նը՝ դերութիւնը չը վերցուց, որովհետեւ  
 քրիստոնէայ ազգերը դերի առնել ծա-  
 խելը չը վերցուցին, Ամերիգա և Ռու-  
 սիա ասոր վկայ են : Բայց քրիստոնէ-  
 ութիւնը Եւրոպայի հիմակվան կըր-  
 թութեանը պատճառ եղաւ : Եղբայ-  
 րութիւն քարոզելով թոյլատուութիւնն  
 ու միաբանութիւնը հաստատեց : Քը-  
 րիստոնէութեան ճշմարիտ ըսկզբունք-  
 ները աղէկ մը չը հասկընալով՝ այնպի-  
 սի մոլորութիւններ առաջ եկաւ, քրիս-  
 տոնէական ճշմարիտ վարդապետու-  
 թիւնը՝ մասնաւորներուն շահը և ա-  
 դահներուն անյազութիւնը շատ ժը  
 մոլորութիւններ պաշտպանել կու-  
 տար, անոնց շատը կործանեց : Եւ  
 այսօրվան օրս քրիստոնէայ ըլլող կա-  
 ռավարութիւնները քրիստոնէութեան  
 հետ միաբան են, և կրօնքը քաղա-

քական ազդեցութիւն ունի . որովհետեւ բարոյականութեան յառաջադիմութիւնը քաղաքականութեան պիտանի ըլլալով կառավարութիւններուն վերայ ազդեցութիւն ունենալը հարկաւոր է :

Գանք հիմա Յունաց կայսերութեան՝ որ առաջ խօսեցանք , և այն վեճերուն որ բրիտանից մէջը մտեր էր : Այս պատճառը ուրիշներուն հետ մեկատեղելով կայսրութեան տկարութիւն տրվաւ . և կայսրութեան աթոռը այն վիճակին մէջ ձգեց , որ անկէջ հանելը շատ դժար էր :

Բարձրագոյն աստիճանին արժանաւոր մէկ մարդուն ազդեցութիւնը կայսերութեան հաստատութիւն կուտար , թէ որ հիմը խախտած կայսրութիւնը իր ճիշդ ըսկզբունքներուն վրայ դալու միջոց մը ըլլար : Յուլիանոսի պատմութիւնը զուրցածնիս կը հաստատէ : Ասոր զինուորական վարպետութիւնը և բարքին խստութիւնը վարքերնին աւեր՝ ու թուլցած ժողովուրդին նոր տեսարան մըն էր : Չարախօսաց և քսուներու թշնամի էր՝ որ

ասոնք կայօրուծեան պատուհասն է-  
ին , Յուլիանոս իր թշնամիներուն ան-  
գամ ասոնցմէ շարախօսող ըլլար՝ չէր  
մտիկ ընէր . ներքինիներն ու պալատա-  
կանները աքսորեց որ ասոնք Կոստան-  
դիանոսէ 'ի վեր շատ կարողութիւն  
ստացեր էին : Պատմութիւնը նա կը  
յանգիմանէ ուրացողութեանը համար .  
բայց աս ալ քաղաքական յարաբերու-  
թեան կողմէն նայելու է , որովհետեւ  
գործը ինքնիրեն դատելը մէկու մը բան  
չէ : Յիրաւի այս վիճակին մէջ շատ ա-  
ղէկ կ'ըլլար որ Յուլիանոս 'ի խելքին  
ուժը և քաջութիւնը նոր կրօնքը իր  
ժողովրդեան բարբին յատկացընելու  
համար բանեցունէր : Մարդոց կարո-  
ղութենէ վեր բան էր ան կրօնքին դէմ  
գալ , Յուլիանոս գիտնալու էր և յա-  
ռաջագիմութեանը աշխատիլ կը վստ-  
իւր իրեն : Բայց եկեղեցին օրէ օր մեծ-  
նալու վրայ էր , բոլորովին խելքը ա-  
սոր սըվաւ : Հռովմայեցոց հին կրօն-  
քը ժողովուրդին մէկ պզտիկ մա-  
սին քովը մնացեր էր , նոր եկեղեցին  
կառավարութեան վրայ մեծ ազդեցու-  
թիւն մը կը վաստըկէր . Յուլիանոս

կործանել ուղեց, բայց նպատակին չը հասած՝ ինք կորնչեցաւ և եկեղեցին ևս առաւել պայծառութեամբ կանգնեցաւ :

Հռովմայեցոց կայսր ըսելու արժանի Թէոդոս թագաւորի մահէն ետեւ՝ կայսրութիւնը երկու բաժնրվեցաւ . թէ որ Թէոդոս իր երկու տղոցը միաբանութեամբ ուժ գտնելիքնին, արևելք ու արևմուտք մէկ ըլլալով մէկ նպատակի ծառայել պէտք ըլլալը հասկըցընէր, այս բաժանումը օգտաւոր կ'ըլլար : Ասոր հակառակը եղաւ : Երկու կայսերութիւնը մէկզմէկ չը քաշել ըսկըսան . մէկզմէկ կործանելու կը նայէին, և երկուքին մէկզմէկու տըված վնասէն ինչ առաջ դալը դիւրին է հասկընալ : Առաջ արևմտեան կայսերութիւնը կործանեցաւ, որ մենք հիմա ասոր պատճառը բացատրելու նայինք :

Բայց առաջ նոր ըսկըռունքները քննենք, որ կայսրութիւնը ինչպէս իր թշնամիներուն հետ վարվել կուտային . առջի Հռովմայեցիք երկաթ կը դործածէին : Կայսրութեան տկարութիւնը կամ կայսերներուն թուլու-

Թիւնը բանը արծաթի հեծցուց . և ա-  
 սանկով բարբարոս Թշնամիները կը  
 հեռուցընէին : Ետքը տուրքի կապե-  
 ցին՝ որ պարզ ընծայով մը կը լըմնար ,  
 կամաց կամաց կայսրութեան տկարու-  
 Թեանը նայելով՝ պատերազմի վախ  
 կուտային և հարստութիւննին կը  
 խնդրէին : Շատ չանցաւ տէրութիւնը  
 աղբատացաւ ընծայ առնելու յոյս չը  
 մնաց . ըսկըսան գաւառները զարնել ,  
 որ Հռովմայեցիք պաշտպանելու կարո-  
 դութիւն չունէին , առանց կարողու-  
 Թեան և առանց զօրքի կայսերները  
 մէկ բարբարոս ազգը միւսին դէմ յաղ-  
 Թելու : Համար կը հանէին . բայց այս  
 օգնականներն ալ Թշնամի կ'ըլլային որ  
 առաջին չէին կրնար առնել . աշխար-  
 հի առաջին ազգը ըլլող Հռովմայեցի-  
 ներուն ըրածները աւրելու՝ գիտես Թե  
 ուխտ ըրեր էին . հասարակապետու-  
 Թեան ժամանակը Հռովմայեցիք բոլոր  
 ազգերը զինուորականութենէ զրկեցին  
 մինակ իրենց սեպհականեցին . կայսե-  
 րութեան ժամանակը իրենց մէջէն զին-  
 ուորականութիւնը վերցուցին՝ ուրիշ  
 ազգաց մէջ հաստատեցին . գիտես Թե

այն սկայն ծերացաւ, զէնք չէր կրնար վերցընել նորահասներուն ձեռքը տըվաւ որ իրեն դէմ գործածեն :

Արեւմտեան կայսերութիւնը միւսէն աւելի բարբարոսներէն տանջըվեցաւ . Կոստանդնուպօլիս Հռովմայեցոց մնացած ուժին կեդրոնը եղաւ . այս քաղաքը բարբարոսաց ելած տեղին մօտ էր . բայց ասոնք չէին վախնար կը շատնային և արեւմտեան կողմը կը յարձակէին , որ այս կողմը արևելեան կողմին չափ պաշտպանեալ չէր . արևելեան Հռովմայեցիք իրենք իրենց ըզբաղեալ , չէին կրնար կամ չէին ուզեր արեւմտեան եղբայրներուն օգնել . Յունաց կայսրին մէկը Կոթացոց թագաւորին մէկուն ինքը խրատ տըվաւ որ Իտալիայի վրայ յարձակի որ ինքը ազատի : Իտալիա ազատելու համար պարսպ տեղը բարբարոսաց տեղ տըվին , և իրենց քանի մը ճանբայ ու տեղվըտանք պահեցին : Օտարական զօրքն ալ ուրիշներուն պէս տեղ ուզեց և Իտալիա տեղաւորվեցաւ . ասկէ ետև կայսրութիւն չը մնաց , և Հռովմ բարբարոսաց իր վրայ վազելէն կործանեցաւ :



Արևելեան կայսերութեան մէջ  
Յուստինիանոսի թագաւորութիւնը  
երևելի ժամանակ մըն է . չէ թէ իր  
յատկութիւններէն յռնելով , սյլ օ-  
րէնքները ժողվել տալով գիրք մը շի-  
նելէն , և Քելիսարիոսի ու Ներսեսի  
յաղթութիւններէն : Այս գիրքը շատ  
օգտաւոր կ'ըլլար , թէ որ Յուստինի-  
անոս այն ժամանակը ինչ կայ ինչ չը-  
կայ չը ժողվելով հակասութիւններն  
ու անյարմար բաները զատել տար : Ե-  
ղածին նայելով կարգի գնել ու պէտք  
եղածը նորէն շինելու էր՝ քան թէ ան-  
գիէն ասդիէն ժողվել , ան ատենը  
կարգաւորեալ բան մը կ'ըլլար , և ետքն  
ալ կը դործածվէր : Բայց հիմա անանկ  
գիրք մըն է որ ամեն ատեն մարդուն  
միտքը կը շփոթէ որ աղէկ օրէնքի գիրք  
մը պէտք չէ որ մեկնութեան կարօտ ըլ-  
լայ , սյլ պարզ . այն օրէնքները որ  
շատ մը մեկնութիւնով կը հասկըցվին  
ես անոնց վստահութիւն չունիմ :

Այն ժամանակները Յունաց կայ-  
սերութեան կործանումը կը պատրաս-  
տըվէր . Արաբացոց երկրի մէջ լուռ և  
մունջ երևելի մարդ մը կը պատրաս-

աբվէր, որ աշխարհի դէմքը փոխող-  
 ներէն մէկն էր: Մէհմէտը իր իշխանու-  
 թիւնը տեղաւորցնելու համար, գը-  
 լուխը ժողվելու ազգը ինչ է ինչ չէ ան  
 օղէկ հասկըցաւ. իր կրօնքին օրէնքը  
 միանգամայն քաղաքական օրէնք էր:  
 Անանկ հեշտալի վարդապետութիւն մը  
 քարոզէց, որ ժողովուրդը կատարեալ  
 հնազանդութեան պարտաւորեց: Քա-  
 ղաքականութեան ուժը՝ դելադրած մո-  
 լեզնութեանը նպաստելով քիչ ժամա-  
 նակի մէջ այն մեծ երկիրը իրեն հնազան-  
 դեցուց: Շատ մը ժամանակ ասոր յա-  
 ջորդներուն բան մը չը կրցաւ դիմակա-  
 լել: Առանց քաղաքական պատերազմի  
 որ ասոնց մէջ բաժանում ձգէց Աոս-  
 տանդնուպօլսի կործանումը չէր երկըն-  
 նար: Մահմէտական կրօնքը կայսե-  
 րութիւնը բոլորովին չը կործանած փո-  
 փոխութեան մը պատճառ եղաւ, որ  
 այս պատճառը նոր կայսերութիւննե-  
 րուն ազդեցութիւն ունեցաւ, որ է  
 Լատինացոց Աոստանդնուպօլս տեղա-  
 ւորվիլը, այս նշանաւոր բան է: Խա-  
 չակիր զօրքերուն պանդխտութենէ ե-  
 տե այս կայսրութիւնը հաստատովե-  
 ցաւ:

Սուրբ երկիրը Արարացոց իշխանութեան տակ էր . Եւրոպայի ջերմեռանդութիւնը մէկէն մը անանկ կարծեց որ Յիսուսի դերեզմանը այս իշխանութենէն ազատելը մեզաց թողութիւն գտնալու միջոց մըն է : Բայր Եւրոպա պատերազմի մէջ էր . պատերազմի գրգռելը անոնց կիրքը տածել էր . Եւրոպա բարեպաշտ էր և այս նըպատակը հրապուրիչ բան մը ըլլալով անհամար խումբեր խաչակիր եղան :

Մեր հոս խաչակիրներուն խօսքը ընելնիս Յունաց կայսերութեան հետ յարաբերութիւն ունենալուն համար է , խաչակիրներուն ուղարկելէն Յունաց կայսերութիւնը որչափ որ օգուտ ունենար , այնչափ զօրաց բազմութիւնը իր կառավարութեան մէջ լեցունելը բնաւ երբէք թագաւորի մը քաղաքականութեան չէր յարմարեր : Յունաց կայսերները տկար ու վեհերոտ ըլլալով խաչակիրներուն դիմանալկ'ողդէին և աս ալ իրենց շարութենէն ու խարդախութենէն առաջ եկած երևեցաւ : Յունաց ու արևմտեան ժողովուրդին մէջ «խը շատցաւ . և կոս-

ասանդնուպօլսոյ վրայ խորմա մը խաչա-  
 կիր ելաւ : Յաջողութիւն գտնալնուն  
 տարակոյս չը կար , բայց երկար ժամա-  
 նակ չը կրցին տիրել , Յոյնք կրկին ի-  
 բենց մայրաքաղաքնուն տէր եղան ,  
 բայց Լատիններուն Աոստանդնուպօլիս  
 նստելինն կայսերութեան տեւողու-  
 թեանը իրապէս ազդեցութիւն մը ու-  
 նեցաւ : Յունացմէ աւելի մարդեալ ու  
 կրթեալ ըլլալով , Օսմանցոց յար-  
 ձակմանը դէմ ամբարտակ մը եղան որ  
 տակն ու վրայ ընելը դիւրին չէր : Յու-  
 նաց քաջութիւնը չէր . բայց ջերմեան-  
 դութեան աստուածազդեցութիւնն էր  
 որ արեւմուտքէն արեւելք դիմեց , և  
 Յունաց քանի մը տարի տկար կեցու-  
 թիւն մը տրվաւ : Չուրի մէջ երոզ  
 կրակը որ հնարեցին ասոնց քաջու-  
 թեանը օգնեց և մեծ նպաստ մը եղաւ :  
 Լատիններուն Աոստանդնուպօլիս նըս-  
 տելը վաճառականութեան վրայ դէշ  
 ազդեցութիւն մը ունեցաւ , որ այս քա-  
 ղաքը անոր յարդը քիչ մը ճանչցեր էր .  
 Եւրոպայի ասպետները թուրքն ունի-  
 ղակէն ուրիշ բան չէին ճանչնար : Ի-  
 բենց սլատերաղմները թող չէին տար

որ իրենց երկիրները վաճառականու-  
թիւնը ծաղկեցընէին : Անոր համար  
վաճառականութիւնը Իտալիա անցաւ :  
Նաւարիութիւնը ինկած էր , և հաղոր-  
դակցութեան պակասութիւնը պիտի ու-  
չընչացընէր . և ետքէն վրայ չը կրցաւ  
գալ , որովհետև տկարութիւնը աղ-  
քատութեան հետ մէկ տեղ վազեց :  
Աղղիներուն չորս կողմը նաւով պաշտ-  
պանեալ չէր , բնակիչները քաշված էին  
Օսմանցոց վախը բոլորովին ամբողջե-  
րը քշեց :

Յունաց վէճերը չը հատաւ , այս-  
չափ դժբաղդութիւնները անոնք չը  
կրցաւ լուսաւորել : Այս վէճերուն  
առջի արդիւնքը սա եղաւ որ կեղծաւ  
ւորեալ բարեպաշտութիւն մը տիրել  
տրվաւ որ կայսերութիւնը այլափոխեց ,  
այն ժամանակը հասկըցվեցաւ որ վի-  
ճարանութիւնը Յոյները այլափոխեց և  
կրօնքի կոյր նախանձաւորութիւնը Ա-  
բաբացիք առաջ տարաւ : Քաղաքա-  
կան ու կրօնական իշխանութեան ան-  
ընդհատ մէկըմէկու խառնըլիլը երկու-  
քին ալ վնաս տրվաւ . և այս կռիւնե-  
րուն մէջը թշնամին միշտ առաջ քա-

լեց : Որովհետև մայրաքաղաքի մէջ  
հանդարտութիւն տիրել տալու ջանքը  
գաւառներու վրայ խնամք տանելու  
ժամանակ չէր իտար :

Օսմանցիները վտարանդի թա-  
թարներն էին որ Մահմետական ե-  
ղան ու Յունաց ահեղ պատերազմ  
կ'ընէին . ինքզինքնին օպերասան  
հարստահարութեան տալով կուղա-  
յին երկիրը կ'աւրէին , և Յունաց կա-  
նայքը կը յափշտակէին : Աերջապէս  
Օսմանցիի անունով Մահմետական-  
ները բոլոր Ասիա տիրեցին : Յոյնք  
Եւրոպայի կողմը անցան , բայց թըլ-  
ուառութիւննին խելքերնին գլուխնին  
չը բերաւ : Առանց քաջասրտութեան ,  
հարստութիւննին կորսուցած ըլլալով ,  
կարելի էր որ Պայագլիաի հնազանդե-  
ին , թէ որ այս իշխանը թաթարներու  
դէմ պատերազմ ունենալով ըզբազ-  
եալ չըլար : Երկրորդ Մէհմետի ժա-  
մանակ Կոստանդնուպօլիս առնրվե-  
ցաւ : Կոստանդին Դրագոսէ որ աղէկ  
բաղդի արժանաւոր մարդ մըն էր՝ Յու-  
նաց վերջին կայսրը եղաւ , թէ որ եր-  
կիր շունեցող քաղաքի մը կայսերու-

Թեան անունը տրվել արժանի ըլլար :  
 Կայսերութիւնը շատոնց իրապէս կոր-  
 ծանեալ էր, Կոստանդնուպօլիս առնը-  
 ված ժամանակը մէկ անուն մը ունէր,  
 որ հին ժամանակի յիշատակին մէջ պայ-  
 ծառութիւնը մնացեր էր :

### ԳԼՈՒԽ Է .

Նոր կարաւարանի մասին :

Հռովմայեցոց կայսերութիւնը կոր-  
 ծանելէն ետե Գաղղիա և արեւմտեան  
 ուրիշ կողմերը տեղաւորող ազգերը  
 քննելը անօգուտ աշխատութիւն մը  
 չէ : Բայց մեծ դէպքերը քննելու ետե-  
 ւէ ըլլալով իս հետաքրքրութեան պի-  
 տանի մանրամասն բաներու մէջ չը  
 մտնալով օգտաւոր խրատները նայինք :  
 Այս աշխարհակալներուն բարքը շատ  
 մէկզմէկու նմանելով, Ֆրանկաց հա-

մար ինչ զուրցենք նէ՛ ամենը հասկըց-  
վելու չափ զուրցած կ'ըլանք :

Ֆրանկաց օրհուսորվելը :

Ուրիշ աշխարհականներու պէս  
Ֆրանկները մէկէն՝ի մէկ մեծ երկիր մը  
չը յափշտակեցին , ոտն առ ոտ բալե-  
ցին . անտարակոյս իշխանութիւննին  
հաստատուն՝ ըլլալուն պատճառը այս  
է : Քաղաքային բարքը ու իրենց բարքին  
համեմատութիւնը մէկզմէկու խառնը-  
վելու կընպաստէր , յաղթող ու յաղ-  
թեալէ բաղկացեալ ազգ մը եղան :  
Գաղղիցոց պէս կամ քաղաքացի կամ  
ծառայ էին : Ծառան իր տիրոջը հա-  
մար կ'աշխատէր , բայց ազգէն չէր  
սեպվեր : Այս սովորութիւնը հիւսի-  
սային ազգերուն ամենուն մէջը կար .  
ազգային գործքերը Գաղղիացոց ընդ-  
հանուր ժողովին մէջ կը տեսնուէր :  
Այս ժողովը Ֆրանկաց մէջն ալ կար :  
Երկու ազգին մէջ ալ մէկզմէկու խառ-



նըվելու և մեկ ըլլալու կատարեալ ըս-  
 կըզբունք կը գտնըվէր : Հին կարգադ-  
 րութիւնը չաւրելով Փռանկաց մեծերը  
 Հռովմայեցոց դաւառները իրենց կը  
 հնազանդեցունէին՝ որ կայսերութեան  
 տկարութիւնը պաշտպանելու կարո-  
 ղութիւն չունէր : Ընդհանուր օրէնքը  
 Հռովմայեցոց , Գաղղիացոց , և Ֆր-  
 անկաց օրէնքներէն բաղկացեալ էր :  
 Բայց հակասութիւնները զատուած էր :  
 Ամենէն հաշակաւորը Սալիկ անունով  
 Գաղղիացոց օրէնքն էր : Անիրաւու-  
 թեան , նախատինքի և մարդասպա-  
 նութեան վրայ նայելով կը կարգադ-  
 րըվէր և գերի կ'առնըվէր : Միշտ զին-  
 ուորեալ և ուտելու ու խմելու յօժա-  
 րութիւն ունեցող ազգին բերանը այս  
 օրէնքները յաճախակի կը կրկնըվէր :  
 Օրէնքը ասոնք խստիւ չէր պատժեր :  
 Քաջութիւնը ու ազատութիւնը ազգա-  
 յին բնաւորութիւն եղած ըլլալով ա-  
 սոնց վերաբերեալ բաները չէր պատժը-  
 վէր , մեղկութիւն ու ծուլութիւնը ա-  
 ւելի պատիժի արժանի կը սեպվէր ,  
 քան թէ մարդասպանութիւնը : Արիւնի  
 գին կ'առնըվէր , կրօնքն ալ օրէնքին

Համեմատելու համար [Թոյլտուութիւն կ'ընէր : Առջի սովորութիւնը բիշ մը ատեն գնաց , բայց [Թագաւորաց զակըններուն մէջ եղած բաժանումը այնչափ քաղաքական պատերազմներ հանեց որ իշխանութիւնը տկարացաւ , և շատ մարդիկ իրենց և յաջորդներուն ունեցած իրաւունքնին ապահովեցնելու համար ինքնիշխանութեան աշխատեցան : Արտոյտի իշխանութիւնը ատեն մը քշեց , բայց երկրի ժառանգութիւնները իրաւունքները և եկամուտները Շառլըշովի ժամանակ հաստատվեցաւ , և [Թագաւորական իշխանութիւնը ոչընչացաւ :

Պալատական նախարարները Գըլտովիսի տկար յաջորդներու իշխանութեան ժամանակը [Թագաւորական իշխանութիւնը առին , այս իշխանութիւնը իրենց հաւսարներուն յատկացունել կ'ուզէին , այսչափ ցնցիւններու մէջ չէր հաստատուէր , ազգին կը մնտտէր : Շուտ ու ուշ կամ անունով [Թագաւոր ըլլողը կամ իրապէս [Թագաւորութիւնը առնողը վրայ պիտի ելլէր : Դարձուածքները այս վախճանը

Հասցուցին որ Կարողութի մեծ Հայրերուն փառքը այն աստիճանը բարձրացաւ, որ յաջորդող անձանօթ ինքնակալները անտեսանելի կերպով մը ատուանուն ինկան : Սարակինոսներուն յարձակումը պետութեան փոխվելնուն պատրաստութեանը առաջին պատճառը եղաւ :



### Կարողութի :

Կարողութի նոր ժամանակի մէջ գրանդակած իշխաններուն մեծն է : Աս իշխանը կրօնաւորաց չափազանց կարողութիւնը ինչ մոլորութիւններ հանելը դատեց, և նախապաշարեալ դարու մը մէջ առաջը առնելու հնար մը գտնաւ, այսպիսի լուսաւորեալ և հզօր անձի մը բան էր : Ապաստանարանի իրաւունքը և կրօնաւորական ուխտը, շախհաս չըլող յափշտակեալ նորահաս տղոց համար բաց ըլլալը, շար

սովորութիւն մըն էր . բոլորովին ան  
 եռանդը չը մարելով շափաւորեց , ու  
 բովհեաե կրօնքի վերաբերեալ բանե-  
 րու դպշիլ շատ խելացի և կարող մար-  
 դոց անգամ դժար է : Ըրած կարգադ-  
 րութիւնները մեզի կը վկայեն թէ՛ Աս-  
 րոլոս իրաւունք կը ճանչնար , ըստաց-  
 ուածքի յարգը դիտէր , և հպատակաց  
 շատ ու քիչ ազատութիւնը կը հասկը-  
 նար : Իշխանութեան ու ժողովրդեան  
 մէջ տեղ հաստատուն եկամուտքի տէր  
 ըլլողները ասոր օրը չէլան , բայց տը-  
 կար յաջորդներուն ժամանակն էր որ  
 անոր օրէնքները գործածելու կարողու-  
 թիւն չունէին : Իշխաններուն յան-  
 ցանքն է , չէ թէ կարգադրութեանց՝ որ  
 կարգն ու կանոնը հաստատուն չեն մը-  
 նար՝ ուժով ձեռք մը պէտք է որ  
 հարկ եղած հնազանդութեան պար-  
 տաւորէ :

Ասրոլոս քաջ ու շատուոր ազգի  
 մը տէր ըլլալով իր աշխարհակալու-  
 թիւնները մէկ կողմէն հին Հռովմա-  
 յեցոց իշխանութեան մնացորդին , միւս  
 կողմէն անոնց առջի ելած անտառնե-  
 րուն մէջ տարածեց . Հռովմայեցոց

Ժամանակէն 'ի վեր եղած իշխանու-  
 թիւններուն ամենէն մեծը հաստա-  
 տեց . յաղթու-թիւնները այնչափ զար-  
 մանալի չեն՝ քան թէ ըրած կարգադ-  
 րու-թիւնները : Աչալըջու-թիւնը և իր  
 սաստիկ քաջու-թիւնը նոր հպատակնե-  
 րը թող չէր իտար որ այս ահագին  
 մարմինին ներդաշնակու-թիւնը աւ-  
 րեն . բայց շատ չը քչեց , և պատճառն  
 ալ գտնալը դժար չէ : Արեւմտեան կայ-  
 սերու-թեան ախողոսը կարողոսի գլու-  
 խըն էր , և բաժանեալ չէր . իր ըն-  
 դարձակ կառավարու-թիւնները կապող  
 շղթային ծայրերը մինակ իրեն ձեռքը  
 կը վերջանար : Իր յաջորդներուն ժա-  
 մանակը միու-թիւնը աւրըվեցաւ , զատ  
 զատ թագաւորու-թիւնները զաւկընե-  
 րուն եկամուտ եղաւ . կայսերու-թեան  
 ախողոսը իրապէս չը կրնար ըլլալ թէ  
 որ մէկ իշխան մը իր մեծամեծ հպա-  
 տակեալները ձեռքին տակը բովանդա-  
 կելը չը գիանայ որ Աուիլըպօները  
 այն իշխանը չէր :

Կարողոսի Իսաալիայի վրայ ըրած  
 յաղթու-թիւնը , և արեւմտեան կայսե-  
 րու-թեան ախողոսը Գերմանիային

կայսերութեան ու Իտալիայի իշխանութեան իրաւունք ունիմ ըսել տալու տեղի տրվաւ : Պապերը Վարդուսի Տպատակ էին , և կայսերը անոր իրաւունքին ժառանգաւոր ենք ըսելով , իրենք զիրենք նոյն իշխանութեան արժան սեպեցին : Այս ուրիշ բան չէ՝ բառին ծուռ գործածվին է . Գերմանիայի կայսրը Գերմանացոց մէջ եղած մասնաւոր իշխանութիւններուն նախագահըն էր , չէ թէ Վարդուսի պէս արեւմտեան կայսր . այս իշխանը բոլոր կարողութիւնը իր ձեռքին մէջ կը բովանդակէր , ետքն ալ կայսերները իրենց ժառանգ մնացած կառավարութեանց վրայ կը թագաւորէին . և մինակ նախապատուութեան իրաւունք ունէին : Արեւմտեան կայսերութիւնը ճշմարտապէս մինչ 'ի Վարդուսի մահը քշեց , Գերմանացոց կայսրութիւնը կոսորակի պէս բան մըն է : Արեւմտեան յաղթութիւնը շուտով եղաւ , և մինակ Վարդուսի հանճարն ըրաւ : Աշխարհակալին իր ողջութեանը անգամ ընդդիմակալութիւններ կ'ըլլար , տհաճութիւնը Գնչելու համար միշտ անոր

ձեռքին պէս հզօր ձեռք մը պէտք է :  
 Յաղթեալներուն թագաւորները և  
 մեծամեծները ժամանակաւոր հնազան-  
 դութիւն մըն է կը սեպէին, որ ուժի  
 չը կրցան դիմանալ և աղատութեան  
 ատենը դալուէն կ'ըսպատէին . արեւը-  
 տեան կայսերութեան կործանմանը  
 պատճառները ահա ասոնք եղան :

Կարողութի յաջորդներու ժամանա-  
 կը վիճակական դրութիւնը հաստատ-  
 վեցաւ . այն ժամանակները ամեն մէկ  
 վիճակ մէյմէկ մարդու ձեռք էր՝ և ա-  
 սոնք անկախ էին, որովհետեւ ձեռվընին  
 եղած երկիրները կամ առաջուց սլար-  
 գե տրված էր իրենց՝ կամ իրենք յա-  
 փշտակեր էին . դրեթէ ամեն կայսե-  
 րութիւն այն ատենները մի օրինակ է-  
 ին, անոր համար զատ զատ ամեն ազ-  
 գի քննութեան կարօտութիւն չու-  
 նինք . բայց մեծ պատճառները որ երե-  
 ւելի վախճաններու հասուցին՝ անոնք  
 քննելը հարկաւոր է, որովհետեւ ընդ-  
 հանուր պատմութեան կը վերաբերի .  
 վերջապէս Եւրոպայի կառավարու-  
 թիւնները մէյմը աչքէ անցունենք նէ՝  
 կը տեսնանք որ պատմութիւնը մի և

նոյն ըսկիզբներէ սնունդ առած է . այս ըսկիզբները սալոնք են . վիճակական դրութիւն , կրօնական իշխանութեանը չարաչար գործածվիլը , Ապաւերուն իշխանութիւնը , խաչակիրները , կրօնական պատերազմները , և բրօթէսթանութեան ազդեցութիւնը , գրականութեան և արհեստից ծաղկիլը որ բարքը անուշցուց , վերջապէս փիլիսոփայութիւնը որ նոր յեղափոխութեանց պատճառ եղաւ :



### Վիճակական իշխանութիւն :

Իշխանները հնազանդեցընելու կարողութիւն չունեցող տերերնուն ծառայութիւն ընելէն հոգնած էին , և ահամայ կը կատարէին : Շատըշովատոնք գոհ ընելու համար կոմսութիւններու եկամուտները ժառանգութիւնըրաւ որ մինչև այն ժամանակ միայն եկամուտից պտուղը կը վայելէին : Այն



ատենը հին կառավարութիւնը բողո-  
րովին անյայտ եղաւ, և վիճակական  
իշխանութիւնը ծագեցաւ: Այս շնոր-  
հէն ետև անիշխանութիւնը տիրեց,  
Թագաւորները իրենց պէտք եղած ըս-  
տակն ու դօրքը քան զիրենք հզօր ծա-  
ռաներնուն կ'ըսպատէին: Մէջերնին  
միութիւն չը կար, Թագաւորներնուն  
վախը երբեմն ասոնք կը միացունէր:  
Ասոնք պալատի հնազանդելու հրաւի-  
րելը անօգուտ էր. դիմակալելու կա-  
րողութիւն ունէին, մի թէ՛ պարտա-  
կանութիւնը կը սէպէին: Արողոսի  
ժամանակի ուղարկըված մարդիկը որ օ-  
րինաց հնազանդութիւն ընել արվին,  
այն կարողութիւննին չը մնաց: Պա-  
րապ տեղը Շաւրշով սյս պաշտօնը  
եպիսկոպոսաց յանձնեց, անոնց իշխա-  
նութիւնը չընդունեցին, երբ աղէկ մը  
ժողովուրդը իրենց հնազանդեցուցին:

Մինակ կամակորութիւնը բոլոր ի-  
րաւունքը սահմանեց: Ամեն իշխան ա-  
ռանց բողոքի ինքնադիմարար դատաս-  
տան կը տեսնէին: Այս ճանրան բնա-  
կանաբար հետևութիւն մը բերաւ որ  
միութիւնը կը պատրաստըվէր և ժա-

մանակէ մը հետէ կառավարութեան տակ պիտի իյնային : Մինչև այն ժամանակը ազգերը իրենց հին օրէնքներովը զատուած էին : Ետքը օրէնքի պակասութիւնը իրենց ըսկիզբը ուրկէ ըլլալը մոռցուց, Քաղղիացիք, Հռովմայեցիք և Քռանկ մէկ կերպ ծառայութեան տակ ինկան : Իշխանը ինչ ուզեր նէ՝ բաղաբական իրաւունքը այն էր, ետքը ժամանակը սովորութիւնը առաջ բերաւ, և վիճակականութիւնը մինչև այս ժամանակները եկաւ : Մասնաւորաց բռնութիւնը անիշխանութիւնը փութացուց . Շառլը լը Կռօն որ Կարոլոսի ընդարձակ կայսրութիւնը իրեն յատկացուցեր էր, իշխանութիւնը իր նախորդներուն չափալ չը կրցաւ բանեցընել, և բանտը մեռաւ : Թագաւորական իրաւունքը բոլորովին իշխանաց ձեռքը անցեր էր, պետութեանց իրաւունքի անունով կը դործածուէր :

Միայն բան մը միապետութիւնը կրցաւ ազատել . հարկատուութիւնը սովորութիւն եղեալ էր . թագաւորներուն փառասիրութիւնը՝ չէ թէ ոխը, իշխանները կը կառավարէին . հարկ կու-

տային , որովհետև սորված էին . չէին  
 հնազանդեր , որովհետև չէին պատ-  
 ժրվեր : Մեծ իշխանները [Թագաւորի  
 աստիճանի հասած էին . [Թագաւորնե-  
 րը անոնցմէ քիչ կարողութիւն ունե-  
 ին , և անոնք մի և նոյն տիտղոսը ու-  
 նենալ կ'ուղէին . մէկ քանին՝ մեծերնին  
 չէին ճանչեր , միւսներն ալ մինակ հարկ  
 կուտային : Այլվածք ունեցողը՝ այն  
 կալվածքը որին իշխանութեանը տակ է  
 նէ , անկէց կախում ունէր : Քնկերու-  
 [Թեան մարմինը կապողը , միայն հարկա-  
 տուութիւնն էր . այս գրութեան ան-  
 տեղութիւնը սա էր՝ որ [Թագաւորը կալ-  
 վածքի մը տէր ըլլար նէ , ծառանե-  
 րուն ծառայ ըլլալ պէտք էր :

Թէ որ անիշխանութիւնը գրու-  
 [Թեան կարգ անցունել պէտք ըլլայ ,  
 վիճակական գրութիւնը հերիք է . այս  
 գրութիւնը կարողութեան կապն էր՝ և  
 հիմը ժողովուրդին գերութիւնն էր ,  
 որ կարողութիւնը անոնցմով կը բաղ-  
 կանար : Ամենէն պզտիկ բռնաւոր պա-  
 հանջող էր . ծառային մէկը պակսեր նէ՝  
 իր վիճակին փնաս էր , սնոր համար ծա-  
 ռան եղած տեղէն չէր կրնար զատվել :

Ինչ նեղութիւններ տալերնին կը հասկըցվի, այս իշխաններուն ըրած բարբարոսութիւնը մէկզմէկու գէմ պատերազմել կուտար: Ասպետութիւնը գէշութեան առաջքը առնելու համար անատենը պէտք էր: Այս աղնիւ բերդակալներուն մէկ քանին, պատիւ առնելու բաղձանքը շատ քաջալերեց: Բայտաններուն պատմութիւնը առասպել գրողները աւրած են. բայց մենք հրաշալի բաներ ընէնին կը տեսնանք: Այս անընդհատ զարնըվիլը, մեծ յանցանքներու քով երևելի առաքինութիւններ շարեցին: Բայց վիճակական կառավարութիւնը հաւնելու շափ չեն բաւեր. մինակ այն հին ժամանակի եղած գէշութիւնները՝ որ հասարակութիւնը կը քաշէր, այն գէշութեանց մէջ երբեմն երևելի անուններ կան, որ իրենց մասնաւոր առաքինութեամբը մեզ կը մըխիթարեն:



Պատգամական իշխանութիւնն :



Պատգամական իշխանութեան վրայ  
չը խօսած, համառօտաբար քրիստոնէ-  
ութեան ընթացքը նկարագրենք . ո-  
րուն ասկէ առաջ ազդեցութիւնը ցը-  
ցուցինք : Թէ որ կրօնքը սորվեցընո-  
ղը այն սուրբ գիրքն է՝ որ անկէ առաջ  
և անկէ ետքը այնպիսի կատարեալ բա-  
րոյականութեան գիրք մը ոչ տեսնը-  
ված է, և ոչ պիտի տեսնըվի . անոր  
մէջը այսքան դէշութիւններ ծագելու  
ամենեւին պատճառ մը տրված չը կայ :  
Որդին Աստուծոյ՝ որ եկաւ իմ թա-  
գաւորութիւնս այս աշխարհի համար  
չէ ըսաւ . չէր ուզեր որ իր փոխանորդը  
աշխարհի թագաւորութեան թագը դը-  
նէ, և թագաւորաշխիչ ըլլայ : Այն որ  
տուք ըզկայսերն՝ կայսեր, և զԱստու-  
ծոյն՝ Աստուծոյ պատուիրեց . կրօնա-  
կան ու քաղաքական իշխանութիւնը

մէկզմէկու խառնել , անոր հրամանին  
 դէմ բան էր : Գծբաղդաբար՝ այս սուրբ  
 կրօնքը՝ Հռովմ տգիտութեան մէջ ին-  
 կած , և Օգոստոսի կայսերութենէ  
 շատ ետքը ճանչցըվեցաւ : Տգիտու-  
 թիւնն ու մոլութիւնը թող չը աը-  
 վաւ որ աղէկ մը հասկընան , շատ մը  
 հերձուածողութիւններ և հերետիկո-  
 սութիւններ ելաւ . միայն մարտիրոսք  
 պայծառացուցին և ճշմարիտ քրիստո-  
 նէութիւնը աշխարհ հրատարակեցին ,  
 ասոնց ժամանակի քրիստոնեաները խո-  
 նարհ ու բարի ըլլալով , բարբի անու-  
 շութիւն ընծայեցին : Բայց երբ Աոս-  
 տանդիանոս՝ քրիստոնէութիւնը աթո-  
 սական փառաց և իշխանութեան բարձ-  
 րացուց , այն փառքը և իշխանութիւնը  
 ամեն աստիճանաւոր անձինք իրենց  
 սեպհականեցին , և այն ատեն՝ անողոր-  
 մութիւնն ու անգթութիւնը տիրեց :  
 Սուրբ Ամբրոսիոսի յանդիմանական  
 նամակը որ քրիստոնեաները Հրէից սի-  
 նակոկան փլցունելուն պատճառաւ  
 թէողոս թագաւորի գրեց , յայտնի  
 ապացոյց մըն է : Հասարակութեան և  
 երբեմն թագաւորաց տգիտութիւնը ,

Աւետարանին քիչ մը տեղերը ծուռ մեկնելը անհամար բարբարոսութիւններ ընել տրվաւ : Պատմութիւնը , մինչև այսօր այս բարբարոսութիւններով լեցված է . մինակ լուսաւորութիւնն ու կրթութիւնը առաջքը առաւ . իրենց կամքը կամ շահասիրութիւնը առաջ տանելու համար , ասանկ ընտիր կրօնքէ պատճառ վնտրուելու աշխատելով ծուռ մեկնութիւններ տալու կը պարտաւորէին . Եգիպտոսութիւնն ու կոչը կիրքը բարի բաները անգամ մարդկային բնութեան գեշութիւն մը հասցունելու կը դործածեն : Եպիսկոպոսները քաղաքական դործքերու մէջ ազգեցութիւն ունենալնուն շատ մը ժամանակ դոհ էին , և աշխարհային իշխանութեան աչք չունէին . ութերորդ դարու մէջ Հռովմի կործանումէն ետև աշխարհային իշխանութեան աչք զարկին : Քաղաքական իշխանութեան անկախութեամբ դործածվիլը , վերջապէս բոլոր իշխանութիւնը վրանին առնելնուն դիւրահաս ոտք մը առնել եղաւ : Իններորդ դարէ 'ի վեր քահանայապետական պալատը իր դո-

առողութիւնն ու ինչ կամքի տէր ըլլալը պարծենալով ցուցուց : Տասներորդ դարէ 'ի վեր պալատը գէշ բարքի մէջ ինկաւ . Գրիգորիոս եօթերորդ՝ սուրբ Պետրոսի աթոռէն այն նախատինքը վերցուց , և ընդհանուր իշխանութիւն մը բանեցընելու համարձակեցաւ : Այս գոռոզ առաջարկութիւնը մետասաներորդ դարէն ըսկըսեց , երեքասաներորդ դարու մէջ Իննովկենաիոս Գ. Պապի ձեռքովը հաստատուեցաւ : Քիչ քիչ Ավինէօն նստելը և հերձուածութիւններ ելլելով Պապին իշխանութիւնը տկարացաւ : Յուլիոս երկրորդ պարսպ տեղը առջի ընդարձակութիւնը տալու աշխատեցաւ , բայց թագաւորները իրենց անկախութիւննին դրտեր եին :

Թագաւորաց անխոհեմութիւնը մէկզմէկ նզովել տալով հաստատութիւն տրվաւ այն իշխանութեանը , և մէկ կողմէն եկեղեցականք կը շատնային : Սրբաբնութեան ժողովը ուղածին պէս բան կը տեսներ , կրօնաւոր պաշտօնեաները շատցան ու ամեն տեղ և ամեն պալատ կը մըտնային կ'ելլէին :



բաղաբական իշխանութեան տարած-  
 վելուն պատճառը ասոնք եղան : Այս-  
 պիսի իշխանութեան հետեւութիւնը  
 շատ հակառակութիւններ հանեց որ  
 ինը դար աշխարհ արիւն թաթախ ը-  
 րաւ : Եկեղեցիին բաց 'ի եօթներորդ  
 դարէն սուրբ Պետրոսի աթոռէն պար-  
 ծանք ըլլալու մէկ քանի հոգի եկեր են :  
 Լէոն Ժ . գրագիտութեան և արհես-  
 տից շատ սէր ունէր . Բենեգիլիտոս  
 ԺԳ . կղեմէս ԺԳ . անանկ Պապեր  
 էին որ հանրական յարգ մը ըստացան .  
 բայց շատերը իր պաշտօննուն անար-  
 ժան էին և սուրբ Աթոռոյն յարգը  
 պղտիկցուցին : Աերջապէս Գերմանիա-  
 յի մէջ բրօթէսթանութեան յառա-  
 ջադիմութիւնը Պապական իշխանու-  
 թիւնը տկարացուց : Արդի լուսաւո-  
 րութիւնը դերագոյն եպիսկոպոսին նս-  
 րէն այն իշխանութիւնը ձեռք ձգելու  
 ջանքը կ'արգիլէ : Այն ժամանակը մէկ  
 մ'ալ չը պիտի տեսնենք որ նզովքը  
 թագաւորաց բոլորին ալ հասնի : Աս-  
 բոլոսի ու Լուսովիկոս ԺԳ . ի մէջ  
 տեղ տասներեք թագաւոր կը տես-  
 նենք որ եկեղեցականաց քննութեան  
 տակը ինկած են :

## Խաչակիրները :

Պատմութեան խրատ քաղելու ժամանակ մըն է՝ խաչակիրներուն ժամանակը . և այս երկու կերպ գիտել պէտք է . մէյմը պատճառներովը , միւսը արգիւնքներովը :

Ջերմեռանդութիւնը սուրբ երկիրը դացողները օրէ օր կը շատցնէր . Պապերն ալ կրօնաւորաց քարոզութեանը և հասարակութեան փափաքին ապաւինելով . Յիսուսի Քրիստոսի գերեզմանը ազատողներուն երկնային օրհնութիւնը կը խոստանային և հեթանոսաց ձեռքը մնալը ամօթ բան է կ'ըսէին : Շատ մը մարդիկ մարտիրոսութեան յուսով , շատն ալ քաջութեան կրակով վառեալ վաղեցին . բայց մեծերը և թագաւորները և եկեղեցականները ուրիշ քաղաքական պատ-

ճառներ ունէին : Իշխաններուն տըված տուրքը իրենց ծանր կուգար . իրենց իշխանութեանը մեաս շուններ , բայց հըպարտութիւններնուն կը գպչէր : Ասանկ հեռու տեղ պատերազմ ըլլալը , միանգամայն փառքի հրապոյրք մը և ազատութեան ճարակ մըն էր : Թագաւորները իրենց հպատակ ըլլող իշխաններուն հետ միշտ պատերազմ ունենալէն ձանձրացեալ , և իրենց մէջը մէկզմէկու հետ եղած կռիւէն զզուեալ , ասոնց սուրբ պատերազմ երթալը շատ կ'ուզէին : Ասոնց պակսիլը թագաւորաց ժամանակ տըվաւ՝ որ իրենց իշխանութիւնը հաստատեն : Բաց 'ի կրօնական պատճառէ , թագաւորները ուզեցին այս պատերազմը . որովհետեւ այս միջոցիս մէջ միապետութիւնը ուժ գտաւ , և քաղաքական խռովութիւնը վերցաւ :

Արօնաւորը խաչակիրները ուրախութեամբ կ'ուզղարկէին , որովհետեւ իրենց ազդեցութեան պտուղն էր , և իշխանութիւննին ընդարձակելու միջոց մըն էր : Զերմեռանդ խաչակիրները ապահովութեամբ կ'երթային , որով-

հետև ով որ ասոնց մէկ բանին դպչէր նէ նդովեալ էր . այս ապահովութիւնը Հռովմի պալատը կը շողոքորթէր , և իշխանութեանը հաստատութիւն կուսար :

Խաչակիրներուն առջի արդիւնքը շատ շանցաւ հասկըցօվեցաւ . սր բաները որ կը գուշակվէր , շուտ մը երեւան ելան : Հասարակութիւնը բոլորովին թագաւորաց կողմը դարձաւ , և կեդրոնական կառավարութիւնը ասոնք միաբանեց . իշխանաց հպատակ ըլլողները տեսան որ թագաւորաց հպատակները իրենցմէ շատ հանդիստ են : Իշխանները մեծութիւն ցուցնելու համար՝ ձեռքերնին եզածը զեղխութեան դրուեցին . կայվածքներնուն շատը ձեռքերնուն ելաւ , բնակիչները ազատ եղան , և ազատութեան նշոյլները երևեցան : Խաչակիրներուն ետ դարձած ատենը իշխանք տկարացեալ էին , բնականաբար անվնաս ու հանդարտ մնացին : Այն ժամանակը թագաւորական իշխանութիւնը մեծցաւ և ճանրան մտաւ : Ժողովուրդը հանդարտութիւն դտաւ և ազատութեան յոյս

ունեցաւ, բայց այսչափ ընդարձակու-  
թիւն չը կարծելեցաւ :

Այս հետեւու թիւնները որ առաջ-  
վընէ չէր գուշակվեր, խաշակիրներուն  
մեծ աղէկուժիւններն եղան : Ազնը-  
ւականու թիւնը այս պանդխտու թիւն-  
ներով տկարացաւ և քիչցաւ, որ շատ  
անգամ կը նորոգվէր. այս ծախքերով  
աղքատացաւ և իր կալվածքը հասարակ  
մարդոց ծախեց, որ վաճառականու թիւ-  
նը խաշակիրներէն ետև ծաղկեցաւ. հա-  
սարակու թիւնը հարստու թիւն ըստա-  
ցաւ : Յետոյ թագաւորները այս ազ-  
նուականու թեան ցնորքէն շահվեցան,  
և ազատ ծառաներ հաստատեցին՝ որ  
ուղղակի թագաւորական իշխանու թե-  
նէ կախում ունէին :

Խաշակիրները Ալէնէտիկոց հետ  
հաղորդակցու թիւն ունենալով, վա-  
ճառականու թիւն սորվեցան, և արե-  
ւելցոց հետ գըտնըվելով գեղխու թեան  
ինկան : Այն ժամանակները տէրու-  
թեանց ուժը մարդու շատու թիւնով  
և պատերազմի մէջ փորձ ունենալով  
կ'ըլար : Հարկը ըստիպեց որ արհեստ  
սորվին, և կառավարու թեան մէջ նոր

ազգեցութիւն մը կը պատրաստուիէր , որ այս ազգեցութիւնը աշխատութեան և հարստութեան վրայ պիտի հաստատուի : Արհեստը երկուքի բաժնը ված էր , զինուորականութիւն , և երկրագործութիւն . ասպեաններու համար դարբին էին . գիւղացիներու համար արօր կը շինէին , գիականք որ բոլոր արհեստը ասանք շէին , բայց այն ժամանակի արհեստը ասանց պէս բաներ էին , իրենց ամենահարկաւոր եղածը կը դործէին :

Այն ժամանակը չէր գուշակիներ որ խաչակիրները , արհեստաւորութեան հոգին արթնցուցին , և այսչափ արհեստից օւ կրթութեան յառաջագիմութեան դուռը բացին , որ ուրիշ բան չէ հասարակութեան մեծ աղէկութիւն մըն է , որ այս աղէկութիւնը աղէկ կառավարութեան հետ հասարակութեան իրաւունքը միարանելով կ'ըլլայ : Հազար կերպ դժարութիւններէն անցնելով , որչափ որ նպատակին կատարելապէս չը հասնուիեցաւ . նէ՛ ամենէն աւելի մօտենալու միջոց գրեթէ այս եղաւ : Ասորվան օրս տեքու-

Թեանց ուժն ու կարողութիւնը ինչ  
 աստիճան ըլլայը և մէկգմէկէ ինչ տար-  
 բերութիւն ունին հասկընալու համար՝  
 վաճառականութեան և արհեստից յա-  
 ռաջաշիմութեանը կը նայվի . որն որ այս  
 երկուքին պատուղը աւելի կը վայելէ ան  
 ամենէն մեծ կը սեպվի : Աղէկ հասկըց-  
 վեցաւ որ բանի մը տեղ գրվելու հա-  
 մար պիտանի ըլլալու է , անոր համար  
 աշխատողները խօսքի տէրեղան , որով-  
 հետե գործն ու հարստութիւնը ա-  
 սոնցմէ էր : Առաջ մէկը կ'աշխատէր  
 միւսը կ'ուռէր , ասօրվան օրս ապրե-  
 լու համար աշխատելու է ուրիշ ճարը  
 չը կայ : ՚՝ յս ժամանակի բաները այս-  
 պէս են , և կառավարութիւններն ալ  
 հզօր և երջանիկ են , չէ թէ շատ հը-  
 պատակ ունենալնուն համար , այլ պի-  
 տանի ըլլողներուն շատութենէն :

Խաչակիրներուն տեսած գործքը  
 հրաշայի է , որչափ որ քննութիւնը  
 նես՝ այնչափ պատճառներ կը գտնես , որ  
 սնկէ 'ի վեր շատ փոփոխութիւններ ը-  
 րին : Արտոլուէն ետքը խառնակու-  
 թիւն կար , այս խառնակութիւնը  
 Ֆրանկները ելած ժամանակը Գաղղի-

այի մէջ կը տեսնուի էր, վիճակական դը-  
րութիւնը սա աղէկութիւնը ըրաւ, որ  
այս խառնիխուռն վիճակին կարդ մը  
աըվաւ. այս դրութիւնը գէշ էր,  
բայց կատարեալ անիշխանութեան ա-  
ռաջը առաւ: Արթութիւնը և լու-  
սաւորութիւնը բանի որ առաջ քայեց  
կարդադրութիւն մտաւ. վիճակական  
դրութիւնը իր այլանդակութենէ մէկ  
մէկ բան կործնեցուց, և բնութիւնը ա-  
մեն բան իր տեղը բերաւ: Ար բանը որ  
զատված էր մէկտեղեցաւ, որ բանը որ  
կործանած էր կանգնեցաւ, որ բանը որ  
ճնշեալ էր ազատեցաւ ու ընդլայնե-  
ցաւ: Ընդհանուր յեղափոխութիւն  
մը եղաւ այն ժամանակէ ՚ի վեր, վա-  
ճառականութիւնը, արհեստը, գրա-  
կանութիւնը, ուսումնականութիւնը,  
ճարտարութիւնը նոր յառաջադիմու-  
թիւններ ըրին:

Չորս մեծ գիւտ յառաջադիմու-  
թիւնը շատ փութացուց: Այս չորս  
գիւտին ազդեցութիւնը որ արհեստից  
ու գիտութեանց և մարդկային իմացա-  
կանութեան ընդարձակութիւն տը-  
վաւ. քաղաքականութեան մէջ ալ ա-



Նանկ ժամանակ մը եղաւ որ պատմու-  
թիւնը պէտք է որ այս երևելի մտաց  
ծնունդները ցուցնէ :

Վառօղի, օրագրո-վեան և  
գր-սո-շայի հետքիւր :

Վառօղի գտնըվիլը զինուորական  
արհեստը բոլորովին փոխեց : Առաջ  
մարդոց ուժաւորութիւնը պատերազ-  
մի մէջ շատ բան կը տեսներ, հիմա  
պատերազմը գիտութեան կարգը ան-  
ցաւ՝ մարդոց ուժը բան չը կրնար տես-  
նել, այս սարսափելի հնարքին զէնքը  
գործածելով կ'ըլլայ . պաշտպանողա-  
կան գրութիւնը ուրիշ կերպի մտաւ :  
Այն բարձր պատերը որ բաղադրները  
կը պահպանէին թնդանօթի ուժի չը  
դիմանալով ինկան ու կործանեցան :  
Այն բերդերը այսուհետեւ ապահով  
պատասպարան չը մնացին : Զինուորա-

կան գիտութեան մէկ մասն ալ տեսա-  
 կան գիտութիւնը եղաւ . իմացակա-  
 նութեան կարողութիւնը ուժաւորու-  
 թեան տեղը բռնեց : Զինուորական  
 կրթութիւնը փոխվեցաւ : Ասպետու-  
 թիւնը և անոր կարգն ու կանոնը վեր-  
 ցաւ և կամաց կամաց այն եռանդը մա-  
 րեցաւ : Զինուորական արհեստը , գը-  
 րագիտութեան յառաջագիմութիւնը  
 տեսնելով՝ ժամանակը սորվիլ ըսկըսան :  
 Մինչև այն ժամանակ վանքերը որչափ  
 գիտութիւն կար նէ , դպրոցները՝ այն  
 դաս կուտային : Թագաւորները այս  
 արհեստի մէջ յառաջադէմ ըլլողնե-  
 րուն պատիւ տալովնին՝ բազմութիւնը  
 այս ճանքուն հետեւեցաւ , և ամեն կող-  
 մէն լուսաւորութիւն ծագեցաւ :

Միտքերնին մէկզմէկու հասկըղը-  
 նելու համար միջոց մը կը փնտրուէին որ  
 ձեռագիրէն դիւրին ըլլայ : Տպագրու-  
 թեան գիւտը փափաքնին լեցուց , և  
 իմացականութեան նոր ուժ մը տրվաւ :  
 Տպագրութեան յառաջագիմութիւնը  
 ըսքանչելի է : Այսուհետև խորհրդա-  
 ծութիւն մը չը կորսըվեր , գիւտ մը չը  
 աչընչանար : Եւրոպայի մէկ կողմէն

միւս ծայրը գաղափարները կը հաղորդակցին և մինչև Ամերիգա կը հասնին և բոլոր երկրագունտին վրայ կ'ընդարձակին : Որ բանը որ մէկը չը կրնար ծաղիկցընել, մէկ ուրիշին խելքը աղէկ հասնելով առաջ տանելու միջոց մը կը գտնէ : Ամեն կողմ անհամբերութիւն մը կայ որ ամեն բանի հասնին, և մինչև այն ժամանակ անկարելի երեցածը կարևորի կարգ անցունեն : Լատիներէն լեզուն ընդհանուր եղաւ և մասնաւորապէս այսօրվան օրս ամեն գիտնական կը հասկընայ, և այս գրգիռին դիւրութիւն տրվաւ, այս մեռեալ լեզուն ընդհանուր ըլլալուն աշխատեցան, առջի տպագրեալ Լատիներէն գիրքը այնչափ շուտ տարածվեցաւ, որ կենդանի լեզուով անկարելի էր այն արագութեամբ ամեն կողմ ցրուիլը . յիշաւ տպագրութիւնը ճշմարտութենէ աւելի մոլորութիւններ ալ տարածեց, բայց այս մոլորութիւնները պատճառ եղան որ ճշմարտութեան յարգը քննութեամբ ճանչցըվեցաւ և ազդեցութիւնը եւելցուց : Ամեն մարդ նոր փոփոխութիւն մը կը գտնէր իր գաղափարներուն մէջ,

և այս գիւտին մարդկային ընկերութեան մէջ ըրած ազդեցութեանը կը զարմանար : Ուր որ անկարգութիւն կար , կարգաւորեց . և մարդոց իրաւունքն ու պարտքը ճանչցուց :

Ուրիշ պարզ գիւտ մը որ բան մը չէր երևար և գործածելու ու պիտանի ընելու այնչափ ժամանակ անցնելուն մարդ կը զարմանայ , մարդկային ազգին մեծ կարողութիւն տրվաւ և մեծ մեծ հետևութիւններ ունեցաւ : Հին փիլիսոփաները մադնիսի զօրութիւնը պատմը ելին , բայց պիտանի բան մը ըլլալը չէին հասկըցեր : Վարչ հետքերութեան առարկայ մէն է մադնիսի դէպ 'ի հիւսիս դառնալը : Փորձը և գիտութիւնը նաւաւարութեան ամենահարկաւոր գործիք մը ըրաւ : Բօրթուրէզները աս դանալով մինչև Գլուխ Բարեյուսոյ գացին : Մինչև այն ժամանակ վախոտ նաւաւարները ծովըզը աչքերնուն առջևէն չը դատելով և շատ վտանգի հանդիպելով նաւաւարութիւն կ'ընէին : Տկար գործիք մը ճանրանին բացաւ , ալիքը բանի տեղ չեն դներ , ծովը մեծ շերտաւոր ամեն կողմ կը պտըտին : Այն

աղգերը որ Ովկիանոսէ անդին մինակ  
 կ'ապրէին, երկիրներ, կղզիներ որ ծո-  
 վերու մէջ տեղ էին, և որչափ մեծ խելք  
 ըլլաւ, ասոնք մէկ տեղ բերելու միջոց չը  
 կրնար գտնալ, կտոր մը մագնիսը ա-  
 մենը միաւորեց: Ամեն աղգի գիւտը,  
 արհեստը և գործքը ընդհանուրէն ե-  
 դաւ: աստեղարաշխուժիւնը փուտու-  
 լային գիւտին հետ միանայով նաւա-  
 վարութիւնը կատարելագործեց. և աս  
 արհեստը հանձարեղ մարդոց ձեռքո-  
 վը աշխարհիս շատ աղէկութիւնը բրաւ-  
 երկար ճանապարհորդութիւն ընելու  
 համար ամուր ու հաստատուն նաւեր  
 պէտք էր: Հիւսիսային անտառներու  
 մէջ ծառեր փնտռեցին, և Նորվեժիայի  
 ծովը բերաւ այն հաստատուն նաւե-  
 րուն պէտք եղած ծառերը որ այն նա-  
 ւերսլ նոր աշխարհ մը գտնելէցաւ:

յամբ արեւ ժամայինն որ զայն  
 ան զո զմեզնի, զմեզնի, զմեզնի

## Երեւոյ Գործերը :

Բորթուքէզները և Հոլանտացի-  
 ները փուսուլային առջի պտուղը կը  
 վայելէին : Հնդկաստան իրենց կարո-  
 ղութեանը և հետաքրքրութեանը տե-  
 սարան մը եղեր էր, ամեն օր նորանոր  
 յաղթութիւններ կ'ընէին : Մէյ մ'ալ  
 մեծն Գոլոմպոս երեւեցաւ, Հնդկա-  
 տանէ անդին նոր աշխարհ մը ըլլալը աղէկ  
 գիտէր, նաև ո զեց որ ծովերը անցնի  
 ու երթայ գտնայ : Թագաւորներուն  
 շատը այս առաջարկութիւնը չընդու-  
 նեցին, Գոլոմպոս էջիտարէթի և  
 Ֆերտինանտի խօսք տըվաւ որ գտած  
 աշխարհը ասոնց պիտի ըլլայ : Վեր-  
 շապէս ասոնք մտիկ ըրին, վստահ չըլ-  
 լալով երեք հին նաւ տըվին, շատ չան-  
 ցաւ խօսքին տէր եղաւ, Ամերիգայի  
 գեղեցիկ կղզիները գանըվեցաւ, զեղ-  
 խութեան և աղահուսութեան նոր սնունդ  
 մը եղան, առջի բերանը յաղթու-

Թեան պտուղը այս եղաւ որ , Գոլում-  
պոս այն նպատակը չուներ , այս երե-  
ւելի անձը աշխատութեան փոխարէն  
ապերախտութիւն գտաւ , գոած տե-  
ղերը երջանկութեան մէջ տեսնալ կ'ու-  
զէր , յաջորդները շատ շանցաւ բոլոր  
հարստութիւնը կողոպտեցին : Ոսկին  
որ հեղեղի պէս խլրոպա կը վազէր շատ  
մը պիտոյք եւելցուց , և այս պիտոյ-  
քը արհեստաւորութեան գրգիռ մը ե-  
ղաւ ըստանեօյներէն ետեւ ուրիշ ազ-  
գերը առին որ առջի յաղեօյները բար-  
բարստութեամբ բնակիչները ջարդու-  
բուրդ հանելով մարդ շէին թողեր .  
Մեղիտայիք հոն յաջողութիւն գտան .  
վերջը գաղթականաց մէջ բաժանում  
մատու որ այս բաժանումին մեծ հետե-  
ւութիւնները հիմա պիտի տեսնենք :

Ամերիգայի գոնըվիլը երկու կերպ  
ազդեցութիւն ունեցաւ կրնանք ըսել .  
բայց ամեն ազդ ասոր վրայ կերպ կերպ  
կը մտածէ , վաճառականութեան վրայ  
ունեցած ազդեցութիւնը ամեն օր կը  
տեսնուի , գաղթական ուղարկելու հա-  
մար և քաղաքականութեան վրայ եղած  
ազդեցութիւնը ամեն մէկ կառավարու-

Թեան ընթացքին նայելով մէջմէկ կերպ  
է : Գաղթական ուղարկելը Անգղիան  
հարստացուց : Ըսպանիան կործանեց :  
Ըսպանեօյները անհոգ ըլլալով , Ամե-  
րիկան հարստութեան անսպասելի  
հանք մը կարծեցին : մեզի այսուհետե  
բան մը պէտք չէ ըսին , և շաշխատե-  
ցան : Վաճառականութիւն չը կար , աշ-  
խատելու բան ու գործ , էր գանուեր ,  
բնակիչները օրէ օր պահսեցան և երկի-  
րը անմար , ի մնաց : Ըսպանեօյները չը  
գիտէին որ ոսկին առուաուրի մէջ գոր-  
ծածելու նշան մըն է , ուրիշ բան չէ :  
Մարդուս ամենահարկաւոր պիտոյքը  
երկրագործութիւնն ու արհեստը կրնայ  
հոգալ : Աւրիշ ազգերու կարօս եղան  
և իրենց պէտք եղածը շատ սուղ գի-  
նով կ'առնէին , այս ճամբուն վերջը ուր  
կը տանի՛նէ Ըսպանեօյները հոն հասան  
հանքերէն ելած ոսկին ուրիշ ազգաց  
ձեռքը անցաւ , և իրենք մնացին անար-  
ծաթ , անգործ և անպիտան :

Անգղիացիները ընդհակառակն ի-  
րենց իշխանութեանը տակ եղած եր-  
կիրներու մէջ ինչ ելլեր նէ՛ անոնցմով  
դեղեցիկ բաներ կը շինէին , Եւրոպա



կը լեցունէին ու սուղ գինով կը ծախէին, միշտ բնակիչներուն աշխատութիւն կը գանձէին, և ապրելու միջոցները կը գիւրացընէին, ամեն մարդ իր ապրուստը գանձելու ապահովութիւն ունէր, և ժողովուրդը օրէ օր կը շատնար : Այս երկու դրութեան տարբերութիւնը Ամերիգայի հետ առուստը ընող ուրիշ ազգաց վրայ ալ կրնանք գանձել, բայց մեզի պէտք եղածին չափ կ'իմացունէ որ բուն հարստութիւնը ինչով կ'ըլլայ և կառավարութիւնը ժողովուրդը ինչ կերպով վարելու է : Անգղիայի կառավարութիւնը իր կարողութիւնը ազգին հարստութեանը վրայ հիմներ է և յաջողութիւն դտեր է : Քսպանիայի կառավարութիւնը ժողովուրդին ուրիշ ազգաց հետ ընելիք հաշորդակցութիւնը չընդարձակեց, գանձին հարստութիւնը իրեն ուժ սեպեց, ազգին հարստութիւնը բանի տեղ չը դրաւ կարողութիւնն ու ուժը բոլորովին փճացուց : Իր գաղթականներուն աղէկ կառավարութեան մը տակ չըլլալը շատ դէշութիւն բերաւ, և ասոնցմէ առած ոսկին աղէկ կառա-

վարութեան տակ ըլլող ուրիշ երկիրները հարստացուց :

Այս չորս գիւտերը որ կերպ նըկատվի նէ՝ Եւրոպայի մէջ ըսքանչեւի փոփոխութիւններ ընեւնին կը տեսնուի : Գիտութիւնները անանկ առաջ տարին որ մէյ մ'ալ անհնար է որ կորընչին աշխարհէ . կրթութիւնը արհեստից , գիտութեանց , և վաճառականութեան հետ կապուած ըլլալով ամեն կառավարութեան թափանցեց որ ամեն օր նորանոր աղէ՛լութիւններ կը տեսնանք :



### ԲՐՏԻՆԻԱՆՈՒԹԻՒՆԻՆՅԷ :

Երբ ազգերը այն աստիճան հասնին , որ իրենց հանգիստ ապրելուն ինչ պէտք է նէ գիւրութեամբ կատարելու միջոց ունենան , անանկ մարդիկ կ'ելլեն , որ ծրագը ձեռքերնին ամեն բան քննել կ'ուզեն , որ մինչև այն ժամանակ կուրարար կը հնազանդէին :

Ա՛սկըսին դատել ինչ կ'ընեն և ինչ  
 պէտք է ըլլալ, և երբ պզտիկ մոլորու-  
 թիւն մը տեսնեն մեծ դժգոհութիւն-  
 ներ կը հանեն : Պատական իշխանու-  
 թիւնը անյարժար և անվայելուչ բա-  
 ներով ըստը Եւրոպա իր ձեռքին տակ  
 առած էր՝ ներողութիւն ծախվիլը Օ-  
 դոսս նեանց և Տօմինիկեանց մէջ խը-  
 սովութիւն ձգեց : Այլուտեր առաջ  
 Տօմինիկեանց դէմ ելելու հրաւիրվե-  
 ցաւ, աղանդին գլուխ ըլլալու հնարա-  
 ւորութիւն տեսաւ, և Վերամանիայի  
 մէջ պատականութիւնը կործանեց :  
 Իր վարդապետութիւնը ընդարձակե-  
 ցաւ, նոր վարդապետներն ալ կարծիք-  
 նին համեմատեցին. Եւրոպայի մէկ  
 մասը նոր աղանդը ընդունեց : Մինակ  
 վարդապետի մը քարոզութեամբ այս-  
 չափ մեծ բաներ կրնան ըլլալ չը կար-  
 ծըվի : Թադաւորներէն ալ օգնութիւն  
 կար : Թադաւորներէն շատը իրենց  
 կառավարութեան հարստութիւնը ե-  
 կեղեցականաց ձեռքը անցած քաղա-  
 քական ու հոգեւորական կարողութիւ-  
 նը, միշտ մէլըմէլու հետ ձեռնիչ լինու-  
 մէջ կը տեսնային : Իրենց շահին հա-

մար այս ճամբան բռնեցին . և անանկ վարդապետութիւն մը ընդունեցին որ եկեղեցին հանվեցուց , կառավարութիւնը հազվեցուց :

Մինչ այն ժամանակ քաղաքական և կրօնական բաներու մէջ քննութիւնը արգի ետլ էր . կրօնական բաները քննութեան տակ իյնալուն պէս , քաղաքականին քայլ մը կը մնայ . թագաւորները ասկէ աւելի կը վախճային , քան թէ հաւատքը ձեռքէ ելելէն : Այս էր բաժանութեան սխալը , որ էւրոպայի մէջ այնչափ ժամանակ արիւնհեղութիւն եղաւ : Ասանկ բաներուն շատ ետեւէն իյնալ աղէկ բան չէ՝ որչափ աւելի հալածանք ըլլայ այնչափ կը շատնան և յառաջագիմութիւն կըստանան , միայն քաղցրութեամբ առաջը կ'առնուի . Գենեւըն և Պոսուէ այս ճամբով Վաղղիա ազատեցին : Ինքնակալ թագաւոր մը որ ամեն ըրածին մէջ մեծութիւն կը տեսնուի , ժողովուրդին բաժանումը իր միահեծան իշխանութեան միութիւնը պիտի կորսունցունէր , Բրոթէթաններուն մեծ հալածանք ըրաւ և ետքը Նանթի

հրովարտակոյլ ինքզինքնին հալածանքն  
ազատ կարճեցին .

Ինչ եղան Բրոթէսթան անգլերը՝  
ամեն բան մարդկային իմացականու-  
թեան տակ ձգելով , ամենէն խելա-  
հասները Աստուածեան եղան և շա-  
տերն ալ անտարբեր : Մտածութեան  
ազատութիւնը շատ սուղ եղաւ իրենց  
որ այնչափ կը պարճենան . իրենց ճշ-  
մարիտ հաւատքը պահէին՝նէ՛րարոյա-  
կանութիւննին վտանգի մէջ չէին ձգեր ,  
պէտք եղածէն աւելի հաւատարմ , պէտ-  
քի եղածին չափ չը հաւատալէն շատ  
աղէկ է :

Ղիւտերի և Գալլինի ձեռքով Բը-  
րոթէսթանութիւնը օրէնք մը եղաւ՝  
չէ թէ կրօնք՝ և բանութիւնը հաս-  
սատեց , ժողովուրդը սիրոյ և եղբայ-  
րութեան՝ հաւասարութեան և ազա-  
տութեան մէջ պահող մօրը կուրծ-  
քէն քաշեցին առին և ազնուականաց  
ու թագաւորաց ձեռքը յանձնեցին :  
Ուր միութիւն չը կայ՝ հաւասարու-  
թիւն չըլար , ուր հաւասարութիւն  
չը կայ՝ ազատութիւն չըլար . եկեղե-  
ցիին ճշմարտութիւնը մի՛ է , հաւա-

տացեալներն ալ միաբան են : Բրօ-  
թ էսթանութիւնը ամեն մարդու կար-  
ծիրը ճշմարտութիւն է ըսաւ , և ա-  
սով միաբանութիւնը վերցաւ , և հա-  
սարակութիւնը ազատ կերպով մը  
բռնութեան տակ ինկաւ :

Գրաբնութեան , պրնեսպից ,  
գիրութեանց և ճարտարութեան  
Ժայկելը :

Գրաբնութեան և արհեստից  
արդեցութիւնը ամենէն առաջ հաս-  
կըցվեցաւ . ճարտարութիւն կրնանք  
ըսել այն արհեստին , որ մարդուս ա-  
մենէն աւելի պիտանի եղածը կը ճա-  
րէ . բայց մէյ մը ապրելու համար  
պէտք եղածը ձեռք բերելուն պէս ,  
մարդկային իմացականութիւնը իր ի-  
րաւունքը կ'սկըսի պահանջել , և զը-  
ւարձութիւն փնտրուել . նորէնոր փա-  
փաքներ կ'արթընցընէ , զխտութիւ-

նը պէտք եղածին վրայ գիւտեր և հա-  
 շիւններ կ'ընէ, ճարտարութիւնը առաջ  
 կը տանի, վաճառականութեան ըն-  
 դարձակութիւն կուտայ, և մեծ աղէ-  
 կութիւններ կը ծագի: Ընկերական վի-  
 ճակին յառաջագիմութիւնը չորս բա-  
 նով կ'ըլլայ, գրագիտութիւն և ար-  
 հեստ, ճարտարութիւն և դիտու-  
 թիւն: Բայց ընկերական վիճակի մը  
 ամեն բան օգուտ մը ունենալու է,  
 գրագիտութիւնը և արհեստը այն ժա-  
 մանակը օգտաւոր կ'ըլլան, երբ ի-  
 մացականութեան պարզ զբօսանք մը  
 ըլլայը մեկդի ձգեն՝ ընկերութեան կըր-  
 թութիւնը առաջ տանելու նային, և  
 անանկ բաներ գրեն ու շինեն որ ըն-  
 կերութիւնը լուսաւորեն: Այս կող-  
 մէն գիտութիւնը և արհեստը պատ-  
 մութեան հետ յարաբերութիւն ու-  
 նի:

Առջի ուսումնարանները դպրո-  
 ցական կռիւներու կիցնային, իմացա-  
 նութիւնը ընդարձակելու տեղ կը խա-  
 փանէին: Հատ անգամ վտանգաւոր  
 էին, և քաղաքական բաներու մէջ ինչ  
 բան որ իրենց յատկացուէր կ'աւելին՝

Իրենց նպատակին չէր հասցուներ :  
 քայց երբ Խտալիայի մէջ դրապիտու-  
 թիւնը ծաղկեցաւ, և առաջին Ֆրանս-  
 սուայի թագաւորութեան ժամանակը  
 Պաղղիայի մէջ լուսաւորութեան ճա-  
 ռագայթը ծաղկեցաւ, աւսումնարաննե-  
 րը իրենց ազդեցութիւնը կորսընցու-  
 ցին, և այս կորուստէն ճշմարտութիւ-  
 նը շահուեցաւ : Մարդոց սորվեցու-  
 ցին որ իրենք կառավարող սահմանա-  
 դրութեանը վրայ խորհին որ ընկե-  
 րութիւնը օրէ օր ճնշելու վրայ էր :  
 Արքայաաջադիմութիւն եղաւ, իշ-  
 խաններուն կրթեալ ըլլալովք վիճա-  
 կական դրութիւնը քաղցրութիւն ըս-  
 տացեր էր . բայց բոլորովն վերցու-  
 նել պէտք էր, որովհետև այն իշխա-  
 նութենէն կը վարսցըվէր : Պրապիտու-  
 թիւնը քիչ բան չը ակաւ, իշխանու-  
 թիւնը մէկ հոգի ձեռք ձգելու մեծ  
 շարժումն մէջ, մէկ մեծ քայլ մը առ-  
 նել էր, խառնիխաւին վիճակը կարգի  
 դնելը :

Խտալիութեան ժամանակ գիտու-  
 թիւնը և ճարտարութիւնը ճնշուել էր,  
 գրապիտութիւնը ծաղկելուն պէս լու-



տողիկոս ԺԴ : ի դարը պողոտաներ և  
 դաւ , և այնչափ մեծ մարդիկ տեսնելի  
 ցան . իմացականութեան հարստու-  
 թիւնը տարածեցաւ չը կրցու իր սահ-  
 մանին մէջ մնալ , մասնաւոր պակասու-  
 թիւնները ծաղրեցին մեծ առարկնու-  
 թիւնները նկարագրեցին : Քաջութեան  
 օրինակներ ցուցըցին , և բարբը շտկե-  
 ցին . ասոնք բիշ բաներ չէին . անկէ  
 անդին անցնելով անսահման իշխանու-  
 թեան մը դէմ բացէ ՚ի բաց պատե-  
 բազմել ուրիշ տեղ չըլլար՝ միմիայն  
 մարդկային իմացականութեան արդէւք  
 չը դնող կառավարութեան մը տակ  
 կրնայ ըլլալ : Մտածութեան անսահ-  
 ման կերպով գործածվիլը մոլորու-  
 թիւնները հետը կը բերէ , քայց իշխա-  
 նութիւնը բոլոր կարողութեամբը սյս  
 մոլորութիւնները չը կրնար խափանել ,  
 ասոր օրինակները ունինք . միայն ինչ  
 կրնայ ընել , ամեն մէկուն խօսելու ա-  
 զատութիւն կուտայ և իրենց խօսա-  
 ծին երաշխաւոր կ'ընէ , օրովհետեւ ա-  
 դէկը միշտ կը դանդախ և դէչը կը մաք-  
 րէ :

Երբ գրականութիւնը բարոյակա-

նի վրայ գրելու բան չը թողուր կըլը-  
 մընցընէ . աչքը քաղաքականութեան  
 վրայ կը դարձընէ . ամենուն իրաւուն-  
 քը ցուցըցին , կառավարութեանց գե-  
 շութիւնները յայտնեցին , ընկերական  
 վիճակին տեսականը գրեցին , ամեն մե-  
 կուն բնական պարզ օրէնքով վիճակը  
 հասկըցուցին , շատ շանցաւ բոլոր ըն-  
 կերութիւնը կարգադրութիւն խնդ-  
 րեց , տասնըութը դարուն գործքը այս  
 եղաւ : Ասոնց հետեւութիւններէն սա  
 խրատը կրնանք քաղել որ մէկ կառա-  
 վարութիւն մը ընդհանուրին օգտին  
 նայելու է , երբ ամեն մէկը իր օգուտը  
 կը ճանչնայ և կը խնդրէ՝ այն ժամանա-  
 կը ընկերութիւն մը առաջ կ'երթայ :  
 Ամբարտակները ընդդիմադրելը սխա-  
 կալները շատցունել , և անդարմանելի  
 վերքեր հանել է . Պաղղիան ասորա-  
 ղէտալի օրինակը տըված է մեզի :

Մարդկային իմացականութեան  
 յառաջադիմութիւնը վիճակաւոր իշ-  
 խաններուն մասնաւոր բանութիւնները  
 վերցուց ու թափաւորական իշխանու-  
 թեան ուժ տըվաւ : Փիլիսոփայու-  
 թեան ցուցըցած իրաւունքը ետքը

Թագաւորներէն պահանջեցին : Ընդհանուր կարգադրութեան համեմատ ազատութիւն մը՝ ուզեցին , որ ամեն մարդ այն ընդհանուր կարգադրութեան մէջ գտնուի , և իր պիտանութեանը համեմատ տեղ գտնայ , վերջապէս հաւասարութիւն խնդրեցին : Բայց այս հաւասարութիւնը շատ մը անխելքներուն միտքէն անցածը չէ . ամեն մէկուն պիտանութիւնը և արժանաւորութիւնը իր տեղը գտնալ , լերան դլուխը բուսած թուփը ձորը բուսած կաղնիէն վեր չը գնելն է :

Այս էր ընկերութեան պահանջումը : Ասկէ անանկ կառավարութիւն մը ծագեցաւ , որ ազգը իր կողմէն պատգամաւորներ կ'ընտրէր , և տէրութեան գործքերու մէջ անոնցմով կը ներկայանար : Հիմա Եւրոպայի մէջ այս կերպ կառավարութիւնը տարածութիւն գտած է , բայց Անգլիայի մէջ շատոնցվընէ հաստատեալ էր :

Աղբիւն ներկայացուցիչ  
Ժողովոյն հաստատարութեանը :



Գուլիէլմոս աշխարհակալին շորս կողմը անանկ ազգ մը պարունակեր էր՝ որ յաղթեալ և միանգամայն բաջ էր, իր դօրքին մէկ մասը դրօշի տակ կը պահէր . Անգղիացիներն ու Նոսմանեացիները ետևէ ետև ջաղջախեց : Գաղղիայի մէջ եղած անյարմարութիւնը Անգղիայի մէջ չը մտնելու համար վիճակները բաժին բաժին ըրաւ և թագաւորական աթոռոյն կողմանէ անոնց իշխաններ կարգեց, թէ չըլլայ որ Գաղղիայի պէս մեծ մեծ իշխաններ ազատութիւն գտնեն : Մինակ իշխանութիւնը թագաւորին ձեռքն էր ազնուականներն ու ժողովուրդը անոր ծանրակշիռ իշխանութեանը տակ հնազանդեալ էին : Երբ Գաղղիա շատ մը իշխաններով բաժնը-

ված էր , Անգղիա թագաւորական  
 իշխանութեամբ կապուած էր . երբ  
 Գաղղիայի ժողովուրդը իշխանու-  
 թիւնը թագաւորին տալ կ'ուզէր ,  
 Անգղիայի ժողովուրդը մեծերուն հետ  
 կ'ըլար թագաւորական իշխանութիւ-  
 նը տկարացնելու , որովհետեւ ամե-  
 նուն ալ ծանր կուգար : Անգղիայի  
 թագաւորութեան սյսչափ մեծ իշ-  
 խանութիւնը վերջապէս ազգը ազատ  
 ըրաւ , որովհետեւ այս մեծ իշխանու-  
 թիւնը ազգը ինքըզինք պաշտպանելու  
 ըստիպեց , սյսպէս ձեռկըվելով ազգը  
 իրեն կարեւորութիւնը հասկըցաւ իշ-  
 խանները պաշտպանելով իր իրաւուն-  
 քը դաշնադրելու նայեցաւ : Խնդրեց որ  
 օրէնքը ամենուն պաշտպան ըլլայ և  
 մեծերուն անիրաւութեանը դէմ այս  
 զգուշութիւնը ազգը պաշտպանեց քիչ  
 քիչ ազգին վիճակը աղէկցաւ , և մեծ  
 կանոնադրութիւնը Յովհաննէս թա-  
 գաւորէն քաչեցին առին . Անգղիայի  
 ազատութիւնը հաստատուեցաւ :

Եզուարդ առաջինի ժամանակ շա-  
 րունակ պատերազմը դանձը աղքատա-  
 ցուց , այս թագաւորը մինակ միջոց մը

կայ կարծեց, ժողովուրդէն հարկ առնել. որ իր կարողութիւնը չէր բաւեր ուրիշ կերպով հոգայու, այս եղաւ տուրքի քուէարկութեան ըսկիզբը : Եդուարդ երկրորդի ժամանակ աղերսի իրաւունքը տուրքի քուէարկութեան հետ մէկտեղեցաւ, Եդուարդ երրորդի ժամանակ հասարակութիւնը ընդունած օրէնքներէն ուրիշ օրէնք չը ճանչնալը հրատարակեց : Ազատութիւնը բիչ մը ժամանակէ 'ի վեր խափանեալ էր, Եղիսարէթի ժամանակ ըսկըսեց երևիլ, Լոդիւսուդի ժամանակ յաղթող եղաւ : Խեղճ կարոլոս առաջին՝ ազատութեան դէմ պատերազմել ուզեց, բայց ամեն մօրդուն միտքը թագաւորական իշխանութենէ ինչ մընացած կայ նէ անոնք ալ կործանել էր : Հասարակապետական կառավարութիւնը առօրեայ տեղութիւն մը ունեցաւ. վերջապէս Անգղիայի ազգը այս կերպ կառավարութիւն մը ըստացաւ, որ ազգին կողմէն ընտրեալները ամեն բան կը վճռէին : Տպագրութեան ազատութիւնը Անգղիացոց ազատութեան դրոշմ եղաւ 1689 տարվան յե-

դափոխութեան ժամանակ, և հիմակ-  
վան կառավարութեան դրութիւնը  
կատարելագործեց: Այլուածոց, խոր-  
հրդածութեան, և անձնական ազա-  
տութիւնը յարգող կառավարութեան  
մը տակ ազգը առաջ կ'երթար. ամեն  
մարդ ապահովութեամբ վաստըկելու  
ետեէ էր, չէր վախնար. մասնաւորաց  
հանգստութիւնը ընդհանուր հարըս-  
տութիւն մը բերաւ:

Անգղիա ուրիշ տէրութեանց նա-  
խանձը գրգռելու առարկայ մը եղաւ.  
անոր օրինակը ուրիշ ազգերուն լուսա-  
ւորութեանը պատճառ մըն էր: Փիլի-  
սոփաներուն գործքը եկաւ ամենուն փա-  
փաքած ազատութեան ոգւոյն հետ  
միացաւ Բրիտանիա կղզւոյն վիճակը ա-  
մենուն ցանկալը եղաւ.

---

### Իւտալիայի յեղափոխութիւնը:

Փիլիսոփայութեան ոգին որ տաս-  
նըութը դարուն յատկութիւնն էր,  
ընկերութեան նախապաշարմունքն է-

բուն վրայ ազդելէն ետեւ, ընկերու-  
 թեան հիմանցը վրայ դարձաւ. կա-  
 ռաւարու թեան կարողութիւնը որչափ  
 կրնայ անփոփոխի՝ անոր նայեցան. այս  
 քննութեան հետեւութենէն օրինաց  
 ընդհանրութիւնը խնդրովեցաւ, և  
 թագաւորութիւնը պաշարեցաւ. գէշը  
 այն տեղն է որ ազգի մը քաղաքական  
 կրթութիւնը տխուր փորձերով՝ ըլլայ,  
 բացարձակ իշխանութեան տեղը ապե-  
 րասանութիւնը բռնեց. Գաղղիայի  
 յեղափոխութիւնը ազգին ներկայու-  
 թիւնը մինակ ժողովի մը յանձնեց :  
 Արագադրութեան և հաստատութեան  
 երաշխաւոր ըլլող իշխանութեան զու-  
 գակշուութիւնը ինչ ըլլալը չէր գիտեր :  
 Անգղիա իր իրաւունքները պահանջեց  
 որ մինակ թագաւորները յափշտակեր  
 էին : Գաղղիա իր իրաւունքները միան-  
 դամայն թագաւորներէն և ազնուա-  
 կաններէն կը պահանջէր, ազգին կիրքը  
 և ոխը երկու կողմի դէմ կը յարձակէր :  
 Առջի կարգադրութիւնը կործանե-  
 ցաւ, ժողովուրդին կարողութիւնը մե-  
 ծերը խորտակեց, որ անոնց դիմադրե-  
 լը սխակալութիւնը աւելի գրգռեց :



Սասմանադրական ժողովը քան-  
քարաւոր մարդիկ կը պարունակէր ,  
և շատ մը կարգադրիչ ունէր որ աղէկ  
դիտաւորութիւն ունէին և ամեն բա-  
նի խելահաս էին : Գեշը այն տեղն էր  
որ ժողովը հասարակութեան կարո-  
ղութեանը ապաւինեալ էր և անոր  
ազդեցութեանը տակն էր , յեղափո-  
խութիւն մը մտլորութիւնները վեր-  
ցընելու համար կ'ըլլայ . բայց այս իր  
կարողութիւնը շարաշար դործածեց :  
Առողջատելու ճանբայ մը բռնեցին , որ  
իրաւացի դատաստանը կը կորսընցու-  
նէ . [Ժադաւորութիւնը դէշցուցին որ  
իր բնական սահմանին մէջ մնալ պէտք  
էր : Սասմանադրութիւնը տկարացու-  
ցին որ այնչափ դեղեցիկ դրութեանց  
մէջ իշխանութեան զուգակշռութիւնը  
ինչ ըլլալը չը հասկըցան , և հասա-  
րակութեան բացարձակ իշխանութեա-  
նը տակ ինկան : Իրաւունք ունենալով  
սասմանադրական ժողովը կը յանդի-  
մանեն , որ իր անդամները օրէնսդրական  
ժողովէն ընտրելու արգելք եղաւ .  
անոնք միայն իրենց շինածը կրնային  
պաշտպանել , և իռ.ովութեանց առաջ-

բը առնել որ օրէնսդրուածիւնը ետքը  
անոնց դործիրը եղաւ : Միաբանու-  
ածեան ժողովին համար ի՞նչ ըսենք :  
Ասոր ըսկզբունքն ու դործքը յայտնի  
է, և անանկ վսեմ պերճախօսութիւն-  
ներ եղեր է անոր դէմ, որ մեր գրչին  
տակ կարելի է անոնք տկարանան :  
Այս ժողովը թագաւորը գլխատեց,  
աշնուահանները և շատ մը անմեղ  
մարդիկ թուրէ անցուց : Բայց այս  
միաբանութեան ժողովին մէջ կար-  
գադրութեան նշոյլը ըսկըսեց տեսնը-  
վիլ : Սահմանադրութիւնը որ իշխա-  
նութեան զուգակշռութիւնը հաս-  
տատեց, երկու ժողով և դործադիր  
կարողութիւն մը հնարեց, որ ասոնք  
ներկայացուցիչ ժողովոյն ըսկզբուն-  
քին առաջին պտուղն էր : Այս բանե-  
րը քիչ քչեց ուղղիչ ժողովոյն տկա-  
րութեանը հիւպատոսական փառքէն,  
կայսերութեան բարձրանալուն ու իյ-  
նալուն մէջ տեղ, օրէնսդրութիւնը  
անտեսանելի եղաւ և զինուորական  
դրութեան տակը խափանեցաւ :

Յեղափոխութեան ազդեցութիւ-  
նը շատ մեծ եղաւ. հնուու տեղւանք

միշտ պատերազմ ըլլալը ազատութեան  
 ըսիլը զբունքը տարածեց, որ խոհեմու-  
 թեամբ գործածվի նէ շատ գեղեցիկ  
 և աղէկ վախճան կրնայ ունենալ : Յաղ-  
 թութեան փառքին ճառագայթը  
 Գաղղիայի զօրքերուն վրայ կը փայ-  
 լէր . ազատութիւն բառը որ ըսիլը բունք  
 մը եղաւ, անոր վարձը չը վայելած ա-  
 մեն կողմ արձագանդը կը լըսվէր, որ  
 ասոր սերմը Եւրոպայի շատ տեղվանք  
 ամենցաւ . ասորվան օրս խոհեմ ազա-  
 տութիւն մը և սահմանադրութեան  
 կատարելութիւնը ամենուն ուզած բա-  
 նըն է : Շատ մը ազգերուն յարատե-  
 ւութիւնը յաջողութիւն գտաւ . այս  
 ազգերը ժամանակիս օրինակ են որ  
 ընդհանուր բարելաւութեան փափաք  
 և յայս կուտան : Ներկայացուցիչ կա-  
 ռապիտալութեանց ամենն ալ մէկ հիմի  
 վրայ հաստատեալ չեն . այս տարբե-  
 րութիւնը իրենց ծագմանը պարագա-  
 ներէն է : Ընդդիմացի մէջ ազնուակա-  
 նութիւնը ամենէն մեծ կարողութիւն  
 ունի Գաղղիայի մէջ ամեն կարողու-  
 թիւնը թագաւորութեան ձեռքն է . այս  
 նրկու տէրութենէն մէկը յանցաւոր է

կամ երկուքն ալ . թէ որ ներկայացուցիչ կառավարութիւնը զուգահըռնութեան վրայ հիմնեալ է նէ , կարողութիւնը մասնաւորապէս մէկու մը ձեռք ըլլալու չէ . այս երկուքէն զատ չափաւորիչ ժողովի մը յանձնելու է :

### Արեւիքայի յեղափոխութիւնը :

Բարելաւութեան հարկաւորութիւնը երկրագունտին ամեն կողմը տարածեալ է . բայց այս ժամանակիս մէջ Ամերիգա ամենէն աւելի կը հետեի : Շատ մը նոր հասարակապետութիւններ գաւազնեացան և իրենց ազատութիւնը արդարութեան և յաղթութեան վրայ հաստատեցին : Առաջին օրինակը հիւսիսային Ամերիգան տրվաւ : Այս ընդարձակ երկրին վրայ ետեւէ ետեւ գաղթական գալով , հարստութենէ և բազմամարդութենէ ,

Ճշմարիտ կարողութիւն մը հաստատա-  
 վեցաւ միմիայն մայր երկրին հետ ե-  
 ղած վաճառականութենէն, ճարտա-  
 րութեան և յաջողութեան յառաջա-  
 դիմութիւնը աւելի հասկըցվեցաւ .  
 բայց երկար տեղողութիւն չը պիտի  
 ունենայ : Ամերիգայի կառավարու-  
 թիւնը հեռու տեղվանքին պէտք եղած  
 կարգադրութիւնները աղէկ մը չը կըր-  
 նար հասկընալ . իրեն իշխանութեանը  
 տակը ըլտղ գաղթականներուն վա-  
 ճառականութեան սնունդ գտնելը ու  
 դիւրութեամբ ապրելու միջոցները  
 շատցընելը շատ կը տեսնէ . և իր ար-  
 տօնութեանն ու առանձնաշնորհու-  
 թեանը մասնակից չըներ : Բայց այս  
 նոր ընկերութիւնը իր կարողութիւնը  
 կը հասկընայ և հեռու ըլտղ կառա-  
 վարութենէ բիչ կը վախնայ և ինչ ի-  
 քաւունք են որ կը գրկեն զինք , այն  
 ինքնիրեն կ'ըստանայ . և պէտք եղածին  
 ու կլիմային համեմատ օրէնքներ կը  
 հաստատէ , և մայր երկրին հետ եղած  
 կապը կը կարէ կը լըմեցընէ : Այս օ-  
 րինակները հիւսիսային և հարաւային  
 Ամերիգան ցըցուց : Մէկը շատ քա-

մանակէ ՚ի վեր իր անկախութիւնը  
ըստացած է . միւսը ապաքէն անկախ է  
իր սահմանադրութիւնը կատարելա-  
գործելու կ'աշխատի :

Մարդկային իմացականութեան  
ընդհանուր գրգռին վախճանը ուր կա-  
յանալուծն սահման մը տալ անկարե-  
լի է . ընկերական վիճակին ինչ պէտք  
է նէ ճանչցըված է մեծ մեծ աղէկու-  
թիւներ եղեր են , բայց մարդկային  
իմացականութիւնը միշտ ամեն բանին  
գերազանցը կը խնդրէ , և կատարելու-  
թիւնը մարդկային ազգին տրված չէ ,  
միշտ ցանկանալու բան կը գտնուի , որ  
հանրական ժիրութիւնը կը պահպա-  
նէ : Այս ժիրութեան առաջին պտու-  
ղը ճարտարութեան և հաւասարու-  
թեան առաւելութիւնն էր՝ սոլապան  
միայն կրնայ մեզի հասկըցընել , թէ  
մինչ ուր պիտի տանի կատարելու-  
թեան հասնելու եռանդը , որ մարդ-  
կային ազգին յարգն ու պատիւը կ'ա-  
ւելցընէ :









MLC0016036

2013

